ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿՈԹՈՂԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

IX–XIII ԴԱՐԵՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

МЕМОРИАЛЬНЫЕ ПАМЯТНИКИ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

ХАЧКАРЫ IX–XIII ВЕКОВ



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1984

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿՈԹՈՂԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

IX–XIII ԴԱՐԵՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ

A III/5654



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1984

ДУБЛЕТ`

ԳՄԴ 63.4(2Հ)
Հ 247

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության
և ազգագրության ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիրքը հրատարակության է երաշխավորել գրախոս՝
բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ

Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձան-
Հ 247 ները. IX—XIII դդ. խաչքարերը / ՀՍՍՀ ԳԱ, Հնագիտ.
և ազգագր. ին-տ., Պատ. խմբ.՝ Բ. Ն. Առաքելյան.—
Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984.—77 էջ, 67 թ. նկ.

Աշխատության մեջ քննարկված են միջնադարյան Հայաստանի բնորոշ կոթողների՝ խաչքարերի ծագման, զարգացման, հորինվածքային փոփոխությունների հարցերը։ Խաչքարերի վրա փորագրված վիմական արձանագրությունների և քանդակների օգնությամբ լուսաբանվում է այդ հուշարձանների պատմամշակութային և կիրառական նշանակությունը։

Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար։

$\frac{0507000000}{703(02)-84}$ 40—76

ԳՄԴ 63.4(2Հ)
902.6(C43)

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող սույն աշխատությունը Հայաստանի միջնադարյան խաչքարերին նվիրված ուսումնասիրություն է: Նրանում քննարկված են Հայաստանում միջին դարերում լայն տարածում գտած այդ կոթողների ծագման, զարգացման, նշանակության և կիրառության հարցերը:

Թվագրված արձանագրություն կրող խաչքարերի օգնությամբ որոշված է նաև անթվակիր խաչքարերի ժամանակը և հարյուրավոր խաչքարերի ժամանակագրական դասակարգման շնորհիվ բացահայտված է XI—XIII դդ. ընթացքում նրանց կրած փոփոխությունների և զարգացման պատկերը:

Խաչքարերի մեծ մասի վրա փորագրված արձանագրությունները խոշոր կարևորություն են ներկայացնում միջնադարյան Հայաստանի հասարակական-տնտեսական, քաղաքական և մշակութային պատմության տարբեր հարցերի լուսաբանության համար:

Այդ արձանագրությունների և քանդակների շնորհիվ պարզվում է, որ խաչքարերը եղել են ոչ միայն կրոնապաշտամունքային կոթողներ, այլև ունեցել են շատ ավելի լայն կիրառություն և կանգնեցվել են բազմազան նշանակությամբ և առիթներով: Խաչքարերը հայ ժողովրդի միջնադարյան մշակույթի բազմակողմանի և մեծարժեք հուշարձաններ են:

Աշխատությունը հրատարակության է պատրաստվել Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների պլանով:

Բնագիրը և նկարների ալբոմը կազմել է Ա. Ն. Ծահինյանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի միջնադարյան մշակույթի պատմության մեջ բացառիկ տեղ է գրավում ճարտարապետությունը, որի հետ սերտորեն կապված է եղել քանդակագործությունը, մասնավորապես՝ կոթողային բնույթի հուշարձանների կառուցումը։

Հայաստանում հանդիպում են կոթողների տարբեր տեսակներ ու ձևեր, որոնց թվում, սակայն, ամենատարածվածն ու տիպականը խաչքարերն են։ Ավելի քան մեկ հազարամյակ այդ հուշարձանները հանդիսացել են մասսայական ու սիրված կոթողներ, կերտող վարպետները դրանցում ներդրել են հայկական մշակույթի յուրահատուկ գծերը։ Հայկական խաչքարերի ընդհանուր թիվը տասնյակ հազարների է հասնում։

IV—VII դդ. Հայաստանի համար առավել բնորոշ են խորանարդաձև պատվանդանների վրա դրվող քառանիստ, պատկերազարդ, սյունաձև կոթողները և թևավոր խաչարձանները։ VIII—IX դդ. Հայաստանում մշակվում է կոթողային հուշարձանի նոր ձև՝ խաչքարը, զարդարված բուսական ու երկրաչափական ճոխ քանդակներով։ Ավելի ուշ, XI դ. սկսած, խաչքարերի վրա բուսական ու երկրաչափական մոտիվների կողքին երևան են գալիս մարդկային պատկերներ և կենցաղային ու կրոնական բնույթի քանդակային ամբողջական տեսարաններ։ Միևնույն ժամանակ բուսական ու երկրաչափական քանդակային դրվագներն այնքան են ոճավորվում, մանրանում, նրբանում և շքեղանում, որ դառնում են ասեղնագործ ժանյակների նրբության հասնող զարդաձևեր։

Խաչքարային կոթողաշինությունը լայն տարածում է գտել պատմական Հայաստանի բոլոր նահանգներում և դարձել է քանդակագործական արվեստի մի բնագավառ, որտեղ հազարավոր վարպետներ փորձել են իրենց տաղանդն ու հմտությունը[1]*։*

Կարելի է ասել, որ այլազգի շատ գիտնականներ հայ արվեստին հաճախ ծանոթացել են մեր ճարտարապետության, մանրանկարչության և խաչքարերի միջոցով։ Եվ բնական է, որ մեր նյութական մշակույթի այս ծավալուն բնագավառը չէր կարող վրիպել համաշխարհային մասնագետների և հայկական հուշարձանների պատմությունն ուսումնասիրողների ուշադրությունից։

---

[1] Խաչքարանման կոթողներ, սակավ թվով, երբեմն հանդիպում են նաև այլ ժողովուրդների մոտ։ Այս կապակցությամբ տե՛ս *Stewart Cruden*, F. S. A., A. R. J. B A. The Early Christian and Pictish monuments of Skotland Edinburgh, 1964, *Henry Francoise*, Irish High Crosses, Dublin, 1964, *Maire and Liamde Paor*, Early Christian reland, London, 1964, *Э. В. Кильчевская*, От изобразительности к орнаменту, Москва, 1968, „Khatchkar, Documenti di architettura Armena", Milano, 1969, *Sefik Bešlagic*, Stecci i njihova umjetnost, Sarajevo, 1971.

Վերոհիշյալ իռլանդական և շոտլանդական խաչերը (High Gross), քառակող կոթողներն ու խաչքարանման (հատկապես շոտլանդական) հուշարձանները թեկուզ արտաքնապես՝ անջատ նմանություններ ունեն վաղքրիստոնեական հայկական համապատասխան հուշարձանների հետ (նկ. 204), բայց դրանք գերազանցապես տեղային յուրահատուկ բնույթ ունեն։ Ինչ վերաբերում է Բոսնիայում, Հերցեգովինայում տարածված թևավոր խաչերին ու տապանաքարերին, որոնք «բոգոմիլյան» անունն են ստացել, ապա պետք է ասել, որ դրանք, Շեֆիկ Բեշլագիչի կարծիքով, գերազանցապես տեղական բնույթի հուշարձաններ են և Հարավսլավիայում տարածված են եղել XIII—XVI դդ.։ Հայ-իռլանդական կոթողային հուշարձանների համանմանության որոշ հարցերով այժմ Դուբլինում զբաղվում է իռլանդուհի Է. Վիլյամսը



I (1). Սիսիան. մենհիրներ

[illegible]

Հայկական յուրահատուկ կոթողային հուշարձանները՝ խաչքարերը, ուշադրության արժանի են ոչ միայն իրենց արվեստով, այլև կոնկրետ նպատակային և կիրառական բազմապիսի նշանակությամբ։ Այդ իմաստով խաչքարերը կարևոր դեր են խաղացել միջնադարյան Հայաստանի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի շատ բնագավառներում։

Հաճախ խաչքարերը և նրանց վրա փորագրված հակիրճ կամ ընդարձակ արձանագրությունները ոչ միայն սոսկ հիշատակարաններ են, այլև հողերի ու աշխարհիկ ֆեոդալների յուրահատուկ հրովարտակներ, արտոնագրեր, կալվածագրեր, հարկային փաստաթղթեր, գյուղերի ու բնակավայրերի հիմնադրման, ռազմական գործողությունների վերաբերող հուշարձաններ, սահմանաքարեր, պատմաքաղաքական անցքերն անդրադարձնող ամենատարբեր աղբյուրներ՝ պատմության քարե մատյաններ։ Միաժամանակ դրանք արվեստի հուշարձաններ են, մահարձանային կոթողներ։ Այս ամենի շնորհիվ Հայաստանի միջնադարյան խաչքարերի ուսումնասիրությունն ստանում է բազմակողմանի, այն է՝ պատմագիտական, աղբյուրագիտական, սոցիալ-տնտեսական, արվեստագիտական, գաղափարախոսական, ինչպես նաև ազգագրական ու կենցաղային նշանակություն։

Հայ ժողովրդի հեթանոսական շրջանի կոթողաշինության պատմության վերաբերյալ մեր այժմյան գիտելիքները համեմատաբար սահմանափակ են ու թերի։ Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձաններից առավել ուշադրության են արժանացել IV—VII դդ. քառակող կոթողները, որոնց անդրադարձել են Ն. Մառը, Յ. Ստրժիգովսկին, Թ. Թորամանյանը, Գ. Լեոնյանը, ավելի հանգամանորեն՝ Գ. Հովսեփյանն[2] ու Բ. Առաքելյանը[3]։

Որքան էլ տարօրինակ է, նույնը չի կարելի ասել խաչքարերի մասին։ Ճիշտ է, խաչքարերի առանձին նմուշներ երբեմն հիշատակվել, քննարկվել ու արժեքավորվել են Ն. Մառի, Հ. Օրբելու, Թ. Թորամանյանի, Գ. Հովսեփյանի, Գ. Լեոնյանի, Յու. Բալտրուշայտիսի, Ն. Տոկարսկու, Բ. Առաքելյանի, Կ. Ղաֆադարյանի, Ստ. Մնացականյանի և այլոց աշխատություններում, բայց խաչքարերը հիշյալ գիտնականների հատուկ ուսումնասիրության առարկա չեն եղել։ 1960—1970 թթ. լույս տեսան հոդվածներ, որոնք ամբողջովին նվիրված էին այդ կարևոր հարցի սիստեմատիկ ուսումնասիրությանը[4]։

Այս մենագրության համար ուղենիշ է դարձել հանգուցյալ հնագետ-վիմագրագետ Ս. Գ. Բարխուդարյանի՝ միջնադարյան հայ ճարտարապետներին ու քարգործ վարպետներին նվիրված թեկնածուական դիսերտացիայի այն հատվածը, որը վերաբերում է խաչքարերին։

Վերջին ժամանակներս խաչքարերը գրավեցին նաև հայ ճարտարապետության պատմությամբ զբաղվող իտալացի ճարտարապետների ուշադրությունը։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի ներկայացրած բնագրով և նկարներով 1969 թ. Միլանում հրատարակվեց հայկական խաչքարերի ալբոմ, իտալերեն և անգլերեն լեզուներով։ 1973 թ. Փարիզում հրատարակվեց հայկական խաչքարերին նվիրված մի այլ ընդարձակ ալբոմ՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով։

Ներկա աշխատությունը խաչքարերին նվիրված պատմահնագիտական ուսումնասիրություն է. նրանց զարգաձևերին անդրադարձել ենք գերազանցապես դարերի ընթացքում կրած փոփոխությունները և ժամանակագրական օրինաչափությունները պարզելու նպատակով, խաչքարերի արվեստագիտական հատուկ ուսումնասիրությունը թողնելով մասնագետներին։

Աշխատությունում օգտագործված են նաև հայ մատենագրության էջերում պահպանված սակավաթիվ վկայությունները, գլխավորապես՝ խաչքարերի վիմագրական հարուստ տվյալները, որոնք էլ կազմել են աշխատության բուն առանցքը։ Օգտագործել ենք նաև հարցին վերաբերող գիտական գրականությունը։

---

[2] Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Գ, Նյու-Յորք, 1944։

[3] Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV—VII դդ., Երևան, 1949։

[4] *А. Л. Якобсон*, Об армянских хачкарах (Историко-художественные заметки). «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 1, էջ 215—224։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՆԱԳՈՒՅՆ ԽԱՉՔԱՐԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՄԻՆՉԽԱՉՔԱՐԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից եղել են գերազանցապես պաշտամունքային նշանակություն ունեցող կոթողային հուշարձաններ (մենհիրներ, վիշապներ, ուրարտական կոթողներ) (նկ. 1—5)։

Արտաշեսյան թագավորության ժամանակահատվածում լայն տարածում են ստանում «Արտաշեսյան սահմանաքարեր» կոչված կոթողները, բաղկացած ցածր խորանարդաձև պատվանդանից և նրա վրա ամրացված, վերևում եռանկյուն, ոչ բարձր, տափակ քարերից, որոնց մասին հաղորդում է Մովսես Խորենացին։ Նման կոթողներ հայտնաբերվել են Սևանի ավազանում, Զանգեզուրում, Իջևանի շրջանում, Սպիտակում և այլուր։ Արտաշեսյան կոթողների վրա փորագրված են արամեական արձանագրություններ, որոնք մեծ մասամբ ունեն համանման բովանդակություն (նկ. 7)։

Վաղ քրիստոնեական կոթողային հուշարձանների ամենատարածված տիպը Հայաստանում քառակող ու պատկերազարդ կոթողն է[1], որը, հավանաբար, ծագում է մինչքրիստոնեական շրջանի հուշարձաններից (նկ. 1—7 և 8—23, 34—35)։ Այդ են վկայում նման կոթողների վրա երբեմն հանդիպող հեթանոսական շրջանի մի շարք զարդամոտիվներ։ Դրանցից մեկը Գառնահովիտի IV—V դդ. կոթողի այն դրվագն է, որտեղ պատկերված է տերևաքանդակների միջև կանգնած մի ֆիգուր (հավանաբար՝ կին), որը զույգ ձեռքով գլխից վեր բռնել է քառանկյուն շրջանակ, մեջը պատկերված մի զույգ ծաղկամոտիվ (նկ. 9)։ Գ. Հովսեփյանը այն եզակի նմուշ է համարում։ Նա գրում է. «Նմանը չէ պատահած ոչ մի տեղ»[2]։ Հիշյալ դրվագը, որ հանդիպում է նաև հեթիթական արվեստում և, մեր կարծիքով, պատկերում է գարնան ավետման տեսարանը[3], ըստ Գ. Հովսեփյանի, գալիս է, գուցե և, հեթանոսական շրջանից[4]։ Ախուրյանի շրջանի մեկ այլ հնագույն հայկական կոթողի զարդագրության (նկ. 8) մոտավոր նմանակն ունենք դարձյալ հեթիթական արվեստում[5]։ Այս դարաշրջանում ուշադրավ են աստիճանավոր պատվանդանների վրա վեր խոյացող հուշասյուն կոթողները, որոնց վրա դրված խոյակների հատուկ փոսիկների մեջ ագուցվել են քառաշեն, թևավոր խաչեր (Անգեղակոթ, Դվին, Ավան, Ջրվեժ, Օշական, Ուղարի ակունք և այլն) (նկ. 13—16, 20—30)։ V—VI դդ. մոտ 6,5 մետր բարձրության նման մի կոթող 1958 թ. հայտնաբերվեց Ջրվեժում (նկ. 25)։ Այս հուշասյուն կոթողների պատկերավոր նկարագրությունն արել է V դարի պատմիչ Ագաթանգեղոսը։

Գիտական գրականության մեջ թեև հակասական կարծիքներ կան պատկերազարդ, քառակող և հուշասյուն կոթողների ժամանակագրության մասին, բայց ընդունելի պետք է համարել Գ. Հովսեփյանի ու Բ. Առաքելյանի այն եզրակացությունները, որ այդ հուշարձանները կերտվել են բացառապես IV—VII դարերում։ Սակայն միակողմանի է այդ հուշարձանների նպատակային նշանակության վերաբերյալ գիտնականների այն ենթադրությունը, թե դրանք եղել են առավելապես մահարձանային կոթողներ։

---

[1] Գ. Հովսեփյան, Նյութեր..., պրակ Գ, էջ 116։

[2] Նույն տեղում։

[3] *E. Akurgal*, The Art of the Hitties, New-York, 1962, p. 78, photo 115.

[4] Գ. Հովսեփյան, Նյութեր..., պրակ Գ, էջ 54։

[5] *E. Akur ,al*, նշվ. աշխ., էջ 141, նկ. 140։

Քառակող, պատկերազարդ և հուշասյուն կոթողների ժամանակագրության և հատկապես դրանց կիրառության մասին հակիրճ, բայց արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Ագաթանգեղոսը (V դ.), Ղևոնդ վարդապետը (VIII դ.), Թովմա Արծրունին (X դ.), Ստեփանոս Տարոնացին (Ասողիկ X—XI դդ.)։ Այդ վկայակոչումները ելակետային նշանակություն ունեն ոչ միայն հայկական վաղ քրիստոնեական, այլև քրիստոնյա այլ ժողովուրդների համանման հուշարձանների ուսումնասիրության համար։

Ագաթանգեղոսը խոսելով Հայաստանում III դ. վերջում և IV դ. սկզբում քրիստոնեության ընդունման հանգամանքների մասին, նկարագրում է հուշասյուն կոթողները, տալիս դրանց ճշգրիտ ժամանակագրությունը, մասամբ էլ ֆունկցիոնալ նշանակությունը՝ որպես պաշտամունքային կոթողներ։ «Եւ տեսանէի ի մէջ քաղաքին, մօտ յապարանս արքունի, խարսխաձեւ ճախարականաձեւ խարիսխ ոսկի, մեծութեամբ իբրեւ զմեծ մի բլուր, եւ ի վերայ նորա սիւն մի հրեղէն բարձր մինչեւ յամպս, եւ ի վերայ նորա թակաղաղ մի ամպեայ, եւ խաչն լուսոյ ի վերայ նորա»[6]։ «Շինեսջի՛ք զտաճար անուանն աստուծոյ եւ տեղւոյն որ ցուցաւ քեզ, ուր սիւն հրեղէն ունէր զոսկի խարիսխն, եւ զվկայարանս սրբոցն ի տեղիսն՝ ուր զենան ինքեանք ի կենդանութիւն աստուածութեան յուսոյն»[7]։

Հեղինակի այս վկայությունները կարող են կոչված հանդիսանալ նաև այլ ժողովուրդների վաղ քրիստոնեական կոթողների թե՛ ժամանակագրության և թե՛ մանավանդ դրանց կիրառական իմաստի բացահայտման առումով։

Ճարտարապետ Թորոս Թորամանյանը որոշ վերապահությամբ մահարձան է համարում Օձունում մինչև այժմ էլ կանգուն մնացած և ավանդաբար Մորիկ կայսրին կամ նրա մորը վերագրվող VII դ. հուշասյուն կոթողը, ասելով, որ «...այն շիրիմ է, եթե շիրիմ լինելը չհաստատվի, այնուամենայնիվ հերքելն էլ դժվար է»[8] (նկ. 23)։

Մատենագրական վկայությունները և վերջերս Գեղամա լեռներում հայտնաբերված նյութական մշակույթի հուշարձանները, ինչպես կտեսնենք ստորև, չեն խոսում նման կոթողների սոսկ մահարձան լինելու տեսակետի օգտին։

VIII դ. առաջին քառորդում արաբները խորտակել են քառակող պատկերազարդ և հուշասյուն կոթողներից շատերը, որի հետևանքով այդ շրջանի քիչ կոթողներ են մեզ հասել, մի մասն էլ՝ ջարդոտված կամ էլ վերատաշված (Դսեղ, Կոզբ)։ Հավանաբար, նույն այս ժամանակներում են վերատաշված Դսեղի VII դ. կոթողի արևմտյան երեսի պատկերաքանդակները, որոնց հետքերը հազիվ են նկատվում տեղում (նկ. 30)։

Մեր պատմիչները Հայաստանում արաբների կողմից քառակող-պատկերազարդ և հուշասյուն կոթողների խորտակման փաստը արձանագրելիս արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև դրանց զարդարվեստի ու կանգնեցման հանգամանքների վերաբերյալ։ Այսպես, օրինակ՝ այդ ժամանակաշրջանի դեպքերին ականատես Ղևոնդ պատմիչը (որից ամենայն հավանականությամբ տեղեկություններ են քաղել Թովմա Արծրունին[9] և Ստեփանոս Տարոնացին[10]), նկարագրելով Եզիտ խալիֆի (720—725 թթ.)՝ Հայաստանում կատարած գազանությունները, գրում է, որ նա «յաճեալ յայսոյն պղծութեան բռնութենէ՝ տայր հրաման փշրել եւ խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան տեառն մերոյ եւ փրկչին եւ նորին աշակերտացն։ Խորտակէր եւ զնշան տէրունեան խաչին Քրիստոսի, որ ուրեք ուրեք կանգնեալ էին յանուն (նորա) և ի պատճառս երկրպագութեան համագոյ երրորդութեան...»[11]։

---

[6] Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 375։

[7] Նույն տեղում, էջ 384։ Պատմիչի այս տեղեկություններից կարելի է ենթադրել, որ նման կոթողներ կանգնեցվել են Հայաստանում քրիստոնեության հենց սկզբում, IV դարի տաճարների շինարարություններից էլ առաջ, այսինքն՝ III դ. վերջում և IV դ. սկզբին, «Զի բժշկեցին հարուածեալքն...»։

[8] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 54, նկ. 12։

[9] Թովմայի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 105։

[10] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, Բ տպ., ՍՊբ., 1885, էջ 127։

[11] Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 99—100։

Պատմիչի այս վկայությունից պարզվում է, որ արաբները խորտակում էին քառակող պատկերազարդ այն կոթողները, որոնց վրա քանդակված էին Քրիստոսի, նրա աշակերտների ու սրբերի պատկերները։ Նրանք խորտակում էին նաև «զնշան տէրունեան խաչին Քրիստոսի», որոնք ամենայն հավանականությամբ վերաբերում են երկրպագության համար տեղ-տեղ կանգնեցված խաչկրող հուշասյուն կոթողներին։ Կոթողների նկատմամբ արաբների անհաշտ վերաբերմունքը պայմանավորված էր մուսուլմանական կրոնի այն դրույթով, որը խստիվ արգելում էր ոչ միայն մարդկային, այլև ամեն մի կենդանի էակի պատկերում[12]։

Ղևոնդ պատմիչի մեկ այլ վկայության մեջ ավելի պարզ ու որոշակի նշված են հուշասյուն կոթողների կանգնեցման շարժառիթները և դրանց խորտակման փաստը։ Նա գրում է, որ արաբները «...խոկացին կործանել և շփոթել զարդութիւն եկեղեցեաց Քրիստոսի. խորտակէին և զնմանութիւն պայծառացեալ խաչին Քրիստոսի, զոր ապաւէն և հովանի յելս և ի մուտս կանգնեալ ի պատճառս երկրպագութեան համագոյ Երրորդութեան. և հրկիզութեամբ բառնային ի միջոյ»[13]։ Գ. Հովսեփյանը և Բ. Առաքելյանը իրավացիորեն գրում են, որ Ղևոնդի խոսքերը վերաբերում են տաճարներից դուրս դրված և առանձին կանգնած քառակող պատկերազարդ կոթողներին և սյունանման հուշարձաններին[14]։ Այս խնդրի պարզաբանման համար ամենաարժեքավոր տեղեկությունն այն է, որ այդ քառակող, պատկերազարդ կոթողներն ու հուշարձանները, ըստ պատմիչի, որպես «ապաւէն և հովանի» դրված են եղել «յելս և ի մուտս», այսինքն՝ քաղաքների, գյուղերի ճանապարհների, հրապարակների ելք ու մուտքերում և երկրպագվել են «սուրբ Երրորդության» անունով[15]։ Այդ կոթողներին վերագրվող հովանավորող և պաշտպանիչ նշանակությունը ակնհայտ է, այդպիսի դեր հետագայում վերագրվում էր «Ամենափրկիչ» խաչքարերին։

Ղևոնդ պատմիչի այս հակիրճ վկայությունները հաստատվեցին վերջերս, Գեղամա լեռներում գտնված VII դ. պատկանող երկու հուշասյուն կոթողների օրինակով։ Դրանցից մեկը, որի արձանագրության մեջ խոսվում է գյուղի նվիրատվության մասին, կոչվել է ս. Երրորդության անունով, իսկ երկրորդը կանգնեցվել է այդ տարածքի սահմաններում և դարձյալ կրում է ս. Երրորդության անունը։ Գեղամա լեռների կոթողները ցարդ հայագիտությանը հայտնի՝ VII դ. արձանագիր միակ կոթողային հուշարձաններն են, որ ուղղակիորեն ցույց են տալիս հուշասյուն կոթողների տարբեր նպատակային նշանակությունը[16]։ Այսպիսով, քառակող, պատկերազարդ և հուշասյուն կոթողներն ունեցել են նպատակային բազմապիսի նշանակություն։

IX դ. վերջում (895 թ.) Տաթևում կանգնեցվել է նոր տիպի սյունանման կոթողային մի հուշարձան, որը բարեբախտաբար մեզ հասել է ամբողջական վիճակում։ Դա միջնադարյան հայկական կոթողաշինության մեջ եզակի նմուշ է այն իմաստով, որ եղել է շարժական գավազանսյուն և մի փոքր հրելիս շարժվել է՝ հավանաբար կոթողի տակ դրված ինչ-որ սարքի շնորհիվ[17] (նկ. 33)։ Բ. Առաքելյանն այս կոթողն իրավացիորեն համարում է հուշասյուն՝ ու մահարձանի իմաստով[18]։ Ուշագրավն այստեղ այն է, որ այդ կոթողի վրա դրված է ոչ թե թևավոր խաչ, այլ խաչքար. թեև վերջինս կարող է ավելի ուշ շրջանի գործ հանդիսանալ, որովհետև նրա խաչաքանդակը չի համապատասխանում դարի ոճին։

Նույն դարի մի կոթող էլ մինչև 1931 թ. Զանգեզուրի հայտնի երկրաշարժը պահպանված է եղել Որոտնավանքում (Վաղուդի գյուղի սահմաններում, Սիսիանի շրջան)[19]։

---

[12] *A. S. Wensinck*, Shorter Encyclopaedia of Islam London, 1953, p. 554—555.

[13] Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց Պատմութիւն, էջ 152։

[14] Գ. Հովսեփյան, Նյութեր..., պրակ Գ, էջ 127, Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները..., էջ 112։

[15] Նման մի վկայություն էլ ունի Ագաթանգեղոսը, որը խոսելով Գրիգոր Լուսավորչի՝ Հայաստանում քրիստոնեության տարածելու մասին, գրում է. «Նոյնպէս և յելս և ի մուտս ճանապարհաց և փողոցս և ի հրապարակս և ի ճանապարհամիջոցս պահ և պահեստ երկրպագելոյ յամենեցունց զնոյն նշան կանգնէր» («Պատմութիւն Հայոց», էջ 297)։

[16] Գեղամա լեռների հիշյալ հուշասյուն-կոթողների մասին տե՛ս «VII դարի կոթողներ Գեղամա լեռներում», «Էջմիածին», 1974, № 7—8, էջ 75—80։

[17] 1947 թ. Հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից կոթողն ամրացված է և այլևս չի շարժվում (տե՛ս *В. М. Арутюнян и С. А. Сафарян*, Памятники армянского зодчества, Москва, 1951, էջ 491)։

[18] Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները..., էջ 35։

[19] Լուսանկարը տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 218։



II (30). Դսեղ. կոթող, VII դ.

[illegible]

իսկ խաչքարերը եզերող և ճոխ քանդակներով զարդարված լայն շրջանակների համար բոլորովին տեղ չէր մնում։

Այս բոլորով հանդերձ, դրանց կառուցողական ընդհանուր ձևը (պատվանդան, վրան՝ կոթող), երբեմն էլ՝ կոթողների վրա հանդիպող խաղողաքանդակներով զարդարված խաչաքանդակները կարող էին ելակետային նշանակություն ունենալ խաչքարերի կերտման ընդհանուր ըմբռնումի տեսակետից։

Իր հերթին, հնագույն խաչքարերի վրա հանդիպող և բուսական ոճավորված զարդաձևերով քանդակների ընդհանուր, արդեն մշակված կերպարը Հայաստանում և այլուր երևան է գալիս բազիլիկ տաճարների IV—V դդ. վաղ հուշարձանների վրա (Քասախ, Աշնա, Ոսկեպար և այլն), բայց դրանք դեռևս չէին դարձել ինքնուրույն կոթողային հուշարձաններ՝ խաչքարեր[27]։ Այդպիսի կոթողների նախատիպը կարելի է համարել Հայաստանում IV—VII դդ. տարածված և Դվինում, Ավանում, Զովունում, Գառնիում, Գեղամա լեռներում ու այլ վայրերում հանդիպող հուշասյուն կոթողների վրա ագուցված ազատ թևերով խաչերը, որոնք իրենց համաչափություններով (մոտավորապես երկուսը մեկի հարաբերությամբ) և բուսական նույնանման քանդակներով իրոք որ համապատասխանում են խաչքարային հուշարձանների պահանջներին։ Բայց, որպեսզի նորաստեղծ խաչքարը ազատ թևերով խաչերի նման դյուրաբեկ չլիներ, անհրաժեշտ էր այն փոխադրել կայուն սալ քարին և կանգնեցնել խորանարդաձև պատվանդանի վրա. այսպիսով կստացվեր ժամանակի պահանջներին համապատասխան կոթող-հուշարձան։ Վերջինիս առանձնահատկությունները հիմնականում հետևյալներն էին.

1. Նորաձև խաչքարն ավելի հարմար էր իր վրա կրելու խաչի համաչափ պատկերն ու երբեմն գրեթե պարտադիր նրան հարակից զարդաքանդակները։

2. Անհամեմատ պարզ էր և ոչ մեծածախս։

3. Մշակվում էր միայն մեկ ճակատով, հարմար էր ճոխ ու բազմազան քանդակներ անելու համար, իսկ զարդաքանդակները կարող էին դիտվել ու ընկալվել միանգամից, մինչդեռ քառակող կոթողը մշակվում էր չորս կողմերից և այդ իմաստով խիստ անհարմար էր։

4. Կայուն էր ու միակուռ՝ թևավոր խաչերի համեմատությամբ։

5. Նրա վրա (թե կունքին, թե երեսին) հնարավոր էր փորագրել ընդարձակ արձանագրություններ։

6. Նորաստեղծ խաչքարային կոթողը կարելի էր ոչ միայն կանգնեցնել պատվանդանի վրա, այլև ագուցել տաճարների պատերի մեջ, կողք-կողքի կանգնեցնելով ստանալ խաչքարերի խմբական մի նոր հորինվածք և կամ սրբատաշ քարերով շրջափակելով այն, կերտել խաչքարային կոթողի նոր տիպ՝ այսպես կոչված «որմնափակ խաչքար», որպիսին հնարավոր չէր քառանիստ կոթողի դեպքում։

Հարկ է նշել մի կարևոր հանգամանք ևս, որը փոքր դեր չխաղաց Հայաստանում խաչքարային նորաստեղծ կոթողների առաջացման և զարգացման գործում. միջնադարյան Հայաստանում ավելի շատ խաչն էին պաշտում, քան սրբապատկերները։ «Ես,—գրում է Անանիա Սանահնեցին,— զՔրիստոս կենդանի պատկեր միշտ ի խաչին խոստովանիմ», մինչդեռ հույները և վրացիք՝ «առաւել քան զխաչ և զեկեղեցի՝ պատուեն և պաշտեն զպատկերս»[28]։ Մխիթար Գոշը (XII—XIII դդ.) նշում է, որ «Յոյնք և վիրք զպատկերագրութիւն առաւել պատուեն և Հայք զխաչս»[29]։

Այսպիսով, Հայաստանում, IX դ., երբ վերականգնված էր հայկական պետականությունը, տնտեսական ու քաղաքական նպաստավոր պայմաններում ծնունդ առավ և արագորեն սկսեց զարգանալ խաչքարային նորաստեղծ կոթողաշինությունը, որի սկիզբները գալիս են դեռևս IV դ.։

3. IX—X ԴԴ. ԹՎԱԳՐՎԱԾ ԽԱՉՔԱՐԵՐ

Մեզ հասած թվագրված հնագույն խաչքարերը IX դարից են։ Դրանցից առայժմ հայտնի են ութը[30], սակայն շատ ավելի մեծ է X դ. թվագրված խաչքարերի թիվը։ Խաչքարերի ծագումը չի կարելի IX դ. վերագրել։ Պետք է ենթադրել, որ խաչքարերն սկսեցին առաջանալ VII դ. առաջին կեսում, իսկ երբ VIII դարի առաջին քառորդում արաբներն արգելեցին մարդկային պատկերներ քանդակելը և սկսեցին խորտակել նման պատկերներ կրող քառակող կոթողները՝ խաչքարաշինությունը արգելքի չհանդիպեց։

---

[27] *Բացառված չէ, որ խաչքարատիպ առանձին կոթողներ կանգնեցված լինեին Հայաստանում նախքան արաբական արշավանքները, VII դ. սկզբներին։ Հնագույն խաչքարերի նախատիպերից մեկը կարող է լինել VII դ. արձանագիր կոթողը, որի մասին խոսք կլինի ստորև։*

[28] *Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 581։ Տե՛ս նաև Ստ. Տարոնեցու նշվ. աշխ., էջ 227—228։*

[29] *«Արարատ», Թիֆլիս, 1901, էջ 562։*

[30] *IX դ. թվագրված խաչքարերն են՝ Գառնի՝ 879 թ., Մաստր՝ 881 թ., Ն. Թալին՝ 882 թ., Կեչառ՝ 886, Տաթև՝ 895—906 թթ։ Հացառատում հայտնի է 898 թ. արձանագիր IX դ. (853 և 866 թթ.) երկու թվակիր խաչքարեր էլ կան Լեռնային Ղարաբաղի Վաղուհաս և Թալասար գյուղերի տարածքում։*

Նորաստեղծ խաչքարերը VIII—IX դդ. հաջողությամբ փոխարինեցին նախկին քառանիստ, հուշասյուն կոթողներին ու թևավոր խաչերին։ Արագորեն տարածվելով, նրանք IX դ. վերջերին արդեն ասպարեզից դուրս մղեցին իրենց նախորդներին և դարձան հիշատակարան-հուշարձանների տիրապետող ձև։ IX դարից արդեն առկա է խաչքարի ավարտուն կերպարը՝ նրան բնորոշ զարդամոտիվներով։

Հնագույն խաչքարերը հիմնականում երկարավուն (երկուսը մեկի հարաբերությամբ), ուղղանկյուն և կամարաձև գագաթներով քարե սալեր են, որոնք իրենց ներքևի մասի ելուստներով (պոչուկ) ագուցվում են խորանարդաձև պատվանդանների վրա։ Իսկ երբեմն էլ առանց պատվանդանի կանգնեցվում են ուղղակի գետնի մեջ։ Խաչքարերի արևմտյան երեսին սովորաբար փորագրված է խաչի պատկերը, որի վերևի թևից իջնում են խաղողի, նռան և այլ զարդաձևեր, իսկ ներքևի թևի երկու կողմերից բարձրանում են արմավենիկի տերևաքանդակներ։ Խաչաքանդակներն ունենում են մեկական կլոր գնդիկներով վերջավորվող երկճյուղ թևեր։ Խաչի ներքևում սովորաբար պատկերվում են կա՛մ աստիճանաձև հիմքեր, կա՛մ նռան ու վարդյակաձև զարդամոտիվներ։ Պատվիրատուի և վարպետի ճաշակի համաձայն խաչքարերի այս ձևը երբեմն թեթևակի փոփոխության է ենթարկվում, բայց նրա ընդհանուր հորինվածքը մնում է գրեթե անփոփոխ։ Հնագույն խաչքարերին հատուկ են նաև խաչի թևերի ծայրերին և հատման կետերում արված գնդիկները։ Նայած թե ովքեր էին կանգնեցնում դրանք և ինչ նպատակներով՝ խաչքարերը լինում էին մեծ կամ փոքր, պարզ կամ շքեղ, արձանագիր և ոչ արձանագիր։

Խաչքարերի հնագույն նմուշների հանդիպում ենք Հայաստանի գրեթե բոլոր վայրերում ու շրջաններում, բայց որտեղ էլ գտնվելիս լինեն դրանք՝ դրսևորում են խաչաքանդակների, զարդաձևերի ու բավականին դուսպ հորինվածքի ընդհանրություններ և որոշակի օրինաչափություններ։

Եթե IX դ. մեզ հասել է թվագրված ութ խաչքար, ապա X դ.՝ քառապատիկ ավելին։ Դա հնարավորություն է ընձեռում քայլ առ քայլ հետևելու խաչքարերի և նրանց զարդաձևերի կրած փոփոխություններին և բացահայտելու հուշարձանի զարգացման օրինաչափությունները։

Ստորև տալիս ենք IX և X դդ. թվակիր որոշ խաչքարերի նկարագրությունը։

1. Թվակիր արձանագրությամբ Հայկ. ՍՍՀ տարածքում մեզ առայժմ հայտնի հնագույն խաչքարը գտնվում է Գառնիում։ Կերտված է 879 թ. Կատրանիդե թագուհու պատվերով։ Պատրաստված է արաբների ավերած Գառնի ամրոցի պարսպի բազալտե մեկ քարից (նկ. 52)։ Արձանագրությունը հետևյալն է.

Թվականս ՅԻԸ (=879 թ.)։ Յանուն ա/ստուծո/յ ես Կատրանիդե հայոց թագու՛, որ կանգնեալ զսուրբ խաչս ի բարէխաւսութի/ւն/ ինձ[31]։

Խաչքարի բարձրությունը 2,60 մ է, լայնքը՝ 0,84 մ, հաստությունը՝ 0,43 մ։ Կոթողի արևմտահայաց երեսին փորագրված է երկարավուն մի խաչաքանդակ, որի թևերի երկճյուղ ծայրերը վերջանում են մեկական գնդիկներով։ Ամրացված է ուղղակի գետնի մեջ։ Նման խաչաքանդակներով խաչքարեր Գառնիում մի քանիսն են։ Այստեղ IX դ. մի խաչքարի երեսին պատկերվել են իրար նման երկու խաչաքանդակներ (նկ. 55)։

2. Հաջորդ խաչքարը 881 թ. Մեծ Մազրայում կանգնեցրել է Սյունաց և Աղվանից իշխան Գրիգոր Ատրներսեհյանը[32] (նկ. 53)։ Կամարաձև գագաթով և դեպի ներքև նեղացող բազալտե խոշոր սալ է, որի արևմտահայաց երեսին պատկերված է հարթաքանդակ մի խաչ՝ ներքևի մասով հենված եռաստիճան պատվանդանի վրա, որն իր հերթին զարդարված է շուշանածաղկի և արմավենիկի տերևաքանդակներով։ Նման զարդաձև IX դ. այլ խաչքարի վրա չի հանդիպում։ Ուշագրավ է IX դ. այս դասական խաչքարի քանդակազարդումը խաչի թևերի երկճյուղ ծայրերով, միջին փոսիկներով և խաղողի ուրվագծային

---

[31] Б. Аракелян, Гарни, I. Результаты раскопок 1949—1950 гг., Ереван, 1952, стр. 84. Ինչպես մեզ հայտնել է վիմագրագետ Ս. Բարխուդարյանը, Լեռնային Ղարաբաղի Քոլատակ գյուղի Մեծարանց վանքում պահպանվել է վանքի եպիսկոպոս Սողոմոնի 853 թվակիր անհետացած մի խաչքարի պատվանդանը միայն, իսկ Վաղուհաս գյուղում 866 թ. մեկ այլ՝ գրանիտե խաչքար-հիշատակարան։

[32] Բ. Ուլուբաբյանը այս իշխանին նույնացնում է Համամ Արևելցու հետ (տե՛ս նրա «Խաչենի իշխանության տոհմակիցները», «Բանբեր Երևանի պետական համալսարանի», 1972, № 2, էջ 222)։

[illegible]

Թեև քառակող կոթողները հատուկենտ հանդիպում են մինչև XVII դ., բայց նրանց վրա գրեթե բացակայում են պատկերաքանդակները։ IV—VII դդ. կոթողներից նրանք տարբերվում են նաև իրենց կառուցողական ոճով։

Քառակող կոթողներին զուգընթաց պատմական Հայաստանում, ինչպես նշվեց վերևում, հանդիպում են վաղ քրիստոնեական շրջանի թևավոր խաչեր, խաչարձաններ, կերտված տարբեր քարերից (Օձուն, Կուրթան[20], Դվին, Կողբ, Դսանի, Հովհաննավանք[21], Շահնազար, Շամուտ, Լեռնային Ղարաբաղ, Ցաղգան, Աչաջուր, Կաղաչա, Սևան, Ղամշի վանք և այլն) (նկ. 36—42)։

Թևավոր խաչերն ամրացված են եղել խորանարդաձև, երբեմն՝ քանդակազարդ պատվանդանների հուշասյուն կոթողների վրա, ագուցվել բազիլիկ տաճարների պատերին և երբեմն էլ պարզապես խրվել են հողի մեջ։ Դրանցից հնագույնները պատկանում են IV—VII դարերին, իսկ այնուհետև որոշ ընդհատումներով և մի քիչ կերպարանափոխվելով գոյատևում են մինչև XVII դարը։ Մատենագրական բազմաթիվ վկայությունների համաձայն թևավոր խաչարձանների հնագույն օրինակները եղել են փայտից[22]։

Ագաթանգեղոսը իր «Հայոց պատմության» մեջ մանրամասն նշում է խաչարձանների կանգնեցման տարբեր շարժառիթներն ու վայրերը[23], իսկ խաչարձանների կանգնեցման առթիվ ստեղծված մի ավանդության համաձայն Մեսրոպ Մաշտոցը Դարգմանի Խուրս իշխանի ձեռնտվությամբ խաչարձաններ է կանգնեցնում կռապաշտության մնացորդները վերացնելու նպատակությամբ (ի հիշատակ այդ դեպքի գյուղը կոչվում է Խաչկապ կամ Խաչափակ, այժմ՝ Ղուշչի[24])։

Սովետական Հայաստանում հանդիպում են նաև ճարտարապետական ձևավորում ունեցող V—VII դդ. այլ տիպի կոթողային հուշարձաններ։ Դրանց լավագույն նմուշներն են Օձունի և Աղուդիի հայտնի կոթողները, որոնց վերին մասերը դժբախտաբար ավերված վիճակում են (նկ. 31—32)[25]։ Այս տիպի հուշարձաններ հանդիպում են Կենտրոնական Ասորիքում և վերաբերում են II—III դարերին[26]։

2. ԽԱՉՔԱՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՅԻՆ ՆՈՐ ՁԵՎ

Հայաստանում VII դ. վերջերից մինչև IX դ., արաբական տիրապետության շրջանում, գրեթե դադարում է թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր շենքերի, ինչպես նաև կոթողային հուշարձանների շինարարությունը։

Իր հայրենիքի ազատության համար պայքարող հայ ժողովուրդը, երկարատև ու համառ պայքարից հետո, IX դ. II կեսին, կարողանում է վերականգնել երկրի քաղաքական անկախությունը և անցնել խաղաղ, ստեղծագործ աշխատանքի։ Այդ ժամանակաշրջանից սկսած երևան են գալիս միջնադարյան Հայաստանում այնքան տարածված խաչքարային հուշարձանները. դրանք հարատևում են մինչև XVIII դ. և նույնիսկ մինչև մեր օրերը։

Սակայն IX—XVIII դդ. խաչքարերը տիրապետող կոթողային հուշարձաններ լինելով հանդերձ՝ միակը չէին։ Նախկինում գոյություն ունեցող մյուս կոթողային հուշարձանները ևս (քառակող կոթողներ, թևավոր խաչեր, հուշասյուն կոթողներ և այլն), յուրահատուկ զարգացում ապրելով, հասնում են մինչև XVII դ., թեև դրանց քանակը մեծ չէ։

Հնագույն քառանիստ կոթողներն իրենց համաչափությամբ (մոտավորապես չորսը մեկի հարաբերությամբ) չէին կարող իրենց վրա կրել խաչի համաչափ (ոչ համասարաթև իմաստով) և արտահայտիչ ձևերը, որովհետև դրանց վրա քանդակված խաչերի ուղղահայաց թևերը երկար էին ստացվում, հորիզոնականները՝ խիստ կարճ, քանդակներով։ Խաչաքանդակի աստիճանաձև հիմքի երկու կողմերից բարձրանում են չորսական արմավենիկի տերևներ, որոնք համարյա միանում են խաչի հորիզոնական թևերին (դրանք հնության հատկանիշներից են), իսկ վերին թևի երկու կողմերից իջնում են խաղողի մեկական խոշոր ողկույզներ՝ առանց հատիկների մշակման։ Քանդակային այս զարդամոտիվները հատուկ են գրեթե բոլոր խաչքարերին։

---

[20] Կուրթանի IV—V դդ. բազիլիկ տաճարի արևմտյան պատի մեջ ագուցված է թևավոր, հնագույն մի խաչարձան։ Թերևս մենք այստեղ գործ ունենք մինչքրիստոնեական շենքի պատին խաչ ավելացնելով այն «սրբացնելու»՝ Փ. Բուզանդի հայտնի վկայության հետ (Փավստոս Բուզանդ, Պատմություն, դպրութ Գ, էջ 87—88)։

[21] Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 17։

[22] Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 233։ Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, էջ 412։

[23] Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 397։

[24] «Ազգագրական հանդես», Ե գիրք, Թիֆլիս, 1899, էջ 313, Մակար Բարխուդարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 292։

[25] Դ. Հովսեփյան, Նյութեր..., պրակ Գ, էջ 57։ Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները..., էջ 47, Լ. Ազարյան, Օձունի և Բրդաձորի կոթողները, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1965, № 4, էջ 212։ Մեր կարծիքով, ճիշտ չէ Ազարյանի այն ենթադրությունը, թե խոյակերպ քանդակը միջև էլ վերծանվել է որպես խոզագլուխ Տրդատ թագավորը, քանի որ մենք ունենք նաև խոյակերպ կենդ քանդակ քառակող կոթողների վրա։

[26] Դ. Հովսեփյան, Նյութեր..., պրակ Գ, էջ 57։

Խաչքարի բարձրությունը 3,02 մ է, լայնքը՝ ամենալայն մասում 1,52 մ, իսկ ներքևում՝ 1,15 մ, հաստությունը՝ 0,35 մ։ Իր չափերով, քանդակների մշակմամբ և մոնումենտալությամբ Մեծ Մազրայի այս խաչքարը IX դարից մեզ հասած ամենանշանավոր կոթողն է։ Խաչքարի գագաթին իր ժամանակին դրված է եղել թևավոր մի փոքրիկ խաչ կամ խաչքար։ Այդ երևում է նրա գագաթին արված հատուկ ուղղանկյուն փոսիկից, որն ունի 0,25 մ երկարություն, 0,14 մ լայնք և 0,10 մ խորություն։

Խաչքարի թիկունքին փորագրված է 881 թվականի, 13 տողանի մի արձանագրություն.

ՑԼ (=881) ԹՎԱԿԱՆՈՒԹ-
ԵԱՆՍ ՀԱՅՈՑ, ԵՍ
ԳՐԻԳՈՐ ԱՏՐՆԵ-
ՐՍԵՀԵԱՆ ՍԻՒՆԵԱՑ ԵՒ
ԱՂՎԱՆԻՑ ԻՇԽԱՆ, ԿԱՆԳ-
ՆԵՑԻ Զ/Ս/ՈՒՐԲ ՆՇԱՆՍ ԱՒԳ-
ՆԱԿԱՆ ՀԱՒԱՏԱՑԵ-
ԼՈՑ։ ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳ-
ԷՔ ՍՈՒՐԲ ԽԱ/Չ/ԻՍ
Ք/ՐԻՍՏՈ/ՍԻ, ԶԻՍ ՅԱՂԱ-
ԻԹՍ ՅԻՇԵՍ-
ՋԻՔ[33]։

3. IX դ. թվակիր արձանագրությամբ երրորդ խաչքարը գտնվում է Ն. Թալինի հանդամասում։ Կերտված է տեղական վարդագույն տուֆից և ամրացված է ժայռոտ գետնի վրա (նկ. 54)։ Նրա բարձրությունը 1,75 մ է, լայնքը վերևում՝ 1,13, ներքևում՝ 1,05մ, հաստությունը՝ 0,28—0,30 մ։

Խաչաքանդակի թևերի երկճյուղ ծայրերը վերջանում են մեկական գնդիկով։ Մեկ գնդիկ էլ արված է խաչի կենտրոնում, ընդ որում ներքևի երկու թևերի կողմերից բարձրանում են արմավենիկի չորսական տերևներ, որոնք միանում են խաչի հորիզոնական թևերին։ Խաչաքանդակը պատկերված է եռաստիճան հիմքի վրա։ Խաչքարը կիսակլոր գագաթ է ունեցել (վերևից քիչ կոտրված է)։ Նրա թևերի հյուսիսային անկյունում պահպանվել է հետևյալ արձանագրությունը.

ՅԼԱ /=882 Թ./։
ԵՍ ՍՈՒՍԷ-
Ս[34]։

4. 886 թվակիր, բազալտից պատրաստված մի խաչքար պահպանվել է Վայոց ձորի Կեչուտ գյուղում։ Մի ժամանակ այն կանգնած է եղել գյուղի գերեզմանատանը, մի մեծ և անտաշ պատվանդանի վրա[35]։ Հետագայում խաչքարը ջարդվել է, այժմ նրա երկու բեկորները գտնվում են Արփա գետի աջ ափին, կամրջի մոտ (պակասում է վերևի մասը մոտ 0,75—1,00 մ բարձրությամբ)։ Պահպանված երկու բեկորների ընդհանուր բարձրությունը 2,10 մ է, լայնքը ներքևում՝ 0,80 մ, վերևում՝ 1,02 մ, հաստությունը՝ 0,23 մ, պոչուկի բարձրությունը՝ 0,36 մ, լայնքը՝ 0,46 մ, ընդ որում պոչուկի վրա փորված է մի անցք, ըստ երևույթին, քարը քարշ տալու նպատակով։ Խաչքարի ընդհանուր բարձրությունը, ջարդված մասի հետ մեկտեղ, առանց պատվանդանի եղել է 3 մետրից քիչ ավելի[36] (նկ. 57—59)։

Խաչքարի կառուցողական արձանագրությունից, որ փորագրված է եղել քարի թիկունքին, պահպանվել է միայն 5 տող, իսկ սկզբի մասը միայն Խ. Դադյանի և Ե. Լալայանի շնորհիվ է մեզ հասել, բայց կասկածելի ընթերցանությամբ։ Ահա այդ արձանագրությունը, որը ներկայացնում ենք մեր վերծանմամբ (պակասող մասերը լրացված են ըստ նշված հեղինակների).

---

[33] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 159։ Արձանագրության մեջ հիշատակված «Գրիգոր Ատրներսեհյանը» Ս. Ջալալյանցի և այլոց մոտ դարձել է «Գրիգոր Ամիր Աղուանից իշխան», իսկ Մ. Սմբատյանցի մոտ՝ «Գրիգոր Ամիրներսեհ և տանս Սիւնեաց և Աղուանից իշխան» (տե՛ս Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 111 և Մ. Սմբատեանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազետ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 607), Գրիգոր Ատրներսեհյանի անունը աղավաղվել է նաև վերջերս Միլանում և Փարիզում հրատարակված հայկական խաչքարերի ալբոմներում (տե՛ս «Documenti di architettura Armena», Միլան, 1969, էջ 4 և «Հայկական խաչքարեր», Փարիզ, 1973, էջ 12, նկ. 9)։

[34] Ա. Ն. Տամինյան, Հայկական խաչքարերի արվեստը, «Էջմիածին», 1960, № Զ, էջ 45։ Արձանագրությունը թերի է, նրա շարունակությունը, որը կարող էր հարավային անկյունում լինել, չի պահպանվել։

[35] Գ. Հովսեփյան, Հաղաց թառի «Ամենափրկիչը» և նույնանուն հուշարձանները հայ արվեստի մեջ, Երուսաղեմ, 1937, էջ 47—48։ «Ազգագրական հանդես», գիրք 13, Թիֆլիս, 1905, էջ 253։

[36] Խ. Դադյանի կարծիքով կոթողն ունեցել է մոտ 6 մետր բարձրություն, վերևում եղել է կամարաձև, իսկ ըստ Ե. Լալայանի՝ 4 կանգուն բարձրություն և 1, 2 կանգուն լայնություն (տե՛ս Գ. Հովսեփյան, Հաղաց թառի «Ամենափրկիչը»..., էջ 47—48)։

Ք|ՐԻՍՏՈ|Ս| ԱՄԻՐՈՒՆ [Ի] ԲԱՐԵՀՈԴՈՒԹԻՒՆ [Ի]
|Տ|Է|Ր
ՅՈՎԱՆԵՍԻ ՍՈՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ[37], Ի ԹԱԳԱՒՈ-
ՐՈՒԹԵԱՆ ՎԱՍԱԿԱ,
Տ|Է|Ր ԲԱՐԴԵՆԻ ՈՐԴԻ Ս-
ԻՒՆԵԱՑ[38] ԻՇԽԱՆԻ, ՀԱ[ՈՑ]
ԹԸՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՐ
ՅԺԵ |=866| ԷՐ։ ԵՍ Դ[ԱՒ]ԻԹ ԿԱ[Ն]ԳՆ-
[Ե]ՑԻ ԶԽ[ԱՉՍ ՎԱՍՆ ԻՄ ՀՈԳԵԱ-
ՑՍ ԶԻՍ ԻՇԵՑԷՔ[39]։

Խաչքարի հարավային հորիզոնական թևի տակ, ավելի մանր գրերով փորագրված են կոթողի և այն կերտող վարպետի անունները՝ 7 տողի վրա.

ՍՈՒՐԲ
ԴՈՐԴ,
ԵՍ ԱՐ-
ԱՐԻ Հ-
ՈՒՍԷ
Փ ՕԱ-
ՌԱ Ք|ՐԻՍՏՈՍ|Ի[40] (նկ. 58)։

Կնյուտի այս կոթողը իր զարդաքանդակներով ու մանրամասն պատկերագրությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Նրա վերին մասում, խաչի հորիզոնական թևերի վերև երկու արանքներում, ինչպես վկայում է Խ. Դադյանը[41], պատկերված են եղել մեկական աղավնի, իսկ թևերի ծայրերին քանդակված են մեկական երկարակտուց թռչուններ (ձկնկուլ կամ արագիլ), որոնցից հարավայինի կտուցին պատկերված է մի փոքրիկ ձուկ։ Խաչաքանդակներից ներքև պատկերված է կլոր մի վարդյակ՝ բաղկացած շրջանաձև չորս օղակներից, մեջտեղում՝ փոքրիկ, հավասարաթև մի խաչ։ Վարդյակի երկու կողմերում պատկերված են մեկական բազեր, որոնց ոտքերը հիշյալ վարդյակից ներքև իրար են միանում ոլորաձև՝ ստեղծելով երկու օձի տպավորություն[42] (ընդհանրապես օձի պատկերագրությունը խաչքարերին անհարիր է, ավելի հաճախ այն տեսնում ենք օրորոցաձև տապանաքարերի վրա)։

Արձանագրության մեջ հիշատակված Վասակը ամենայն հավանականությամբ Սյունիքում 851—892/3 թթ. իշխող, Սյունաց մեծ իշխան Վասակն է՝ «Մեծ իշխան Վասակ», որ «իշխանիկ կոչիւր», որը, սակայն, ոչ թե թագավոր էր, այլ Սյունաց գահերեց իշխան[43]։

Բացի հիշյալ խաչքարի հարուստ զարդաքանդակներից, խիստ արժեքավոր է նաև նրա կերտող վարպետի անվան հիշատակությունը, Հովսեփ (Հուսէփ—Յուսէփ), որն առայժմ մեզ հայտնի խաչքար կերտող հնագույն քանդակագործ վարպետն է։

5. Տաթևի վանքի Պողոս-Պետրոս տաճարի արևմտյան մուտքից վերև, պատի մեջ ագուցված է Հովհաննես եպիսկոպոսի ճոխ քանդակազարդված որմնախաչը՝ կերտված վարդագույն տուֆից 895—906 թթ. (նկ. 60)։ Նրա ուղղահայաց շրջանակներին և երեսպատման մի քարի վրա փորագրված է տաճարը կառուցողի հետևյալ հիշատակագրությունը.

Տ|Է|Ր ՅԻՇԵԱ
ԶՏ|Է|Ր ՅՈՎԱՆԷՍ ՇԻՆՈՂ
ՍՐԲՈ ԵԿԵՂԵՑԵԱՑՍ[44]։

6. Հացառատի (Կամոյի շրջան) կենտրոնագմբեթ Աստվածածին եկեղեցին, նրա վրա փորագրված մի արձանագրության համաձայն, կառուցվել է 898—899 թթ.։ Այստեղից էլ իրավացիորեն ենթադրվում է, որ նրա արևելյան պատին ագուցված խաչքարն էլ նույն ժամանակի գործ է[45] (նկ. 61)։

7. Արարատյան դաշտում առհասարակ քիչ

---

[37] Ե. Լալայանն արձանագրության այս մասը չի նշում, չի տալիս նաև խաչքարի ճակատի ձևը, բայց խիստ [illegible] արձանագրությունը (տե՛ս «Ազգագրական հանդես», գիրք 12, էջ 253)։

[38] Տեղում պահպանված արձանագրությունն սկսվում է այս տողից։

[39] Գ. Հովսեփյան, Հավուց թառի «Ամենափրկիչը»..., էջ 47—48, «Ազգագրական հանդես», գիրք 12, էջ 253։ Երկու հեղինակներն էլ արձանագրությունն ընթերցել են զգալի սխալներով։ Տե՛ս նաև Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պ. 3, էջ 21 (հեղինակը մեջ է բերել Ե. Լալայանի ընթերցմամբ, որովհետև անձամբ չի տեսել արձանագրությունը)։

[40] Խաչքարի ճակատի այս փոքրիկ արձանագրության՝ Խ. Դադյանի սխալ վերծանումը կասկածի տակ է առել Գ. Հովսեփյանը (տե՛ս «Հավուց թառի «Ամենափրկիչը»..., էջ 47)։

[41] Տե՛ս Գ. Հովսեփյան, Հավուց թառի «Ամենափրկիչը»..., էջ 47։

[42] Տե՛ս նույն տեղում։

[43] Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 170—172, 175, 204, 255, 297 և այլն։

[44] Ս. Բարխուդարյան, Դիվան..., պ. 3, էջ 14 (հեղինակը արձանագրության առաջին տողը տեղադրել է վերջում)։

[45] Ս. Խ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 22 և 177։

են պահպանվել հայկական հնագույն կոթողներ ու խաչքարեր։ Վերջերս մեզ հաջողվեց հայտնաբերել 924 թվակիր արձանագրությամբ բազալտե մի խաչքար՝ Հոկտեմբերյանի շրջանի Ջանֆիդա գյուղի սահմաններում (Նկ. 63)։ Նրա բարձրությունը 0,98 մ է, լայնությունը՝ 0,69—0,70 մ, հաստությունը՝ 0,37—0,41 մ։ Խաչքարի խաչաքանդակի թևերի ավարտումը երկուական գնդիկներով և հորիզոնական թևերին միացող բուսական բնորոշ դրվագներն անկասկած խոսում են կոթողի հնության մասին։ Խաչի հորիզոնական թևերի վերևի երկու կողմերում փորագրված է հետևյալ ութտողանի արձանագրությունը.

ՅՀԳ ./=924) ԹՎԱ-
ԿԱՆԻՆ ԿԱԿ-
ՆԵՑԻ ԶԽԱՉՍ
ԵՍ ԳՈՐԴ ՔԱ-
ՀԱՆԱ՝ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ
ՓԱՒՈՒԹԻՒՆ
ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ
Ի Ք/ՐԻՍՏՈ/Ս։

8. Վայոց ձորի Կարմրաշենի և Լեռնային Ղարաբաղի Ամարաս վանքում պահպանվել են ՅՀԴ /=925/ թվակիր մեկական խաչքարեր[46]։

9. Տաթևվանքում ս. Սիոն տաճարի արևմըտյան պատին դրսից ագուցված է եղել 931 թվակիր մի որմնախաչ, վանքի հիմնադիրներից մեկի՝ Ստեփանոսի անունով. ՅԶ։ (=931) Թ[ՎԻՆ] Հ[ԱՅՈՑ] ԶՍՏԵՓԱՆՈՍ ԻՇԽԵՑԷՔ Ի ՔՍ[47]։

10. 1967 թ. Վահանավանքում վիմագրագետ Գ. Գրիգորյանի կողմից կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել են 957 և 970 թվակիր և X դ. պատկանող մի շարք խաչքարեր ու բեկորներ։

11. Անիի հյուսիսային պարիսպների մոտ Ն. Մառի կատարած պեղումների ընթացքում հայտնաբերված 952 թվակիր խաչքարը զարդարված է խաչի ներքևի թևից վեր բարձրացող արմավենիկի քանդակներով[48]։

12. 960 թվակիր արձանագրությամբ բազալտե մի խաչքար դրված է եղել Վանի ս. Պողոս եկեղեցու հարավային պատի վրա։ Խաչքարի հիշատակագրությունը փորագրված է նրա երեսին, խաչի թևերի արանքում.

Յ/ԻՍՈՒԻ/Ս Ք/ՐԻՍՏՈ/Ս
ՈՂՈՐՄԵԱ...
ՆԹ /=960/
Թ/ՈՒԱԿ/—
ԱՆՈՒ—
ԹԷԱՆՍ
ՀԱՅՈՑ
......[49]։

13. Անիից ոչ հեռու, Տեկորի գերեզմանատանը գտնված խաչքարի վրա փորագրված է.

Թ/ՎԻՆ/ ՆԺԳ /=964/
ԵՍ ԱՏ-
ԱՊ ԾԱՌ-
ԱՅ Ա̅Յ̅ ՈՐ
ԿԱՆԳՆԵՑ-
Ի ԶԽԱՉՍ
ԶԱՅՍ[50]։

Տեկորի այս խաչքարը երկարավուն, կոթողաձև մի սալ քար է, որի վերևի մասում պատկերված է քառագիծ խաչաքանդակ, իսկ թևերի ծայրերը վերջանում են երեքական կլոր գնդիկներով։ Խաչը կանգնած է եռաստիճան հիմքի վրա։ Լուսանկարից երևում է, որ կոթողը ամրացված է ուղղակի գետնի մեջ (Նկ. 65)։

14. Լճաշենում պահպանվում է 964 թվակիր մի խաչքար, կերտված բազալտ քարից, որը զարդարված է խաղողի ողկույզների քանդակներով։ Խաչքարի բավական լայն շրջանակին գրված է հետևյալ արձանագրությունը.

Թ/ՎԱԿԱՆ/ԻՆ ՆԺԳ /=964/ ԵՍ ԳՐԻԳՈՐ ԲԱՐԱ
ԿԱՎԻՋ
ՑԱՆԿԱՑՈՂ ԵՂԵ ԵՒ ԿԱՆԳ/ՆԵՑԻ/ ԽԱՉՍ ՎԱՍՆ ԻՄ
ՄԵՂՈՒՑԵԱԼ ՀՈԳՈՅՍ
[ԻՄ]։ ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՒՔ ՅԱՂԱՒ/ԹՍ/ ՅԻՇԷ/ՑԷՔ/[51]։

Խաչքարի բարձրությունը 1,02 մ է, լայնքը վերևում՝ 0,84 մ, ներքևում՝ 0,70 մ, հաստությունը՝ 0,20—0,24 մ։

15. Գնդեվանքում ոմն հայր Սուքիան վանքին կից կառուցում է սրահ և այդ շինարարության

---

[46] Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 137, Ղեւոնդ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 110։

[47] Ս. Բարխուդարյան, Դիվան..., պ. III, էջ 156։ Հեղինակը ընթերցել է Ստեփան, որը ճիշտ չէ։

[48] *Н. Я. Марр*, Раскопки в Эриванской губернии Отчет имп. археол. комиссии за 1982 г., Петербург, 1894, стр. 78—79.

[49] Դժբախտաբար այն լրիվ չի ընթերցվում երկու կողմերից փայտե շրջանակի մեջ առնված լինելու պատճառով։ Այս արձանագրության հրատարակված լինելը մեզ անհայտ է (արձանագրությունը ընթերցել ենք լուսանկարից)։

[50] Կ. Ղաֆադարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները..., Երևան, 1939, էջ 47—48։ Գ. վարդապետ Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 173, որտեղ արձանագրությունը մի այլ կերպ է ընթերցված։

[51] Վերցրել ենք մեր հավաքածուից։

ռաֆիլ 967 թվականին կանգնեցնում խաչքար[52] (նկ. 61)։ Դա փոքրիկ բազալտե սալ է, կենտրոնում պատկերված ուղղաձիգ խաչաքանդակով, որի թևերի երկճյուղ ծայրերը վերջանում են երկբաժան փնջիկավոր գնդիկներով։ Խաչի բոլոր թևերի վրա պարանաձև զարդաքանդակներ են, որպիսիք հանդես են գալիս Գառնիի հեթանոսական տաճարի վրա, իսկ այնուհետև՝ նույն գյուղի IV—V դդ. պատկանող բազիլիկ տաճարում։ Այս և անտիկ շրջանի մի շարք այլ սիրված զարդաձևեր փոխանցվել են հայկական քրիստոնեական հուշարձաններին, այդ թվում նաև խաչքարերին։ Խաչքարը եզերված է երկրաչափական յուրահատուկ քանդակներով։

16. Արատես գյուղի (Եղեգնաձորի շրջան) համանուն վանքում, պատի մեջ ամրացված է ոմն Սահակ երեցի 975 թվակիր որմնախաչը, կերտված բազալտ քարից։ Այն զարդարված է բուսական ու երկրաչափական յուրահատուկ քանդակներով։ Ստորև բերվող երկաթագիր արձանագրությունը փորագրված է խաչի հորիզոնական թևերի արանքում.

ՍԱՀԱԿ ԵՐԷՑ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ
Թ/ՎԻՆ/ՆԻԴ /=975/[53]։

Ուշագրավն այստեղ այն է, որ խաչաքանդակը հանգչում է վեցթևանի կիսված մի վարդյակի վրա։

17. Ն. Թալինում պահպանվել է 975 թվակիր յուրօրինակ մի խաչքար, որի վրա փորագրված հավասարաթև խաչաքանդակն այնքան փոքր է, որ դժվար է նկատվում (նկ. 67)[54]։

Հուշարձանը կերտված է վարդագույն տուֆից։ Բարձրությունը՝ 1,60 մ, լայնքը՝ 0,70 մ, հաստությունը՝ 0,28 մ, ընդ որում ներքևի մասում պոչուկ չի ունեցել, այդ մասը պարզապես կոպիտ է տաշված և ամրացված գետնին՝ 0,40 մ խորությամբ։

Խաչքարի վերևի երկու անկյուններում քանդակված են 0,18—0,22 մետր տրամագծով մեկական գնդեր[55], որոնց վրա արված հատուկ փոսիկների մեջ ագուցված են եղել մետաղե կամ քարե խաչեր։ Կոթողի երեսն ամբողջությամբ ծածկված է հետևյալ արձանագրությամբ.

ՆԻԴ Թ/ՎԻՆ/=/975/ ԵՍ ԱԳԼՀԻՆԱ, ՈՐ
ԿԱՆԳՆԵՑԻ ՍՈՒՐԲ ԳԵՒ-
ՈՐԳ Ի ԲԱՐԷԽՕՍՈՒԹԻՒ-
Ն ԻՆՁ ԵՒ ՈՐԴԵԱՑ ՅՈՒ-
ՍԻՓԱ, ՍԱՀԱԿԱ ԵՒ ՍԱ-
ՐԳՍԻ։ ԵՍ ՍԱՀԱԿ ԱԳ-
ԼՀԻՆԱԻ, ՈՐ ՆՈՐՈԳԵՑ-
Ի ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՍՈՒՐ-
Բ ՍԱՐԳԻՍ Ի ԲԱՐԷԽՕՍՈՒ-
ԹԻՒՆ ԻՆՁ ԵՒ ԵՂԲԱՐՑ ԻՄ-
ՈՑ ԵՒ ԳՐԻԳՈՐՈ ԱՐԵՎՇ-
ԱՏՈՒԹԵԱՆ[56]։

Արձանագրության առաջին մասից պարզվում է, որ խաչքարը կանգնեցրել է ոմն Ագլհինա 975 թվականին իր և իր որդիների (Հովսեփի, Սահակի և Սարգսի) բարեխոսության համար։ Արձանագրության երկրորդ մասում խոսվում է Ագլհինայի որդի Սահակի կողմից ս. Գրիգոր և ս. Սարգիս (եկեղեցի կամ մատուռ) հուշարձանների վերականգնման մասին, իր և եղբայրների բարեխոսության համար։

18. Ղուշչի գյուղի սահմաններում (Ադրբեջանական ՍՍՀ) վերջերս հայտնաբերվեց բազալտից պատրաստված վերևում կամարաձև, համարյա անզարդ մի խաչքար, որի արձանագրությունը գրված է խաչի հորիզոնական թևերի արանքում։

ՀԵԹՈՒՄ ԿԱՆԳՆԵԱՑ ԶԽԱՉՍ։
ՆԼ /=981 Թ./[57]։

Նույն գյուղի սահմաններում կան նաև այլ հնագույն խաչքարեր։ Ղուշչի և Ջագլիկ գյուղերի սահմաններում գտնվող ավերակ եկեղեցու պատերի մեջ պահպանվել են երկու հնագույն խաչքարեր, որոնցից մեկը հար և նման է վերոհիշյալ 931 թվակիր խաչքարին։

19. Ավելի կատարյալ մշակում ունի Զորագյուղի (Մարտունու շրջան) 984 թվակիր խաչ-

Ա 5654

---

[52] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 120, 187։ Խաչքարի ցարդ հրատարակված արձանագրություններում այն թվագրել են 967 թվականով (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 106, «Ազգագրական հանդես», գիրք 26, էջ 13), սակայն Ս. Բարխուդարյանը գտնում է, որ այն պետք է թվագրված լիներ 937 թվականով (տե՛ս նույնի, Դիվան..., պ. 3, էջ 15)։

[53] Ա. Ն. Շահինյան, Հայկական խաչքարերի արվեստը, «Էջմիածին», 1960, Զ, էջ 47։ Տե՛ս նաև Ս. Բարխուդարյան, Դիվան..., պ. 3, էջ 122։

[54] Խաչքարը հայտնաբերել է Ն. Թալին գյուղի բնակիչ Հ. Հովսեփյանը։

[55] Նման երկու, բայց խոշոր գնդերի հանդիպում ենք Հավուց թառի՝ XIII դ. պատկանող, Հովհաննես Փակակայի որմնափակ խաչքարի վրա, որի վերևում նույնպես հատուկ փոսիկներ են արված խաչ կամ մեկ այլ բան հագցնելու նպատակով։

[56] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[57] Խաչքարի վերաբերյալ հիշյալ նյութերն ու արձանագրության բնագիրը մեզ տրամադրել է Ս. Բարխուդարյանը։

քարը՝ կերտված կարմրավուն չեչոտ քարից (նկ. 68)։ Հուշարձանն ամբողջությամբ ծածկված է բուսական և երկրաչափական քանդակներով՝ Արատեսի խաչքարի նմանությամբ, միայն այն տարբերությամբ, որ սրա թևերի երկճյուղ ծայրերը վերջանում են ոչ թե երկու, այլ երեքական կրկնակի գնդիկներով։ Այդ իմաստով Զորագյուղի հիշյալ խաչքարն իր թևերի եռաճյուղ վերջավորություններով հնագույն օրինակներից մեկն է։ XI դարից սկսած այդպիսի վերջավորությունները վերածվում են եռամաս բողբոջանման զարդամոտիվների։

Զորագյուղի հիշյալ կոթողի խաչաքանդակի թե՛ վերևի և թե՛ ներքևի թևերից դուրս են գալիս արմավենու յուրահատուկ երեքական ու չորսական տերևներ, որոնք միանում են նրա հորիզոնական թևերին։

Նշված խաչքարի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ Լճաշենի խաչքարի նման, սրա հիշատակագրությունը փորագրվել է ոչ միայն շրջանակին, այլև կողին։ Խաչը հանգչում է կլոր շրջանակի մեջ վերցրած նռան քանդակի վրա։ Նման երևույթ մենք տեսնում ենք Ղուշչի գյուղի VIII դ. վերաբերող մի խաչքարի վրա, որտեղ պատկերված երեք խաչաքանդակներն էլ հանգչում են նռան մեկական զարդամոտիվի վրա[58]։

Կոթողի ուղղանկյուն շրջանակին և հարավային կողին կա տասներկու տողանի հետևյալ երկաթագիր արձանագրությունը.

ՆԼԳ (=984) ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ, Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹ
Ե[ԱՆ
ՍՄԲԱՏԱ ԵՒ Ի ՀԱՅՐՈՒԹԵԱՆ ՍԱՐԳՍԻ ԿԱՆԳ
ՆԵՑԻ] Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Չ]Ս ԱՆՁԻՆ ԻՄՈՑ ԵՒ ԱՐԵՒ-
ՇԱՏՈՒԹԵԱՆ
ՅՈՎԱ[ՆՆԻՍԻ][59]։

Խաչքարի բարձրությունը 1,30 մ է, լայնությունը՝ 0,79 մ, հաստությունը՝ 0,23 մ։

20. Մուղնի գյուղում (Աշտարակի շրջան) պահպանվել է 986 թվակիր մի խաչքար, որի խաչի վերևի թևի երկու կողմերից ցած են իջնում նռան մեկական քանդակներ (նկ. 69)։

Արձանագրությունը հետևյալն է.

ՆԼԵ /=986 Թ. /ԹՎ/ԻՆ/, ԵՍ ՄԻՐԱՆ ԾԱՌԱՅ
Ա/ՍՏՈՒԾՈ/Յ, ՈՐ ԿԱՆԳ/Ն/ԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՅԱՒԺԳՆԱԿ.
ԱՆՈՒԹԻՒՆ ԻՆՁ
ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ԻՄՈՑ. ՈՐ ԵՐԿԻՐՊԱԳԵՍ ՅԱՂ/ԱՒԹՍ
ՅԻՇԷ/[60]։

Խաչքարի բարձրությունը 1,55 մ է, լայնքը՝ 1,0մ, հաստությունը՝ 0,23 մ։ Խաչքարի կենտրոնում կրկնագիծ, մեջը ակոսաձև, երկճյուղ թևեր ունեցող խաչ է փորագրված, որի թևի ծայրերը շրջանաձև են վերջանում։ Խաչի վերևի թևի երկու կողմերից ուղղակի խաչքարի շրջանակից իջնում են նռան մեկական խոշոր քանդակներ։ Խաչը հանգչում է փորագիր եռաստիճան պատվանդանի վրա, իսկ հորիզոնական թևերի ներքևի տարածության վրա քանդակված է մեկական գնդիկ (գուցե լուսատունե՞ր)։ Բավական լայնեզր շրջանակը երեք կողմերից զարդարված է նշատերև քանդակներով, որոնք միաժամանակ նռնենու տերևներ են հիշեցնում։

21. Թանատաց (Արավուս գյուղի սահմաններում, Սիսիանի շրջան) վանքի գերեզմանատանը գտնվող խաչքարը, ի տարբերություն վերոհիշյալ հնագույն խաչքարերի, կանգնած է որպես կոթողամահարձան՝ ոմն Գրիգորիկ երեցի շիրիմի վրա։ Արձանագրությունը գրված է խաչքարի ճակատին և խաչից ներքև՝ ազատ մասում։

ՆԼԵ /=986/ Թ/ՈՒԱԿ/ԱՆԻՆ
ՎԵՐԱՓՈԽԵՑԱՒ ԳՐԻԳՈՐԻԿ ԵՐԷՑ ԹԱՆԱՏԱՑ
ՎԱՆԿԱՆ[61]։

Հուշարձանի վրա պատկերված խաչի երկճյուղ թևերը վերջանում են երեքական գնդիկներով՝ մեջը փոքր խաչաքանդակն իր հերթին հենվում է կլոր շրջանակի մեջ վերցված տասներկութերթանի վարդյակի վրա։

22. Կապտավուն գրանիտից պատրաստված հսկա մի խաչքար գտնվում է Կարմրաշեն գյուղի արևելյան կողմում (ավերակ ջրաղացի մոտ), կանգնեցված 990 թ. վարպետ Գրիգորիկի ձեռքով (որդի Գեորգայ) իր որդիների արևշատության համար[62]։ Խաչքարի բարձրությունը 3,66 մ է, լայնքը վերևում՝ 0,90 մ, ներքևում՝ 0,80 մ, հաստությունը՝ 0,30 մ (նկ. 70)։

Կեչառուի 886 թ. խաչքարի վարպետ Հովսեփից հետո Գրիգորիկը ցարդ մեզ ծանոթ խաչքար կերտող երրորդ հնագույն վարպետն է (երկբորդը՝ Հայր և որդի Դավիթ ու Ղուկաս վարպետներն են։

---

[58] Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1954, էջ 185, 429 և այլուր։

[59] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Տե՛ս նաև Ս. Բարխուդարյան, Դիվան... պ. III, էջ 243, որտեղ «ի հայրութեան Սարգսի» դարձել է «ի հայրապետութեան եաչկաւ», որն ակնհայտ սխալ է։

[60] Ա. Ն. Շահինյան, Հայկական խաչքարերի արվեստը..., «Էջմիածին», 1960, Զ, էջ 4։

[61] Ս. Բարխուդարյան, Դիվան..., II, էջ 96։

[62] Նույն տեղում, էջ 41—42։

Հուշարձանը կամարաձև ղաղաթով բարձ խոշոր սալ է, որի ճակատին պատկերված է եռանկյունաձև կտրվածք ունեցող խաչաքանդակ՝ հենված կլոր շրջանակի մեջ առնված ութթևանի վարդյակի վրա։ Խաչի թևերի երկճյուղ ծայրերը վերջանում են մեկական գնդիկով՝ մեջը փոս, կենտրոնում ունենալով եռագիծ շրջանակ։ Ներքևի և վերևի թևերի երկու կողմերում պատկերված են երեքական, չորսական արմավենիկի տերևներ[63]։

Արձանագրության «գոհ զարձանս» բառերի իմաստը դժվարանում ենք պարզել, թերևս խաչքարը կարող է ավելի հին ժամանակներում մեկ այլ կոթողի դեր կատարած լինել (նման դեպք ունենք Աղավնաձորից, երբ երկու վիշապարձաններ XI, XII դդ. վեր են ածվել խաչքարերի)։

23. 991 թվակիր արձանագրությամբ գեղաքանդակ խաչքար է գտնվում Գորիսի գավառագիտական թանգարանում (նկ. 73)։ Տաթևի վանքին վերագրվող այս խաչքարը պատրաստված է եղել հատկապես պատի մեջ ագուցելու նպատակով (այդ երևում է պոչուկ չունենալուց և թիկունքից անտաշ լինելուց)։ Նրա բարձրությունը 0,80 մ է, լայնքը՝ 0,64 մ, հաստությունը՝ 0,15 մ։ Արձանագրության համաձայն 991 թ. այն կերտել է ոմն Երիցակ վանական՝ տաճարի շինարարության առթիվ[64]։

Արձանագրության մեջ հիշատակված Երիցակը Ստ. Օրբելյանի Սյունյաց եպիսկոպոսների շարքում նշված Երիցակը չէ (վերջինս ապրել է VI դարում և կոչվում է «մեծ էղանամոս», «խաղաղնազգեստ և խստակրոն ճգնաւորս», «եպիսկոպոս Սիւնեաց» և այլն)[65], այլ Արծվանիկի (հիմա՝ Երեցվանիկ) X դ. մեկ այլ տաճարի[66] կառուցողը, և այդ խաչքարն էլ հիշյալ եկեղեցու շինության միակ հիշատակարան կոթողն է։

Ուշագրավ է վերջերս այս տաճարի ներսում հայտնաբերված X—XI դդ. արձանագիր խաչքարը, որի թիկունքին փորագրված է վեց տարբեր ծածկագրերով գրված 12 տողանի մի արձանագրություն։ Բացի հայերեն տառերից, օգտագործվել են նաև նշանագրեր[*]։

24. Կարճաղբյուրի (Վարդենիսի շրջան) 991 թվակիր խաչքարն իր կոմպոզիցիոն ձևերով ու զարդաքանդակներով հիշեցնում է Զորագյուղի 984 թվակիր խաչքարը։ Այստեղ ևս խաչի ներքևի թևից բարձրացող բուսական դրվագները միանում են նրա հորիզոնական թևերին։ Խաչի թևերի երկճյուղ ծայրերը նույնպես վերջանում են երեքական գնդիկներով, իսկ թևերի միացման բռնակը պսակված է կրկնակի շրջանաձև զարդերով[67]։

Խաչաքանդակը հանգչում է աստիճանաձև պատվանդանից վեր բարձրացող ուղղահայաց ձողի վրա։ Հուշարձանի բարձրությունը 1,60 մ է, լայնքը՝ 0,85—90 մ, հաստությունը՝ 0,22 մ (նկ. 71)։

Խաչքարի վերին եզրը ուղղանկյուն է, սակայն խաչաքանդակից վերև կազմում է կամարաձև շրջանակ, որի շնորհիվ վերևի երկու անկյուններում առաջացել են փոքրիկ հարթություններ։ Դրանցից հյուսիսայինի վրա փորագրված է հուշարձանի կանգնեցման թվականը.

Թ/ՈՒԻՆ/ Նխ /=991/[68]

25. Սարիղամիշում (այժմ՝ Թուրքիայի սահմաններում) առվի անցկացման մասին է պատմում 992 թ. բազալտ քարից կերտված, պարզ ու կոպիտ խաչքարի հետևյալ արձանագրությունը.

ԿԱՄ ԷՂԷՎ ՀԱՅՈ ՋՐԻ ՀԱՆԷԼ
ՋԱՌՈՒՍ, Վ/Ա/ՅՄՆ
ՄԵՂԱՑՆ,
ՅԱՆՈՒՆ
Ա/ՍՏՈՒԾՈ/Յ։ ՆԽԱ /=992/,
Ի ԹԱԳԱՒՈՐՈՒ-
ԹԵԱՆ ՍԻՆԱՔ-
ԷՐԵՄԱ, ԷՍ ԳՈՐ-
Ք ԿԱԿՆԵՑ/Ի/ ԽԱՉ-
Մ[69]։

---

[63] Ս. Բարխուդարյան, Դիվան..., III, էջ 41։

[64] Այս եկեղեցին գտնվում է Արծվանիկ գյուղից մոտ մեկ կմ. արևմուտք, ձորի մեջ։

[65] Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 242։

[66] Եկեղեցին նորոգվել է 1032 թ. ոմն Սարգսի կողմից և այդ առթիվ էլ նրա արևելյան պատին ագուցվել է մեկ այլ խաչքար՝ քանդակագործ վարպետ Դավթի ձեռքով։

[*] Տե՛ս Ա. Դ. Արզումանյան, Ա. Ն. Շահինյան, Արծվանիկի հայերեն նորահայտ ծածկագիրը և նրա վերծանությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 3։

[67] Խաչի թևերի միացման բռնակի շուրջը տեղադրված ճառագայթաձև մոտիվը հետագայում ևս հանդես է գալիս խաչքարերի և մետաղե խաչերի վրա՝ լուսատու իմաստով։

[68] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[69] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, էջ 52—53, Նժդեհ Մուշեղյան, Հայկական գրչական թանգարանային ժողովածուների, պրակ I, Երևան, 1964, էջ 51, որտեղ արձանագրությունը այլ շարադրությամբ է ընթերցված. գրչի կողմից խախտվել են ուղղագրական կանոնները։

խաչքարը կերտող և արձանագրությունը փորագրող վարպետը, ինչպես տեսնում ենք, չի փայլել գեթ բավարար գրագիտությամբ, բայց կարևորը հուշարձանի կանգնեցման շարժառիթն է՝ առվի կառուցումը։

Խաչքարի բարձրությունը 1,16 մ է, լայնքը՝ 0,72 մ, հաստությունը՝ 0,32—0,45 մ[70]։ Ուշագրավ է նաև այն, որ խաչաքանդակը ոչ մի հարակից զարդամոտիվ չունի։

26. Վարսեր գյուղի 995 թվակիր բազալտե խաչքարի հիշատակագրության մեջ նշված է, որ Կատրանիդե թագուհու հրամանով ոմն Խաչիկ ջրի առու է հանում և Քրիստոսից խնդրում օգնել իրեն։ Արձանագրությունը հետևյալն է.

ԵՍ ԽԱՉԻԿ ՈՐ ԱԾԻ ՋԱՌՈՒՍ Ի ՇԱՐԵՍ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱՏՐԱՆԻԴԵԻ
ՀԱՈՑ ԹԱԳՈՒՀՈՅ, Ք̅Ս̅ Ա̅Ծ̅ ՈԳՆԵ ԻՆՁ ՆԽԴ (=995)։

Խաչքարի բարձրությունը 1,51 մ է, լայնքը՝ 0,98—0,80 մ, հաստությունը՝ 0,19 մ (նկ. 74)։

27. Նորագյուղի ս. Քրիստափոր կոչվող խաչքարը (996 թ.) իր նախորդների նկատմամբ մի քայլ առաջ է թե՛ իր համաչափությամբ և թե՛ զարդաքանդակների համեմատաբար նուրբ մշակմամբ (նկ. 75)։ Կոթողի բարձրությունը 1,60 մ է, լայնքը վերևում՝ 0,97 մ, ներքևում՝ 0,78 մ, իսկ հաստությունը՝ 0,25 մ։ Խաչքարի հյուսիսային վերևի անկյունը կոտրված է։ Այն կերտված է կապտավուն բազալտից և իր կամարաձև շրջանակով նման է Գետաշենի, Կարճաղբյուրի, Ուշանի, Ջարինջայի, IX—XI դդ. այդ տիպի խաչքարերին։ Ինչպես խաչի երկճյուղ ծայրերը, այնպես էլ նրա բևեռն ու միջին տարածությունները զարդարված են ութթևանի փոքրիկ վարդյակներով, որպիսիք հետագա խաչքարերի նման զարդամոտիվներն են հիշեցնում։ Խաչի ներքևի և վերևի թևերից դուրս եկող և նույնանման վարդյակներով վերջավորվող զարդաքանդակները միանում են հորիզոնական թևերին։ Այս երևույթը հատուկ է հնագույն խաչքարերին։

Կոթողի խաչաքանդակը եզերված է շղթայաձև զարդով։ Ի տարբերություն նախորդների՝ այստեղ խաչաքանդակը հանգչում է տասնվեցթևանի ճառագայթաձև կլոր վարդյակի վրա, որի երկու կողմերում հինգ տողով փորագրված է նրա հետևյալ հիշատակագրությունը, որը բերում ենք աննշան ուղղումներով.

Ի Թ/ՈՒ/ԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ՀԱՈՑ ՆԽԵ /=996/. Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԿԱ, ԵՍ ԽԱՐԻՔ ԿԱՆԳՆԵՑԻ Ը/Զ/ՍՈՒՐԲ
ՔՐԻՍՏԱՓՈՐՍ. Ո/ՐՔ ԿԱՐԴԱՑՔ/ ԶԻՍ ՅԻՇԵՑԵ/Ք/[71]։

Արձանագրությունից պարզվում է, որ այն ս. Քրիստափորի անվան կոթող է, կանգնեցված ոմն Խարիքի կողմից՝ 996 թ.։

* * *

Այսպիսով, IX դ. վերջից մինչև X դ. վերջը, շուրջ 120 տարի ընդգրկող ժամանակաշրջանից, մեզ են հասել երեք տասնյակ ստույգ թվագրված խաչքարեր, որոնցից յոթը վերաբերում են IX դ. վերջերին (853—898 թթ.), իսկ հինգը՝ X դ. առաջին կեսին (906—925, 931 թթ.), X դ. երկրորդ կեսից՝ 18 խաչքար, իսկ X դ. երկրորդ կեսի յուրաքանչյուր տասնամյակից մեզ հասել է 2—7 խաչքար։

Այս խաչքարերի ձևերի մեջ կան որոշակի տարբերություններ, սակայն նրանցից տասնութն ունեն միևնույն ընդհանուր ձևը, որը 120 տարվա ընթացքում ունեցել է իր էվոլյուցիան, հղկվել և կատարելության է հասել։ Նույն ձևով զարգացել և փոխակերպվել են նաև խաչքարերի վրա փորագրված զարդաքանդակները։

Կարևոր է նշել, որ թվագրված խաչքարերի մեծ մասը ծագում է պատմական Սյունիքից (ներառյալ նաև Սևանի ավազանը) և ոճական տեսակետից ներկայացնում է մի դպրոց։ Մյուս խաչքարերը պատկանում են Շիրակ-Արագածոտնի դպրոցին։ Հետևաբար, տեղագրական առումով էլ այդ խաչքարերի մեծամասնության մերձավորությունը ակնհայտ է։

Այս ամենը հնարավորություն է տալիս քայլ առ քայլ հետևել խաչքարերի ձևերի և քանդակների հաջորդական զարգացման ընթացքին և գըտ-

---

[70] Այժմ ցուցադրված է Պատմության պետական թանգարանում։ 994 թ. մի խաչքարի բեկոր էլ կա Փաշինում (այժմ Ադրբեջանական ՍՍՀ կազմում)։

[71] Տե՛ս «Ազգագրական հանդես», գիրք 8, էջ 117։ Ա. Ն. Շամինյան, Հայկական խաչքարերի արվեստը, «Էջմիածին», Զ, 1960, էջ 48։ Ե. Մուշեղյան, Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ 1, էջ 51։ Նշված աշխատություններում արձանագրությունը թվագրված է 991 թվականով, որը սխալ է։ Այն ճիշտ է թվագրել Ս. Բարխուդարյանը (տե՛ս «Միջնադարյան հայ ճարտարապետները...», էջ 136 և «Դիվան հայ վիմագրության», գ. IV, էջ 14)։ Արձանագրության հինգերորդ տողի սկիզբը կտրված է, չի կարդացվում։ «Սուրբ» բառից առաջ փորագրված է «զս»։ Առաջարկում ենք այս հատվածը վերծանել «կանգնեցի զ(ս)ուրբ Քրիստափոր...»։



III (87). Բջնի խաչքար (Վահրամ Պահլավունու վերագրվող). 1031 թ.

[illegible]

նել դրանց փոխակերպությունների օրինաչափությունները, որոնք իրենց հերթին թույլ են տալիս որոշել VIII—X դդ. անթվակիր խաչքարերի կանգնեցման առավել հավանական ժամանակագրությունը։ Դրան մեծապես օգնում են նաև խաչքարերի վրա փորագրված (թեև անթվակիր) արձանագրությունները, որ բավական շատ են։

4. ԱՆԹՎԱԿԻՐ ՀՆԱԳՈՒՅՆ ԽԱՉՔԱՐԵՐ

Հայկական խաչքարերի մի տարատեսակն է 1976 թ. Դիտակում (Արտաշատի շրջան), անտիկ հնավայրի պեղումների ընթացքում Ֆ. Տեր-Մարտիրոսյանի հայտնաբերած փոքրիկ կոթողը (նկ. 43). կերտված է գորշ տուֆից։ Բարձրությունը 0,51 մ է (պոչուկից 15—20 սմ կոտրված է), լայնքը վերևում 0,30 մ է, ներքևում՝ 0,25 մ, հաստությունը՝ 0,06 մ։ Արձանագրությունը հետևյալն է.

ՔՍ̅ ԱԾ̅ ՀԻՇԵԱ ԶԻՍ ՅՈՐԺԱՄ ԳԱՍ ԱՐՔԱՅՈՒԹ...
ՅԱՀԵՂԻ ԱՒՈՒՐՆ ՈՂՈՐՄԵԱ ԻՆՁ ՍՄԱՅ։

Հնավայրում պահպանվել են նման բարդ անարձանագիր կոթողներ։ Անգեղակոթի գերեզմանատանը պահպանված են մոտավորապես նույն մեծության նման կոթողներ, որոնց մի երեսին երբեմն հավասարաթև խաչեր են փորված, իսկ թիկունքին՝ հավերժության խորհրդանշող քանդակներ, որոնց նմանները կան նույն տեղում XV դ. խաչքարերի զարդագրության մեջ։

Թալինի շրջանի Զարինջա գյուղի քառաբսիդ տաճարի ներսում, բեմի սեղանի մեջ դրված է կամարաձև շրջանակով եզերված մի խաչքար՝ կիսով չափ թաղված գետնի մեջ։ Պակասում է խաչքարի արձանագրության թվականը։

...ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ, ԵՍ ՇԱՊՈՂ
ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ..[72]։

Մարտունու շրջանի Գետաշեն գյուղի ծայրին, ժայռապատ բլրի գագաթին IX դ. կառուցված է Կոթա ս. Աստվածածին տաճարը[73], որի վերակառուցման ժամանակներում որպես շինանյութ օգտագործվել են IX—X դդ. մի քանի խաչքարեր, ջարդոտված վիճակում։ Դրանցից ուշագրավը տաճարի հարավարևմտյան ավանդատան մուտքի վրա ներսից դրված խաչքարն է, որը նվիրված է եղել V դ. հայ ազատագրական պայքարի մեծ զորավար Վարդան Մամիկոնյանին, որպես կոթող հիշատակարան (նկ. 49)։ Նրա երկաթագիր արձանագրությունը գրված է խաչի հորիզոնական թևերի վերևի երկու կողմերում, 7 տողի վրա.
ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՆԱՀԱՏԱԿ Ք[ՐԻՍՏՈՍ]Ի[74]

Խաչքարի բարձրությունը 1,30 մ է, լայնքը վերևում՝ 0,72 մ, մեջտեղում՝ 0,78 մ, ներքևում՝ 0,67 մ, հաստությունը՝ 0,22 մ[75]։ Կերտված է կարմրավուն քարից։ Նրա վրա ամբողջ երեսով պատկերված է մոնումենտալ մի խաչաքանդակ, որի թևերի երկճյուղ ծայրերը վերջանում են ծաղկազարդ վարդյակներով։ Խաչի վերևի թևի երկու կողմերից իջնում են մշակված հատիկներով խաղողի մեկական ողկույզ յուրահատուկ տերևաքանդակներով, իսկ ներքևի թևի երկու կողմերից բարձրանում են եռանկյունաձև կտրվածք ունեցող բուսական հնգական քանդակներ։ Խաչից ներքև եռաթև քանդակ է պատկերված։ Այս խաչքարը Վարդան Մամիկոնյանին նվիրված առայժմ հընագույն արձանագրված կոթողային հուշարձանն է, կերտված IX դ. երկրորդ կեսին[76]։

IX դ. պատկանող մեկ այլ խաչքար՝ բազալտ քարից դրել են նույն տաճարի հյուսիսարևմտյան ավանդատան բարավորի փոխարեն (նկ. 51)։ Նրա բարձրությունը 1,37 մ է, լայնքը՝ 0,72 մ, հաստությունը՝ 0,39 մ։

Պետք է ենթադրել, որ վերոհիշյալ երկու խաչքարերն էլ ժամանակին կանգնած են եղել առանձին կամ դրված են եղել տաճարի կամ մեկ այլ շինության պատի մեջ, համապատասխան դիրքով։ Դա սովորական երևույթ էր Սևանի ավազանում, որտեղ IX—X դդ. պատկանող գրեթե բոլոր եկեղեցիների շուրջը և պատերի մեջ դրված են եղել նույն դարին բնորոշ խաչքարեր։

IX դ. են պատկանում Մաքենյաց վանքի և

---

[72] Վերցնում ենք մեր ժողովածուից։ Խաչքարի կերտման ժամանակը մինչև X դարն է։ Տաճարն, ըստ Թ. Թորամանյանի և Ստ. Մնացականյանի, կերտվել է X դարում (տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր..., հ. 2, էջ 175։ Նաև՝ «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 120)։

[73] Աստվածածին տաճարը կառուցվել է 851—901 թթ. և այդ ժամանակներում էլ կերտվել ու կանգնեցվել են վերոհիշյալ խաչքարերը (տե՛ս Ստ. Օրբելյան. Պատմութիւն..., էջ 181)։

[74] Ս. Բարխուդարյան. Դիվան..., պ. II, էջ 267։

[75] Ամենայն հավանականությամբ խաչքարը ներքևում պոչուկ է ունեցել, որը տաճարի վերակառուցման ժամանակ կտրելով հարմարեցրել են այժմյան տեղում։

[76] Ստ. Մնացականյանը իրավացիորեն IX դ. է վերագրում այս խաչքարը (տե՛ս նրա «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը», էջ 175, նկ. 42)։ Այս խաչքարի արձանագրության մասին հայտնել ենք Ս. Բարխուդարյանին։

Վարդենիկի հինգ խաչքարերը, որոնցից այստեղ ներկայացնում ենք երկուսը (նկ. 50, 56)։

Կոթավանքում պահպանվել է X դ. հնագույն խաչքարի հետաքրքիր մի բեկոր, որը դարձյալ օգտագործվել է տաճարի հարավարևելյան ավանդատնում, որպես մուտքի ծածկի սալքար։ Ջարդոտված այս խաչքարի բեկորի վրա բարեբախտաբար պահպանվել է նրա պոչուկը, որից պարզվում է, որ կոթողը մի ժամանակ կանգնեցված է եղել պատվանդանի վրա։ Խաչքարի ներքևի մասում պահպանվել է հնատիպ արձանագրության միայն մի մասը, հետևյալ բովանդակությամբ.

ԿԱՄԵՑԱՒ ԸՆԿՂՄԵԼ...
ՄԻՆ ԵՎ ՋԱՒՐՈՒԹԵԱՄԲ /ԱԾԱԾ/-
ՆԻՍ ԵՒ ՍՐԲՈՑՆ ԳԵՈՐԳ/Ա/
ԵՍ ՎԱՀԱՆԻԿ ԾԱՌԱ/Յ Ա̅Յ̅ Կ/-
ԱՆԳՆԵՑԻ ՋՍՈՒՐԲ /ՆՇ/ԱՆՍ/[77]

Այս խաչքարի բարձրությունը 0,96 մ է, լայնքը՝ 0,63 մ, հաստությունը՝ 0,18—2,20 մ։ Արձանագրության սկզբում, խաչքարի կողքին նկատվում է թույլ «Ն» տառը, որը կարող է նրա թվականը (400) լինել, իսկ տասնավորը և միավորը չեն նկատվում, եթե առհասարակ եղել են այդպիսիք։

Զույգ աղավնիների քանդակազարդում ունի Սովետաշենի (Արարատի շրջան) միջին մեծության ձվաձև խաչքարը (նկ. 62)։ Պատկանում է IX դ.։ բարձրությունը 1,50 մ է, լայնքը՝ 1,0 մ, հաստությունը՝ 0,25 մ։ Խաչի թևերի արանքում փորագրված է.

ԵՍ ԴԱՒԻԹ ԿԱՆԳՆԵՑԻ ՋՈՅՎԱ Թ /?/
ՆԽԱ ՀԱՆԳՈ... Ք/ՐԻՍՏՈ/Ս[78] /?/

Եթե «ՆԽԱ»-ն թվականն է, այդ դեպքում կունենանք 992 թ.։ Անկախ դրանից էլ խաչքարը IX—X դդ. կոթող է, կանգնեցված ոմն Դավթի կողմից։

IX—X դդ. պատկանող այլ արձանագիր խաչքարեր ու որմնախաչեր կան նաև Մարտունու, Կամոյի, Ղափանի, Թալինի, Վայոց ձորի, Սիսիանի, Գորիսի շրջաններում, Ամարասում (Լեռնային Ղարաբաղ) և այլուր։ Բացի դրանցից, մեզ հասել են նաև հարյուրից ավելի խաչքարեր, որոնք ընդհանրապես չունեն վիմական արձանագրություններ, սակայն պատկանում են VIII—X դարերին։

* * *

Վերևում մենք նկարագրեցինք IX—X դդ. թվագրված խաչքարերը, որպեսզի հաստատուն ելակետ ունենանք նաև չթվագրված, բայց հնագույն խաչքարերի ժամանակը որոշելիս ելնելու դրանց առանձնահատկություններից։

Անարձանագիր հնագույն խաչքարերը հանդիպում են սկսած VIII դ.։ Այդ դարին ենք վերագրում Ղուշչի և Շատախի գյուղերից (այժմ՝ Ադրբեջանական ՍՍՀ) 4—5 կմ դեպի հյուսիս գտնվող գրեթե անտաշ քարից կերտված խաչքարը (նկ. 46)։ Այս, Արենիի, Գողթի, Գառնիի 879 թվակիր հայտնի խաչքարի նմանօրինակ[79] (նկ. 46, 52, 55) այլ կոթողներից պարզվում է, որ խաչքարային կոթողների բազմախաչ կոմպոզիցիան հանդես է գալիս VIII—IX դդ. խաչքարերի ծագման օրից։ Ղուշչիի հիշյալ խաչքարի գլխավոր խաչաքանդակի հորիզոնական թևերից ներքև քանդակված են միանման, քիչ ավելի փոքր խաչեր, որոնց թևերի երկճյուղ ծայրերը վերջանում են մեկական գնդիկներով՝ որպես գլխավոր հատկանիշ VIII—IX դարերի խաչքարերի։ Խաչքարի բարձրությունը 2,0 մ է, լայնքը՝ 1,0 մ, հաստությունը՝ 0,25—0,35 մ։

Աշտարակի շրջանի Արուճ գյուղի սահմաններում է գտնվում վարդագույն տուֆի հսկա ժայռաբեկորից կերտված հնագույն մի խաչքար, որի խաչի հորիզոնական թևերից ներքև պատկերված բուսական դրվագների նմանակն ունենք IV—VII դդ. քառանիստ կոթողների, իսկ շրջանակի կլոր զարդերը՝ Թալինի և Արուճի VII դ. տաճարների վրա։ Ժայռաբեկորի ընդհանուր բարձրությունը 2,0 մ է, լայնությունը՝ 3,0 մ, հաստությունը՝ 0,45, ընդ որում բուն խաչի բարձրությունը 1,65 մ է, իսկ լայնքը՝ 1,10 մ։ Խաչքարի հիշյալ զարդամոտիվների համեմատությունը ճարտարապետական հուշարձանների IV—VII դդ. զարդարվեստի հետ, մեզ թույլ է տալիս այն համարելու VIII—IX դ. գործ։ Գառնիից բացի, մեկից ավելի հնագույն խաչաքանդակների հանդիպում ենք Գնիշիկի, Ակունքի, Անիի շրջանի, Ղալաքենդի ու Փառիսոսի (Ադրբեջանական ՍՍՀ) VIII—IX դդ. խաչքարերի վրա։

Փառիսոսի հնագույն տաճարներից մեկի շուրջը կան չորս հնագույն խաչքարեր, կերտված բազալտից ու վարդագույն գրանիտից։ Դրանցից մեկի վրա պատկերված է երկարավուն մի խաչ, որի լայնորեն բացվող թևերի երկճյուղ ծայրերը վերջանում են մեկական գնդիկով։ Ուշագրավն այստեղ այն է, որ խաչաքանդակը օղակող շրջանակը զարդարված է լուսապսակով և ճառագայթաձև մոտիվներով, խորհրդանշելով խաչը որպես լուսատու[80] (նկ. 47)։ Ագաթանգեղոսի մոտ հանդիպող «խաչն լուսոյ» արտահայտությունը[81] հավանաբար վերաբերում է խաչի հիշյալ հանգամանքին։ Նման մոտիվներով են զարդարված IX—X դդ. մի շարք խաչքարերի թևերի միացման բևեռները (նկ. 50, 70, 71)։ Խաչերի այսպիսի ընդհանուր գաղափարական բովանդակության մասին է վկայում նաև Մովսես Կաղանկատվացին՝ արեգակը պատկերելով խաչի տեսքով[82]։

---

[77] Ս. Բարխուդարյան, Դիվան..., պ. IV, էջ 266։

[78] Վերցնում ենք մեր հավաքածուից։ Արձանագրության՝ «Ես Դավիթ կանգնեցի» բառերից հետո եղած մասի վերծանությունը չենք կարող վերջնական համարել։

[79] Իրավացի է պրոֆ. Բ. Առաքելյանը, երբ Գառնիի հնագույն խաչքարերը, որոնք ընդհանրապես զուրկ են բուսական մոտիվներից, IX դ. է թվագրում (տես՝ Б. Аракелян. Гарни, I. Результаты раскопок 1949—1950гг., էջ 36)։

Այդ իմաստով չի կարելի պատահական համարել Դիլիջանի և Վ. Թալինի եզակի կլոր խաչքարերը, որոնք առնվազն VIII դ. գործ են։ Դրանցից առաջինը գտնվում է «Արտազանց տեղեր» կոչվող վայրի հին գերեզմանատանը դրված փոքրիկ խորանարդաձև պատվանդանի վրա (բարձրությունը 0,60 մ է, լայնքը՝ 0,50 մ, հաստությունը՝ 0,30 մ), իսկ երկրորդը Վ. Թալինի «Սանդուխտ կուսի» ուխտատեղիում դրված անպատվանդան կլոր խաչքարն է՝ դարձյալ VIII դ. գործ (նկ. 44)։ Սրա տրամագիծը 1,82 մ է, հաստությունը՝ 0,54 մ։ Կոթողի վրա պատկերված է խոշոր համաչափաթև մի խաչ, որի թևերի երկճյուղ ծայրերին քանդակված է մեկական գնդիկ, իսկ մեկն էլ՝ թևերի հատման կենտրոնում։ Խաչի թևերի արանքում յուրահատուկ տերևաքանդակները հիշեցնում են միաժամանակ նաև կրակի բոցեր[83]։ Խաչն ամբողջությամբ ներկայացնում է պարանահյուս մի զարդամոտիվ և մշակման ձևերով հիշեցնում է մետաղագործության, քան թե քարակոփության արվեստը։ VIII—X դդ. խաչքարերով հարուստ է հատկապես Ն. Թալինը։ Այստեղ, բացի նշվածներից (882 թ., 975 թ.) կան նաև բազմաթիվ այլ անարձանագիր խաչքարեր, որոնցից առանձնապես ուշագրության արժանի են երկուսը։ Դրանցից առաջինը վարդագույն տուֆից կերտված, բրգաձև մոնումենտալ խաչքար է՝ փոքրիկ արձանագրությամբ[84] (նկ. 67)։ Բարձրությունը՝ 2,60 մ, լայնքը (վերևում՝ սուրանկյուն) ներքևում՝ 1,80 մ, հաստությունը՝ 0,25 մ։ Երկրորդը՝ քանդակազարդ ու ավելի կատարյալ խաչքար է (նկ. 48) և, ամենայն հավանականությամբ, պատկանում է VIII—IX դդ.։ Բարձրությունը՝ 2,80 մ, վերևում կամարաձև է և դեպի ներքև քիչ նեղացող, լայնությունը վերևի ամենալայն տեղում 1,60 մ է, իսկ ներքևում՝ 1,07 մ, հաստությունը՝ 0,30 մ։ Թիկունքը անհարթ է։ Ամրացված է ժայռոտ գետնի մեջ (նկ. 41)։

Ուշագրավ է Զորաշենի (Անիի շրջան) հնագույն խաչքարը, որի խաչաքանդակի մեջ պատկերված է երկրորդ խաչը և նրա տակ՝ երկու վարդյակ (երկու վարդյակով խաչքար կա նաև Ջարխեչյայում XI—XII դդ.)։ Խաչքարի շրջանակի ոլորաձև զարդաձևերը հատուկ են X դ. վերջի և XI դարասկզբի արվեստին, և այդ իմաստով էլ կարելի է այն համարել Հավուց թառի և Հառիճավանքի XI դ. խաչքարերի նախատիպը։

IX—X դդ. պետք է թվագրել Վարդենիկի, Մաքենյաց վանքի[85] ու նրա շրջակայքի, Վանեվանի, Քոլատակի Աստվածածնի տաճարի, Նոյեմբերյանի, Տավրադեղցի բնակատեղի, Սաթերի, Գետաշենի, Ջարխեչայի, Վ. Թալինի, Ն. Թալինի, Ակունքի, Գնիշիկի և մի շարք այլ հնագույն խաչքարեր։

Իրավացի է Գ. Հովսեփյանը, երբ էջմիածնի Գայանե վանքի աղավնազարդ խաչքարը վերագրում է X դարին (նկ. 72)։ Բայց նա, միաժամանակ, մեզ անհայտ պատճառով՝ էջմիածնի վերոհիշյալ խաչքարի մեկ այլ նմանօրինակը, որը գտնվում է Մանկուսում, և մի ինչ-որ խաչքար Գառնիում (ցույց չի տրված) ենթադրաբար վերագրում է VII դ. և ավելի վաղ շրջանի[86]։ Սակայն մենք առայժմ ոչ մի հիմք չունենք այդ խաչքարերը նույնիսկ VII դ. վերագրելու։

---

[80] Խաչաքանդակի կենտրոնական միացման բևեռների այս լուսապսակը Հայաստանում տարածվել է VIII—XII դդ., եթե ոչ ավելի վաղ։ Այն մեծ տարածում է ունեցել VIII—X դդ. իռլանդական և շոտլանդական խաչարձանների արվեստում (տե՛ս *Françoise Henry*, Irish High Crosses, photos 1, 2, 3, 6, 7, 9, 21, 23—5 etc, *Stewart Criden*, The Early Christian, photos 14. 15. 22, 2, 4. 25, *Maire and Liam de Paor*, Early Christian Ireland, photos 13, 36, 37, 55, 56 atc).

[81] Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, էջ 375։ «Խաչն լուսոյ» արտահայտությանը հանդիպում ենք նաև խաչքարերի վիմական արձանագրություններում։

[82] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Թարգմանությունը Վարագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 143։

[83] Բոցի նմանեցված քանդակներ ունեն նաև նույն վայրում գտնվող երկարավուն 2 խաչքարերը (նկ. 66)։

[84] Խաչքարի արձանագրությունը դժվար ընթեռնելի է, բայց IX—X դդ. ուշ չէ։

[85] Գ. Հովսեփյան, Հավուց Թառ «Ամենափրկիչը»..., էջ 47, 50, նկ. 27։

[86] Նույն տեղում։

* * *

Ամփոփելով հնագույն խաչքարերին վերաբերող արձանագրական տվյալները՝ հաշվի առնելով դրանց զարդարվեստի և հատկապես խիստ բնորոշ խաչաքանդակային մոտիվների աստիճանական զարգացման ակնհայտ օրինաչափություններն ու կոմպոզիցիոն ձևերը, հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Վաղ միջնադարյան Հայաստանում VII—VIII դդ. նորաստեղծ խաչքարային կոթողները տիրապետող են դառնում IX դարում։

2. Խաչքարային կոթողների զարգացման ընթացքը առավել ցայտուն դրսևորվում է նրանց քանդակային և հատկապես խաչաքանդակային մոտիվների աստիճանական զարգացման և փոխակերպության հաջորդական փուլերում։

3. Հնագույն խաչքարերի մեջ կրկնվող խաչքարեր գրեթե չկան, նրանցում ընդհանուրը քանդակային մոտիվների բովանդակության նմանությունն է խաչաքանդակի աստիճանական և հետևողական զարգացման իրենց յուրահատուկ գծերով։ Հենց այդ էլ հայկական քանդակագործական արվեստի առանձնահատկություններից մեկն է դեռևս անտիկ ժամանակաշրջանից։

4. VIII—X դարերի խաչքարերի վրա հին հավասարաթև խաչաքանդակները տեղի են տալիս անհավասարաթև խաչաքանդակներին։

5. Բացի այդ, հնագույն խաչքարերի վրա խաչի թևերի երկճյուղ ծայրերը վերջանում են մեկական գնդիկով և երբեմն էլ դրանք վեր են ածվում կլոր, փոքրիկ վարդյակների*, իսկ X դ. որպես զարգացում՝ դրանց կողքին հանդես են գալիս երեքական գնդիկներով վերջավորվող խաչաթևեր, որպիսիք հետագա դարերում դառնում են սրածայր բողբոջաձև քանդակներ (նկ. 64—66, 68, 71—73**)։ Աստիճանական զարգացումը նկատվում է նաև խաչքարերի քանդակային մյուս մանրամասներում, հատկապես խաղողի ու նռան զարդաձևերում։ Հնագույն խաչքարերի վրա այդ քանդակային մոտիվները ավելի պարզունակ են, խաղողն ու նուռը պատկերվում են առավելապես ուրվագծերով։ X դ. արդեն դրանք մշակվում են, իսկ հետագա դարերում՝ անճանաչելիորեն փոխվում։

6. Խաչքարերը սովորաբար կրելով իրենց վրա հուշասյուն կոթողների և թևավոր խաչերի համաչափ մոտիվները, միաժամանակ յուրացնում են մի շարք քանդակային (առանձնապես բուսական ու երկրաչափական) այնպիսի զարդաձևեր, որոնք հանդես են գալիս հնագույն քառանիստ կոթողների, բազիլիկ տաճարների և այլ հուշարձանների վրա (նկ. 34, 35, 123)։ Խաղողի և նռան քանդակների պատկերումը խաչքարերի վրա բոլորովին էլ պատահական չէ, քանի որ դրանք խորհրդանշելով պտղաբերության, ծաղկման, զարգացման և բերրիության հեթանոսական հնագույն հասկացողությունները[87], քրիստոնեության շրջանում կապվում են Քրիստոսի արյան, գինու և այլ խորհրդանիշների հետ։ Այդ իմաստով հասկանալի է դառնում նաև մի շարք խաչքարերի վրա հանդես եկող նշատերև քանդակների, նաև, ձիթենու և արմավենու տերևների գաղափարային բովանդակությունը՝ դարձյալ կապված հեթանոսական ու քրիստոնեական հավատալիքների հետ։

7. Խաչերի տարբեր ձևերը (հավասարաթև և անհավասարաթև) հանդես են գալիս դեռևս էնեոլիթյան, բրոնզեդարյան և անտիկ դարաշրջաններում։ Ինչ վերաբերում է քրիստոնեության շրջանի հնագույն խաչերի ձևերին, ապա պետք է նշել, որ, այսպես կոչված, հավասարաթև (Groix Grecque) և անհավասարաթև խաչերը (Groix Latine) Հայաստանում հանդես են գալիս միաժամանակ և հաճախ միևնույն հուշարձանի վրա։ Այսպես. նրանք երկուսն էլ կողք-կողքի հանդես են գալիս Քասաղի, Կուրթանի, Գառնիի, ս. Սիմոնի (Սիրիա, էլ-Սամաան) բազիլիկ տաճարների, ինչպես նաև Ագարակի, Օձունի, Քարաբերդի և այլ բազմաթիվ հնագույն կոթողների վրա։ Նայած թե տվյալ խաչը կամ խաչաքանդակը ո՞րտեղ և ի՞նչ նպատակով է արված, ըստ այնմ էլ դրանք լինում են հավասարաթև և ոչ հավասարաթև (համաչափ)։

VII դ. սկսած Հայաստանում ծաղկում են ապրում անհավասարաթև խաչաքանդակները թե՛ տաճարների զարդարվեստում և թե՛, մանավանդ հետագայում, խաչքարերի վրա։

8. VIII—IX դարերում գերազանցապես խաչի պատկերը կրող հնագույն խաչքարերի և նրանց քանդակային ու կոմպոզիցիոն ձևերի զարգաց-

---

* Նկ. 44. 46—59, 61—63 և այլն։

** Տե՛ս նաև նկ. 76, 77, 81, 88—91, 94 և այլն։

[87] Աս. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 181, 186, 187 և այլն։

ման շնորհիվ X դ. արդեն պարզորոշ ուրվագծվում են խաչքարային արվեստի հետագա զարգացման միտումները, անցումն անզարդ խաչքարերից դեպի զարդաքանդակվածը, ավելի բարդ մոտիվներն ու կոմպոզիցիոն ձևերը։ Եթե հնագույն խաչքարերի վրա պատկերված խաչաքանդակները համեմատաբար պարզ են ու մեծ մասամբ զարդարված ոչ հոծ, երբեմն նույնիսկ աղքատիկ, բայց ընդհանրացված խոշոր ձևերի քանդակներով, ապա X դ. արդեն զարդաքանդակվում են ոչ միայն խաչերը, որոնք առնվում են ուղղանկյուն շրջանակների մեջ, այլև նրանց շրջանակները։ Քանդակները զգալիորեն նրբանում ու մանրանում են, իսկ խաչքարերը դառնում են ուղղանկյուն։

9. X դարում հաճախակի է դառնում խաչքարերի վրա արձանագրություններ փորագրելը։ Արձանագրություններով ծածկվում են ոչ միայն նրանց թիկունքները, այլև երեսները, խաչաքանդակի թևերի արանքները, նույնիսկ կողերը, բացի պատվանդաններից։ Այդ արձանագրությունները պատմամշակութային կարևոր սկզբնաղբյուրներ են։ Հնագույն խաչքարերի վրա քիչ չեն հայկական տառաձևերի հիանալի օրինակները։

10. X դ. անհամեմատ ընդարձակվում են խաչքարերի կանգնեցման նպատակներն ու շարժառիթները, խաչքարերը հետագա դարերում դառնում են համընդհանուր նշանակություն ունեցող և առավել տարածված հուշարձաններ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ XI—XIII ԴԴ.

XI—XIII դդ. խաչքարերի լայն տարածման, դրանց արվեստի որակական փոփոխությունների և կատարելագործման համեմատ՝ ավելանում է պատվիրատուների թիվը, բազմազան է դառնում վերջիններիս սոցիալական կազմը։ Նշված ժամանակամիջոցում հասարակության տարբեր դասակարգերի ու խավերի ներկայացուցիչներ կանգնեցնում են խաչքարեր ամենատարբեր նպատակներով։ Խաչքարը դառնում է համահայկական, ամենաժողովրդական կոթողային հուշարձանը։

XI—XIII դդ. աննախընթաց վերելք են ապրում խաչքարերի կատարման տեխնիկան, կառուցողական-հորինվածքային ձևերը և գեղարվեստական ձևավորումը։

Սակայն XI դ. երկրորդ կեսից Հայաստանում հաստատված սելջուկյան տիրապետության հետևանքով շինարարական ու մշակութային կյանքը առժամանակ կանգ է առնում, որը հետագայում Զաքարյանների իշխանության շրջանում, վերածնունդ է ապրում, առնչվելով երկրի տնտեսական, սոցիալական, քաղաքական, ռազմական ու մշակութային կյանքի գրեթե բոլոր բնագավառների վերելքի հետ։ XII դ. վերջերին և XIII դ. սկզբին երկրում վերսկսված խաչքարերի զարգացման բուռն ընթացքը շարունակվում է նաև XIV դ. երկրորդ կեսում, երբ խոշոր ծավալի շինարարական աշխատանքներն ընդհատվել էին։

XIII դարից մեզ հասել են քանդակագործական կատարելության տեսակետից թվով ամենից շատ և իրենց արվեստով հիացմունք առաջացնող խաչքարային կոթողներ՝ իրենց բոլոր տարատեսակներով։

XIV դ. սկզբին երկրում շինարարական ստեղծագործական աշխատանքները անկում ապրեցին։ Բացառություն կազմեցին Սյունիքը և Վայոց ձորը, որտեղ մինչև XIV դ. կեսը, Պռոշյան և Օրբելյան իշխանների՝ մոնղոլների նկատմամբ վարած ճկուն քաղաքականության շնորհիվ, ոչ միայն չդադարեց շինարարական ու մշակութային կյանքը, այլև զգալի հաջողություններ ունեցավ։ Այդ ժամանակաշրջանից մեզ են հասել Մոմիկի, Գրիգորիկի և այլ շնորհալի ճարտարապետների ու քանդակագործ-վարպետների կառուցած և կերտած բազմաթիվ հուշարձաններ։

XVI—XVII դարերում, անգամ հայկական պետականության բացակայության պայմաններում, խաչքարային արվեստը շարունակում է զարգանալ։ Այդ շրջանի խաչքարերը մեր մշակութային ու քանդակագործական արվեստի պատմության մեջ ունեն յուրահատուկ տեղ։ Վերջին շրջանում խաչքարերը գերազանցապես հանդես են գալիս որպես մահարձանային հուշարձաններ (տապանաքարերից անկախ)։

Հայաստանում խաչքարեր կերտվել են երկրում գոյություն ունեցող գրեթե բոլոր տեսակի ու գույնի քարերից՝ սկսած բազմերանգ ու բազմապիսի տուֆից, վերջացրած բազալտով, գրանիտով, ֆելզիտով ու մարմարով, 0,20-ից մինչև 5,0 մ բարձրությամբ[1], իսկ որմնափակ խաչքարերի բարձրությունը հասնում է մինչև յոթ մետրի։

---

[1] *XX դարասկզբին վանեցի ոսկերիչները նույնիսկ արծաթից խաչքարատիպ հուշանվեր են պատրաստել, որն այժմ ցուցադրված է Էջմիածնի Մայր տաճարի թանգարանում։*

1. ԽԱՉՔԱՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XI—XIII դարերում հիմնականում ավարտվում է խաչքարային կոթողների կառուցվածքային, քանդակազարդման հորինվածքի և ոճական առանձնահատկությունների զարգացման վերընթացը։ Իրենց ձևավորման և տիպականացման ավարտին հասած խաչքարերն ըստ կառուցվածքային ձևերի կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի.

1. Միակտոր քարերից կերտված խաչքարեր, որոնք իրենց ստորին մասով ամրացվում են գետնին։ Այդպիսիք երբեմն ունենում են ուղղանկյուն կամ կամարաձև գագաթ, վերևում՝ քիչ լայն, իսկ դեպի ներքև՝ նեղացող տեսքով (նկ. 45—48, 52—55)։ Հնագույն խաչքարերի շարքում կան նաև բազմաթիվ կոպիտ ու կիսատաշ քարերից պատրաստված և երբեմն էլ անհամաչափ ձևեր ունեցող խաչքարեր (նկ. 47, 62, 67ա)։

2. IX—X դդ. սկսած խաչքարերը հետզհետե ներքևի մասում արված հատուկ պոչուկներով ամրացվել են միակտոր քարերից կերտված խորանարդաձև պատվանդանների վրա։ Իբրև պատվանդան ծառայել են նաև բնական ժայռերն ու անտաշ, կոպիտ քարերը։ Այդպիսիք օգտագործվել են նաև հետագա դարերում (նկ. 50, 57—59, 70, 74 և այլն)։

3. Նշված ժամանակաշրջանում խաչքարեր են ագուցում տաճարների պատերի մեջ (որմնախաչ), սկզբում երեսները դեպի արևմուտք ուղղված, իսկ հետագայում՝ նաև այլ դիրքավորմամբ։ Սրանք սովորաբար պոչուկներ չեն ունենում և պատրաստվում են հատկապես պատերի վրա դրվելու կամ ագուցվելու նպատակով՝ տվյալ կառույցի շինարարությանը զուգահեռ։ Վերջին դեպքում դրանց թիկունքները սրբատաշ չեն լինում։ Տաճարների պատերի մեջ որմնախաչեր ագուցելու սովորությունը գալիս է դեռևս IX դ. և մեծ չափեր է ընդունում հատկապես X—XI դդ. (նկ. 61, 66, 73, 76)։

4. XI դ. սկզբին խաչքարեր են կանգնեցվում ոչ միայն միակտոր, այլև աստիճանաձև պատվանդանների վրա։

5. Խաչքարաշինության հետագա զարգացման ընթացքում, XI դ. առաջին կեսից սկսած, երևան են գալիս ճարտարապետական ավելի բարդ և համեմատաբար խոշոր չափերի խաչքարեր, այսպես կոչված, որմնափակ խաչքարերը։ Սրանք ունենում են սովորական խաչքարերի ձևերը, սակայն ամբողջովին առնվում են սրբատաշ քարով ու կրաշաղախով շարված խորշաձև ճարտարապետական կառուցվածքի մեջ։ Վերջինս իր մեջ ընդգրկում է մեկ և ավելի խաչքար և ունենում երկթեք ու միաթեք ծածկ։

Որմնափակ խաչքարերը երբեմն զետեղվում են նաև հուշարձանների պատերի մեջ։ Որմնափակ խաչքարերը մեծ տարածում են ունեցել XI—XIV դդ., իսկ XIV դ. երկրորդ կեսից գրեթե դադարում է նրանց շինարարությունը։ Դրանցից առավել նշանավոր են Խծկոնքի (1031, 1034)[2], Գեմզաշենի (1036), Հացի գյուղի (Լ. Ղարաբաղ, 1071 թ.), Անիի (1184), Կոշի (1195), Մրենի (XIII դ.), Գառնիի, Հավուց թառի, Գոմուրի, Կարմրաշենի, Քանաքեռի, Հովհաննավանքի, Սաղմոսավանքի, Աշտարակի, Մոավյանի (գործ՝ Մխիթարիչ Օշականեցու), Լոր գյուղի (գործ՝ վարպետ Մամիկի) XIII դ. կոթողները[3] (նկ. 85—86, 153—155, 6, 158, 164, 179 և այլն)։

6. XI—XII դդ. սկսած առաջանում են քիվավոր խաչքարերը, իսկ երբեմն էլ քիվը պատրաստվում է առանձին քարից և ամրացվում խաչքարի վրա՝ երկաթե գամերի օգնությամբ։ Շատ հաճախ քիվերը խաչքարերի վրա ամրացվում են նաև վերջիններիս գագաթին արված հատուկ ելուստների միջոցով (Հաղբատ, Սանահին, Դսեղ, Մաստարա և այլն)։ Քարերի միակցման այս երկու ձևերն էլ Հայաստանում հայտնի էին դեռևս անտիկ ժամանակաշրջանից։ Բացառված չէ, որ Գեղամա լեռների վերևում հիշատակված հուշային կոթողների առանձին մասերն իրար ամրացված են եղել փայտե ամրանների միջոցով։

Քիվը խաչքարին հաղորդում է կոթողի ավելի կատարյալ կերպար, իսկ նրա վրա շատ հաճախ փորագրվում են արձանագրություններ, ինչպես նաև բուսական, երկրաչափական, կենցաղային գեղեցիկ դրվագներ, պատկերաքանդակներ և այլն։

7. XII դ. հանդես են գալիս խմբական խաչքարերը։ Սրանք երբեմն կանգնեցվում են մեկ ընդհանուր կամ կողք-կողքի դրված պատվանդանների վրա, կերտված միաժամանակ, բայց կան նաև այնպիսիք, որոնք ավելացվում են հետագայում՝ նույն տոհմի ներկայացուցիչների կողմից։ Երբեմն մի խումբ մարդիկ, կամակից լինե-

---

[2] Տե՛ս «Ազգագրական հանդես», գիրք Ա, Շուշի, 1896, էջ 45։

[3] XIV դ. ուշագրավ որմնափակ խաչքարեր կան Եղեգիսում (այժմ՝ Ալայազ, Եղեգնաձորի շրջան) և այլուր։

լով, խաչքարեր են կանգնեցրել իրենց սիրելի հանգուցյալների հիշատակին (Հադրութ, Մարց, Հավուց Թառ, Կեչառիս և այլուր)։

8. Բնական ժայռաբեկորներից կերտված և երբեմն էլ ավելի խոշոր ժայռերի վրա քանդակված խաչքարերի հանդիպում ենք Փառխոսում, Արուճում, Ն. Թալինում, Վայոց ձորում, Վարդենիսի շրջանում, Գեղարդում, Գառնիում և այլ վայրերում՝ սկսած VIII—IX դդ. մինչև ուշ միջնադար։

9. Մեզ են հասել մի քանի շրջանաձև խաչքարեր, որոնցից ուշադրության արժանի են Վ. Թալինի «Մանդուխտ կույս» ուխտատեղիում զետեղված VIII—IX դդ. խոշոր և անպատվանդան խաչքարը, Դիլիջանում «Արալանց տեղեր» կոչված վայրի փոքրիկ, պատվանդանավոր խաչքարերը և այլն։

10. Տարբեր գույնի ու տեսակի քարերից պատրաստված խաչքարեր կան, որոնք քարաբեկորների պատահական ընտրությամբ և դրանք կերտող վարպետների ճաշակի համաձայն ստացել են արտասովոր ձևեր։ Այդպիսիներից հիշատակության արժանի են Ն. Թալինի բրգաձև հնագույն խաչքարը, Սարիղամիշի, Տեկորի, Շինուհայրի X—XIII դդ. խաչքարերը և այլն։

11. Երկթեք, սրածայր գագաթներով ու քիվերով խաչքարեր կան Նորագյուղում, Հոռոմայրում, Այգեհովիտում և այլուր։ Այդպիսիք հատուկ են XIII դ. և հետագա շրջանին։

12. Ուշագրավ է, որ հնագույն ժամանակներից բազմաթիվ մենհիրներ, վիշապներ, ուրարտական և այլ կոթողներ քրիստոնեության ժամանակ IV—XVII դդ. վեր են ածվել խաչքարերի՝ դրանց վրա քանդակելով խաչի պատկերը։ Այդպիսիներից մեծ հետաքրքրություն են ներկայացնում Շամիրամի և Սառնաղբյուրի մենհիրները, Աղավնաձորի (Սիսիանի շրջ.) փորագիր և արձանագիր հայտնի կոթողները և այլն (նկ. 2, 3)։

13. XII դ. սկսում են քանդակազարդել նաև խաչքարերի թիկունքները։ Այս տիպի խաչքարերից հիշատակության արժանի են Կողբի (Նոյեմբերյանի շրջան) Սամվել կազմողի կերտած կոթողները։ Թեև նման խաչքարերի հանդիպում ենք նույնիսկ մինչև XVI—XVII դդ., բայց այդ նորամուծությունը լայն տարածում չի գտել։

14. Զորագյուղում (Մարտունու շրջան) և Բանանցում (Ադրբեջանական ՍՍՀ) կան, այսպես կոչված, կրկնահարկ խաչքարեր, երբ խաչքարի պատվանդանը ևս քանդակվում ու պատրաստվում է խաչքարի ձևով (նկ. 199)։

15. Նշված ժամանակամիջոցում որոշ փոփոխության ենթարկվեցին նաև խաչքարերի սալաձև քարերի շրջագծերը։ Նախկինում մեծ մասամբ դրանց գագաթները կամարաձև էին[1], իսկ X դ., գրեթե որպես կանոն, դառնում են ուղղանկյուն։ Հենց այդ էլ խաչքարերի դասական ձևն է դառնում, թեև շեղումներն էլ քիչ չեն։

16. XI—XIII դդ. զգալի փոփոխություններ են կրում խաչքարերի պատվանդանները։ X դ. սկսած խաչքարերը կանգնեցվում էին գերազանցապես խորանարդաձև և միակտուր քարերից պատրաստված պատվանդանների վրա, ընդ որում խաչքարերի պոչուկը կրաշաղախի օգնությամբ ամրացվում էր պատվանդանի վրա փորված համապատասխան փոսիկի մեջ։

XI—XIII դդ. խաչքարերի պատվանդաններն սկսեցին հետզհետե մեծանալ ու քանդակազարդվել։ Պատվանդաններն այդ շրջանում ոչ միայն առանձին միակտուր քարից էին պատրաստվում, այլև շարվում էին սրբատաշ մեծ ու փոքր քարերով, կրաշաղախի օգնությամբ, ստանալով համապատասխան ձևեր ու զարդարվելով շքեղ զըրվագներով։ Խաչքարերի այսպիսի պատվանդանների հիանալի նմուշներ են 1184 թ. Մխիթար կազմողի կերտած խաչքարի պատվանդանը Սանահնում, 1245 թ. Սամվել ու Տերավագ կազմողների կերտած զույգ խաչքարերի պատվանդանը Կողբում, Մրենի XIII դ. որմնափակ և խմբական մի հսկա խաչքարի պատվանդանը և այլն (նկ. 102, 144, 155, 162)։ Եղվարդում պահպանվել են միակտուր և միևնույն քարից պատրաստված տապանաքար-պատվանդաններ, վրան խաչքար կանգնեցնելու համապատասխան փոսիկով։ Աշտարակի ծակ-խաչ տիպի խաչքարերից առայժմ հայտնի են երեքը (Աշտարակ, Դսեղ և Նոյեմբերյան)։

Միջնադարում սովորություն է եղել խաչքարերը ներկելը կարմիր գույնով։ Այն դեպքում, երբ քարերը շատ ծակոտիներ ունեին, դրանց ճակատները նախապես կրաշաղախի բարակ շերտով ծեփում էին և ապա ներկում։ Խաչքարերը ներ-

---

[1] Հնագույն խաչքարերի կամարաձևությունը հավանաբար պայմանավորված է եղել հուշարձանին կամարի կամ խորանի ձև հաղորդելու ձգտումով։



IV (102). Սանահին. խաչքար վանքի առաջնորդ Գրիգոր Տուտեորդու, 1184 թ. գործ Մխիթար կազմողի

[illegible]

կելու սովորությունը գալիս է հնուց[5]։ Այսպես, կարմիր գույնով ներկված են եղել Ն. Թալինի VIII—X դդ. մի քանի խաչքարեր, Կողբի երկու որմնափակ խաչքարերը (XII—XIII դդ.), Հովհաննավանքի գավթի ներսում դրված մի շարք խաչքարեր, Հռիփսիմե տաճարի բակում դրված XVI—XVII դդ. խաչքարերը և այլն։ Հիմքեր կան կարծելու, որ երբեմն խաչքարերը ներկվել են բազմագույն ներկով. դրա ապացույցը Հաղպատավանքի Ամենափրկիչ՝ 1273 թթ. խաչքարն է, առայժմ միակը իր տեսակի մեջ (նկ. 166, 167)։

17. Խաչքարերի շարքին են պատկանում, այսպես կոչված, թևավոր խաչերը կամ խաչարձանները, որոնք Իջևանի, Շամշադինի և այլ շրջաններում հայտնի են «կանթավոր խաչ» (այսինքն՝ թևավոր) անունով։ Սրանք սկիզբ են առնում IV դ. և հազվագյուտ օրինակներով հարատևում են մինչև XVII դ.։

18. Խաչքարային հուշարձանների առանձին տեսակ են կազմում, այսպես կոչված, «Ամենափրկիչ» խաչքարերը, որոնց վրա սովորաբար պատկերվել է Քրիստոսի խաչելության տեսարանը, որի համար էլ այս խաչքարերին պայմանականորեն տրվել է «ամենափրկիչ» անունը[6]։ Կան արձանագրությամբ «Ամենափրկիչ» կոչված բազմաթիվ խաչքարեր, որոնց վրա ամենևին էլ չեն պատկերվել խաչելության տեսարաններ։ Այդպիսիք են Սանահնի 1161, 1215 և Վանեվանի 1285 թվակիր խաչքարերը։ Ի դեպ, վերջինիս վրա պատկերված է պարզ մի խաչաքանդակ, որի միակ զարդը ներքևում փորագրված նուռն է (նկ. 165)։

«Ամենափրկիչը» խաչքարերին կառուցողների տված լոկ սովորական անուն է, ինչպիսիք են «Ս. Աստվածածին», «Աստվածընկալ», «Ս. Սարգիս», «Ս. Գևորգ», «Տերունական» և այլն։ Այդ իսկ պատճառով ճիշտ կլիներ խաչելության տեսարանով խաչքարերն անվանել պարզապես՝ «խաչելության խաչքարեր», թեև դրանց երբեմն ուղեկցում են այլ քանդակներ՝ լուսնի ու արեգակի պատկերների յուրահատուկ ծաղկազարդմամբ (նկ. 166—175)։

Խաչելության խաչքարերից առայժմ հնագույնը պետք է համարել Մարտունու շրջանի Գետաշեն գյուղի կոթողը[7] (XIII դ. առաջին կես)։ Այնուհետև խաչելության խաչքարեր ունենք Աստվածընկալ վանքից (1251 թ.), Հաղպատից (1273 թ.), Ջղին գյուղից (1279), Դսեղից (1281 թ., գործ վարպետ Վարհամի)[8], Մարցից (1285 թ.), Հերհերից (1291 թ.), Սևանա կղզուց (1448 թ., գործ՝ Գրիգոր կազմողի) և այլ տեղերից (նկ. 148—153)[9]։ Խաչելության խաչքարեր ունենք նաև Հովհաննավանքից, Նորավանքից, Ղուշչիից (Ադրբեջանական ՍՍՀ), Արարատի շրջանից, Բագրևանդից և այլն (նկ. 165—175)։

Խաչելության խաչքարերի տարատեսակներն են Աշտարակի «Ծակ խաչը» (1268 թ.), որի բարձրությունը 6,40 մ է, Մշակավանքի 1291 թվակիր կոթողը[10] և նման այլ խաչքարեր, որոնց վրա թեև բացակայում են Քրիստոսի խաչելության պատկերները, բայց, ինչպես իրավացիորեն նկատել է Գ. Հովսեփյանը, իրենց վրա ունեն խաչելության հարակից նշանները, որպիսիք են արեգակի ու լուսնի քանդակները[11] (նկ. 156, 174)։

Խաչելության խաչքարերը, ինչպես և մյուս բոլոր խաչքարերը, կերտվել ու կանգնեցվել են բազմապիսի շարժառիթներով։ Ուշագրավ է հատկապես այն հանգամանքը, որ նրանց զարդարվեստը մասամբ առնչվում է հայկական մանրանկարչական արվեստի հետ։

Խաչելության խաչքարերը ուշագրավ են ոչ միայն Քրիստոսի խաչելության, լուսնի և արեգակի, զանազան սրբերի ու հրեշտակների պատկերաքանդակներով, այլև գեղազանցապես բուսական զարդաձևերով։ Խաչելության խաչքարերի արվեստին մանրամասն անդրադարձել է Գարեգին Հովսեփյանը իր «Հաղվուց Թառի Ամենափրկիչը...» աշխատության մեջ։

---

[5] Ագաթանգեղոսի անուղղակի մի վկայության համաձայն, դեռևս IV դարում, Հայաստանում կարմիր գույնի ներկվել են նաև հնագույն կոթողային հուշարձանները, որոնք «Կարմիրքըն էին ի գոյն արեան» (տե՛ս նրա «Պատմութիւն...», էջ 379)։

[6] Գ. Հովսեփյանը «Ամենափրկիչ» է անվանում խաչելության տեսարանը պատկերող խաչքարերը (տե՛ս «Հավուց Թառի «Ամենափրկիչը»... աշխատությունը)։

[7] Գ. Հովսեփյանը Հավուց Թառի խաչափայտը համարում է XI դ. գործ, իսկ կանգուն խաչելության խաչքարերից հնագույնը՝ Հաղպատավանքի 1273 թվակիր «Ամենափրկիչ» խաչքարը (տե՛ս Գ. Հովսեփյան, Հավուց Թառի «Ամենափրկիչը»..., էջ 60)։

[8] Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը Հաղպատավանքի 1273 թվակիր խաչելության խաչքարը համարում է Դսեղի 1281 թվակիր խաչելության քարի քանդակագործ վարպետ Վարհամի ձեռակերտը (տե՛ս նրա «Հաղպատ»..., էջ 50)։ Մենք ավելի հակված ենք ենթադրելու, որ Վարհամ վարպետը, բացի Դսեղի հիշյալ կոթողից, կերտել է ոչ թե Հաղպատի, այլ Ջղին գյուղի ու Մարցի խաչելության խաչքարերը, ինչպես նշել է Գ. Հովսեփյանը (տե՛ս նրա «Հավուց Թառի «Ամենափրկիչը»..., էջ 76—77), որոնք կանգնեցվել են Մամիկոնյան-Համազասպյան տիրույթներում։

[9] Ջղին գյուղի, Դսեղի, Մարցի, Սևանի հիշյալ խաչելության խաչքարերի արձանագրությունները հրատարակված են գրչի սխալներով, որոնց այստեղ չենք անդրադառնում։

[10] Մշակավանքի խաչքարը Գ. Հովսեփյանին հայտնի չի եղել։

[11] Գ. Հովսեփյան, Հավուց Թառի «Ամենափրկիչը»..., էջ 80։

2. ԽԱՉՔԱՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Առաջին հայացքից որոշ չափով տարօրինակ է թվում, որ Հայաստանում դարերով մշակված և քանդակման կատարելության հասած նռան, խաղողի ու զանազան վարդյակների, բուսական թե երկրաչափական զարդամոտիվները VIII—X դդ. խաչքարերի զգալի մասի վրա հանդես են գալիս պարզունակ, համեստ ձևերով։

Այդ երևույթի պատճառները մեր կարծիքով հետևյալներն են.

1. Խաչքարերի նոր տիպի հուշարձան լինելու հանգամանքն ինքնին թելադրել է դրանց սկզբնապես համեստ կերպարը։ Այս երևույթը հատուկ է նորաստեղծ մշակույթի կամ ոճի անդրանիկ դրսևորմանը։

2. Խաչքարերն սկզբնապես կանգնեցվել են ժողովրդի տարբեր, մեծ մասամբ ոչ իշխող խավերի կողմից՝ իբրև սովորական հիշատակարան-հուշարձաններ՝ պատվիրատուների համեստ հնարավորությունների սահմաններում։ Ինչպես երևում է, խաչքարեր քանդակողներն սկզբնապես եղել են ոչ թե տաճարներ ու նշանավոր շենքեր քանդակազարդող հմուտ վարպետները, այլ սովորական քարգործ վարպետներ։ Իհարկե, եղել են նաև բացառություններ, և այդ դեպքերում խաչքարերը քանդակված են բարձր արվեստով։ Այսուհանդերձ չպետք է մոռանալ, որ VIII դ. և IX դ. սկզբին Հայաստանը գտնվում էր քաղաքական ու տնտեսական ծանր պայմաններում, արաբական տիրապետության ներքո։

3. Հետագայում, նյութական պայմանների համեմատական բարելավման և հոգևոր ու էսթետիկական պահանջմունքների բարձրացման հետ մեկտեղ զարգանում է նաև խաչքարերի արվեստը, այդ հուշարձանները շքեղ քանդակներով զրվագելու ձգտումը։ IX—X դդ. արդեն խաչքարերը հաստատուն տեղ են գրավում մշակույթի հուշարձանների մեջ, ավելի մեծ նշանակություն են ստանում, արժանանում նույնիսկ երկրի աշխարհիկ ու հոգևոր տերերի ուշադրությանը, կերտվում են վարպետ քանդակագործների ձեռքով և նույնիսկ արձանագրվում։

Գեղաքանդակ կոթողների ու հուշարձանների նկատմամբ հավատացյալ ժողովրդի ակնածանքը շատ լավ են գիտակցել հոգևորականության ներկայացուցիչները։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Հովհ. Դրասխանակերտցին. «Եւ վասն զի ոչ այնպէս յաներեւութից ոմանց ահից զօրութիւն ընդոստուցանօղ մարդկան բերցի ի վատթարէն ի լաւն՝ որպէս յերեւելեացս գերարուն զարդուց խըտտըղանք և վասն սորին իսկ այսորիկ կալաւ սովորութիւն գեղեցիկ զարդուք պճնազգեստել զանշունչ քան քարինս եկեղեցւոյ, ապա որչափ առաւել մարդ զքարինս բերէ ի զարմացումն զտեսողսն. սակայն այսոքիկ ոչ ամենեցուն՝ այլ նոցա միայն, որոց զատողական հաւատացեալ է գործս»[12]։

Այս և, մանավանդ, ժողովրդական արվեստի հարաճուն պահանջների զարգացման հանգամանքներով էր պայմանավորված խաչքարերի հետագա գեղազարդումն ու քանդակների ճոխությունը։ Խաչքարերի զարգացման այդ վերելքը ընթանում էր տնտեսական ու քաղաքական պայմաններին համընթաց, երբեմն՝ որոշ կասեցումներով, բայց միշտ վերընթաց գծով։

Խաչքարերի զարգացման աստիճանական փուլերը որոշվում են ինչպես խաչաքանդակների ձևերի ու տիպերի, նույնպես և զարդաքանդակների կրած փոփոխություններով, որոնք տեղի են ունեցել որոշակի օրինաչափություններով։ Դրանց բացահայտումով միայն կարելի է հետևել ընդհանրապես խաչքարերի զարգացման ընթացքին։ Նշենք այդ օրինաչափություններից հիմնականները։

1. Հնագույն խաչքարերի հիմնական զարդամոտիվը՝ խաչաքանդակի երկճյուղ ծայրերը, որպես կանոն, վերջանում են մեկական գնդիկներով, թևերի հատման կենտրոնում ևս ունենալով համանման գնդիկ (նկ. 44, 46, 47—51, 53, 56—58 և այլն)։

2. X դ. երկրորդ կեսից հատկապես խաչի թևերի երկճյուղ ծայրերը վեր են ածվում երեքական գնդիկներից կազմված կոկոնաձև մի զարդամոտիվի (նկ. 64, 66, 68, 71—73, 81 և այլն)։ Այդ պրոցեսը մասնակիորեն շարունակվում է մինչև XII դ.։

---

[12] Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 101—102։

3. XI դ. սկսած այդ զարդամոտիվի վերջին գնդիկը դառնում է սրածայր ու ստանում բուսական տեսք, նմանվելով բողբոջի։ Այս զարդն էլ, մինչև XVII դ. մեծ մասամբ պահպանելով իր այդ ձևը, այնուհետև դառնում է տերևաքանդակ, իսկ երբեմն վեր է ածվում նաև երկուական զարդամոտիվների (նկ. 90, 94, 100, 101, 105)[13]։ Հիշյալ օրինաչափություններին ենթարկվում են նաև որմնախաչերը։

4. Համապատասխանաբար նույնպիսի փոփոխությունների են ենթարկվում նաև խաչքարերի խաչաքանդակների հարակից քանդակները՝ նռան և խաղողի գրվագները և դրանցից ավելի ներքև գտնվող բուսական վարդյակները (նկ. 106, 109, 110, 113, 126)։ Հետաքրքիր է, որ XIII դ. խաչքարերի խաչաքանդակների թևերին երբեմն պատկերվում են ավելի փոքր խաչեր (նկ. 177)։

5. Խաչքարերի հնության հատկանիշներից են նաև խաչաքանդակների միջև արված եռանկյունաձև կտրվածք ունեցող ակոսները, որպիսիք սովորաբար հանդիպում են IX—XI դդ. խաչքարերի վրա (նկ. 53, 56, 69 և այլն)։ Բացի այդ, խաչի թևերի հատման կենտրոնում և չորս թևերի ծայրերին, ներսից հաճախ քանդակվում են մեկական փոքրիկ գնդիկ։ Այս օրինաչափությունը երևան է գալիս դեռևս IV դ. խաչաքանդակների վրա (նկ. 24)[14]։

Խաչքարերի կարևոր զարդամոտիվներից են խաչաքանդակների ներքևում պատկերվող աստիճանաձև և վարդյակաձև մոտիվները, որոնցից առաջինը աստիճանաբար վերանում է, իսկ երկրորդը դառնում խաչքարի ամենահիմնական գրվագներից մեկը (նկ. 61, 68, 74, 75)։ Նշված վարդյակները խաչքարերի ընդհանուր զարգացման հետ ոչ միայն շքեղ տեսք են ընդունում, այլև մեծանալով նվազեցնում են խաչաքանդակին հատկացվող տեղը ու մղում նրանց դեպի վեր։ XI—XIII դդ. այդ վարդյակները այնքան շքեղ ու նրբորեն են քանդակազարդվում, որ բացի կլորությունից գրեթե կորցնում են իրենց երբեմնի բուսական ծագման գաղափարն ու բովանդակությունը և նմանվում գերազանցապես երկրաչափական, քան թե բուսական զարդամոտիվների[15]։ Այդ առումով հետաքրքիր է Մաստարայի Խաչոտ վարդապետի խաչքարի կլոր վարդյակը, որի տրամագիծը մոտ մեկ մետր է։

6. Իրենց հերթին անօրինակ զարգացում են ապրում խաչքարերի խաչաքանդակների վերևի թևերից դուրս եկող նռան և խաղողի քանդակները, որոնք սկզբնապես քանդակվում են ուռուցիկ, բայց ուրվագծային ձևով[16]։ Սակայն XI դ. սկսած այդ մոտիվների մշակումը գրեթե կատարելության է հասնում։ Երբեմն խաղողն ու նուռը միահյուսվում են և նույնիսկ բարձրանում քիվի ճակատին։ XI—XIII դդ. այդ քանդակները փոխվում են անճանաչելիության աստիճան, մանրանում ու դառնում նրբագեղ, ասես ասեղնագործված զարդամոտիվ, որպիսին այլևս հազիվ թե հիշեցնի նախկին նուռն ու խաղողը (նկ. 77, 90, 98, 99—101)։

Հազվագյուտ դեպքում խաչաքանդակի վերևի թևի երկու կողմերում հանդիպում ենք տանձի քանդակի, բայց XI դ. հետո դա անհետանում է (Ջովունի, Ծովակ և այլն, նկ. 80)։ Ի դեպ հարկ է նշել, որ նաև զարդագրությունը խաչքարերի վրա հանդես է գալիս ոչ թե 1200 թ., ինչպես ենթադրում է Գ. Հովսեփյանը, այլ խաչքարերի ծագման հենց սկզբից՝ VIII—IX դդ.։ Այն հանդիպում է, օրինակ, Ղուշչիի VIII դ., Զորագյուղի 984, Մուղնիի 986, Ջրվեժի 1173 և այլ թվակիր ու անթվակիր խաչքարերի վրա (նկ. 46, 69, 99—101 և այլն)։

Առանձին դեպքերում դեռևս IX—X դդ. սկսած խաղողի ողկույզներ և նռան քանդակներ են դուրս բերվում նաև խաչքարերի խաչաքանդակների հորիզոնական թևերից, բայց այդ երևույթը հազվագյուտ է և որոշակի օրինաչափության չի ենթարկվում։

7. Ավելի ուշագրավ երևույթ նկատում ենք խաչքարերի ներքևի թևի երկու կողմերից թեք բարձրացող արմավենիկի զարդամոտիվների զարգացման մեջ։ Այդ զարդամոտիվը, ինչպես արդեն ասել ենք, հանդես է գալիս IV—VII դդ. սկսած, հնագույն տաճարների և հուշասյուն կոթողների զարդաձևերով, ինչպես նաև վաղ շրջանի խաչքարերի վրա (նկ. 48—51, 53, 56—62)։ Խաչքարերի ընդհանուր զարգացման հետ միասին XI—XIII դդ. նշված մոտիվները ենթարկվում են կոմպոզիցիոն բազմապիսի ձևափոխությունների, կորցնելով իրենց երբեմնի նշանակությունը։ Մի դեպքում դրանք վեր են ածվում նրբաքանդակ հյուսածո դրվագների, մյուս դեպքում՝ թռչնագլուխ[17] զարդամոտիվների, մեկ այլ դեպքում՝ փնջանման դրվագների, որոնք ավարտվում են նռան քանդակներով (նկ. 131, 143, 146)։

---

[13] *Այս հանգամանքը ևս, մեր կարծիքով, խոսում է խաչի կերպարը հնագույն ժամանակներում որպես կենաց ծառ ընկալելու մասին։ Տերևաքանդակ խաչթևերով 2 խաչքարեր կան Հառիճում և Գողթում։*

[14] *Գարեգին Հովսեփյան, Նյութեր..., պրակ Գ, էջ 70։ Հեղինակի կարծիքով, այդ օրինաչափությունը երևան է գալիս V—VII դդ. խաչերի վրա։*

[15] *Հովհաննավանքի XIII դ. և Նորավանքի (Ամաղու) երկու խաչքարերի վարդյակների մեջտեղում պատկերված են Աստծո գլուխը, իսկ Բջնիի XVI դ. մի խաչքարի ներքևի վարդյակի քանդակները թռչնագլխով են վերջանում։*

[16] *Նույն երևույթը նկատելի է նաև IV—VII դդ. քառակող կոթողների զարդագրության մեջ, տե՛ս նկ. 34, 35։*

8. Խաչքարերի հնագույն զարդամոտիվներից է զույգ աղավնիների պատկերագրությունը, որը նույնպես հին ծագում ունի։ Զույգ աղավնիների կերպարը հանդիպում է Մաստարայի IV—V դդ. կոթողի, Աղցի (այժմ՝ Զորափ, Աշտարակի շրջանում) IV դ. դամբարանի, Էջմիածնի, Ափնայի տաճարների, Անգեղակոթի V դ. կոթողի և մի շարք այլ հուշարձանների վրա (նկ. 16, 57)։ Հիշյալ զարդամոտիվի հեթանոսական ծագման մասին է վկայում անտիկ շրջանի դամբարանների պեղումներից հայտնաբերված բրոնզե մի մատանու համապատասխան դրվագը, որը պատկերում է դեմ-դիմաց կանգնած երկու աղավնի՝ մեջտեղում կրակարան։ Ե. Մուշեղյանի կարծիքով, մատանին պատկանում է մ. թ. III—IV դդ[18]։ Ուշագրավ է, որ այս մոտիվը (զույգ աղավնիներ, մեջտեղում՝ սուրբ օջախ կամ կրակարան) գրեթե նույնությամբ փոխանցվել է քրիստոնեական կրոնին, այն տարբերությամբ, սակայն, որ կրակարանին այստեղ փոխարինել է նոր կրոնի խորհրդանիշը՝ խաչի մոտիվը։

IX—X դարերից մինչև XVII դ. զույգ աղավնիների կերպարը դառնում է խաչքարերի հատկանշական զարդամոտիվներից մեկը (նկ. 62, 72)։ Այս տիպի խաչքարերից պետք է նշել Կեչուտի՝ 886 թ., Սովետաշենի՝ IX—X դդ., Էջմիածնի X դ., Հաղպատավանքում՝ Ատոմ վերակացուի (1004 թ.), Հավուց թառում՝ Հասանի (Սմբատի որդի, 1081 թ.), Կոշում (XII, XIII դդ.)՝ Պետրոս Ականատեսի, Հաղբատում՝ Վաչեի (1201 թ.), Գառնիի՝ 1220 թ., Բագարանում՝ Դիոսկորոսի (Տապուհի որդի, 1253 թ.), Գետաշենում՝ Գրիգորի (1295 թ.), Վարդենիսում՝ Քաչ Զոհրաբի (1531 թ.), Նորավանքում՝ Հակոբ նկարողի (1563 թ.) և բազմաթիվ այլ խաչքարերը (նկ. 57, 62, 72, 92, 113, 117, 147 և այլն)։

Խաչքարերի վրա աղավնիների պատկերագրությունը ունի կոմպոզիցիոն տարբեր ձևեր. մի դեպքում թռչունները կանգնած են խաչի վերևի թևի երկու կողմերում, դեմ-դիմաց, խաղող կտցահարելիս և կամ կենաց ծառի շուրջը, մյուս դեպքում՝ միաժամանակ հանդես են գալիս չորսը միասին, երբեմն միայնակ և այլ ձևերով։ Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զույգ աղավնիների մոտիվը առավելապես քանդակվել է մահարձանի իմաստով կանգնեցված խաչքարերի վրա, կապված հոգու անմահության, անդրշիրիմյան աշխարհի և խաղաղության հասկացության հետ։ Պատահական չէ, որ այդ մոտիվը հաճախակի հանդիպում է նաև դամբարանների զարդագրության մեջ։

Մոտավորապես այդպիսին են խաչքարերի հիմնական զարդամոտիվներն ու նրանց զարգացման աստիճանական փուլերը։ XI—XIII դդ. այդ զարդամոտիվներին ավելանում են նորերը, որոնք նույնպես ապրում են իրենց էվոլյուցիան։ Հին ու նոր այդ դրվագները ավելի են հարստացնում խաչքարերի զարդագրությունը։

Նոր զարդամոտիվներից անհրաժեշտ է նշել հետևյալները.

1. Պտտվող սվաստիկա, որի հիմքում ընկած է հավերժականությունը և արեգակը խորհրդանշող արմնկաձև խաչի պատկերը[19]։ Այս զարդամոտիվը նեոլիթյան ծագում ունի և հանդիպում է դեռևս IV—VII դդ. հայկական հուշարձանների վրա[20]։ Այն հանդիպում է նաև շատ այլ ժողովուրդների մոտ։ XI դ. սկսած պտտվող սվաստիկան և կեռ խաչերը զարդարում են նաև հայկական խաչքարերը (Սոլակ, Ճամբարակ, Ցաղաց քար, Մարտիրոս գյուղ և այլն, նկ. 82, 90, 91, 109 և այլն)։

2. XIII դ. խաչելության խաչքարերի համար պարտադիր է եղել աջից՝ արեգակի, իսկ ձախից՝ լուսնի պատկերումը (առասպելական ցուլի ու թռչունի մեջքին), երբեմն նույնիսկ համապա-

---

[17] Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, մաս Ա, Վաղարշապատ, 1928, էջ 158—159։

[18] Մատանին այժմ պահվում է ՀՍՍՀ պատմության պետական թանգարանում։

[19] Ա. Եղիկյան, «Սվաստիկա», «Ազգագրական հանդես», գիրք 17, Թիֆլիս, 1908, էջ 143—144։ Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք..., մաս Ա, էջ 127։

[20] Բ. Թումանյան, Հ. Մնացականյան, Բրոնզե դարի գոտի-օրացույց, Երևան, 1965, էջ 8։

տասխան մակագրությամբ (Մարտունի, Հաղբատ, Ջղինդյոլ, Դսեղ, Մարց, Մշկավանք և այլն. նկ. 165—9, 171—2, 174 և այլն)։ Հավանաբար, արևի ու լուսնի արտահայտություններն են նաև Վանի 959 թվակիր, Տեկորի 964 թ., Մուղնիի 986 թ., Դառնիի և Մարենյաց վանքի IX դ. անարձանագիր և այլ խաչքարերի այն երկուական գնդերը, որոնք պատկերված են խաչաքանդակի երկու կողմերում (նկ. 50, 65, 69)։

3. XI դ. սկսած խաչքարերի վրա հանդես է գալիս փնջաձև բուսական զարդաձև, որը սովորաբար պատկերվում է խաչաքանդակի և նրանից ներքև գտնվող վարդյակի միջև, երբեմն էլ անմիջապես խաչի տակ։ Փնջաձև այս մոտիվի նախնական ձևն են հիշեցնում Ոսյանի X դ., Արուճի X—XI դդ., Հաղբատի 1004 թվակիր խաչքարի համապատասխան դրվագները (նկ. 77, 79, 88, 90, 91, 100 և այլն)։ Բացառված չէ, որ նշված զարդամոտիվն առաջացել է X դարում[21], բայց թվագրված խաչքարերի վրա սկսվում է XI դ., գոյատևում է մինչև XIII դ. և հետագայում հանդիպում է հատուկենտ։ Հիշյալ զարդամոտիվը, զբաղեցնելով խաչի ներքևում բավականին ընդարձակ տարածություն, կլոր վարդյակի և արմավենիկի հետ միասին դեպի վեր է մղում խաչաքանդակի մոտիվը, որի հետևանքով վերջինս անհամեմատ փոքրանում է։ Որքան էլ տարօրինակ լինի, XIV—XVII դդ. այս գեղեցիկ զարդամոտիվը գրեթե մեկընդմիշտ անհետանում է խաչքարերի զարդարվեստում։

4. Խաչքարերի ընդհանուր զարգացումը հետզհետե հանգում է այն բանին, որ ոչ միայն քանդակազարդվում են խաչաքանդակների ներքևի և թևերի արանքներում եղած ազատ տարածությունները, այլև դրանց շրջանակները ծածկվում են ամենանուրբ ու շքեղ հյուսածո զարդերով ու զանազան վարդյակներով՝ վերցված հատուկ քառանկյունի շրջանակների՝ «սեգմենտների» մեջ։ Ճիշտ է, նախկինում ևս խաչքարերի շրջանակները քանդակվում էին մասնակիորեն, բայց դրանք այնքան ճոխ ու նրբակերտ չէին և սեգմենտների չէին բաժանված։ X դ. սկսած այդ հատվածների («սեգմենտների») մեջ սովորաբար քանդակվում են երկրաչափական բնույթի տարբեր հյուսածո մոտիվներ և հատկապես աստղեր, վարդյակներ, շեղանկյուններ և այլն։ Այդպիսիներից ուշագրության արժանի են էջմիածնի, Ծաղաց քարի, Սանահնի, Դսեղի, Նորավանքի և այլ բազմաթիվ բարձրարվեստ խաչքարերը (նկ. 72, 90, 91, 123, 126, 135, 158, 182, 188 և այլն)։

5. Բոլորովին նոր զարդամոտիվ է խաչբուռը, որը հանդես է գալիս XI դարից[22] (նկ. 137, 138, 155)։ Այն սովորաբար պատկերվում է խաչաքանդակի ներքևի թևի երկու կողմերում, ձեռքի մեջ խաչ բռնած ձևով։ Խաչբուռը հանդես է գալիս նաև տապանաքարերի զարդարվեստում։ Որոշ դեպքերում խաչբուռը փոխարինվում է համանման այլ մոտիվներով։ Արվեստագետ Ա. Պատրիկը վկայում է, որ հնում հայ երկրագործները խաչբուռ անվանել են ցորենի հասկերից հյուսված զարդը, որը զետեղում էին իրենց օջախի վերևում, որպես օրհնաբեր բարօրության խորհրդանշան[23]։

6. Պատկերաքանդակները IV—VII դդ. հայկական հնագույն կոթողային հուշարձանների զարդամոտիվներից են։ Ինչպես արդեն նշել ենք, VIII—IX դդ. աննպաստ էին պատկերաքանդակների զարգացման համար, ուստի դրանք անհետանում են և կրկին երևան գալիս X դ.։ Ըստ որում միայն XI—XII դդ. հայ վարպետները պատկերաքանդակներով զարդարել սկսեցին նաև խաչքարերը։ Վերջիններիս պատկերաքանդակները բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ աշխարհիկ և կրոնական քանդակներ։ Աշխարհիկ թեմաներով քանդակները խաչքարերի վրա երևան են գալիս XII դ., իսկ մյուսները՝ գերազանցապես XII—XIII դդ. սկսած։ Պատկերաքանդակներով զարդարված հնագույն խաչքարերը մեզ են հասել պատմական Խաչեն գավառից։ XII—XIII դդ. խաչքարերի վրա կենցաղային տեսարաններ քանդակելն արդեն սովորական երևույթ էր։ Այսպես, 1909 թ. ակադ. Հ. Օրբելին[24] Լեռնային Ղարաբաղի Կոշիկ անապատում, Հավապտուկի և Գանձասարի վանքերի տերիտորիայում ուսումնասիրել և գրի է առել XII—XIII դդ. պատկերաքանդակներով հարուստ մեկ տասնյակից ավելի խաչքարեր (մեծ մասամբ թվագրված), որոնց վրա գերազանցապես պատկերված են թրերով, նիզակներով և այլ զենք ու զրահով սպառազինված

---

[21] Ամենայն հավանականությամբ այս զարդամոտիվը առաջացել է խաչաքանդակի և վարդյակի միջև գտնվող հանգուցաձև բաց տարածությունները դրվագելու ձգտման հետևանքով։

[22] Խաչբուռի քանդակով հնագույն խաչքարը Սոլակի XI դ. թվակիր խաչքարն է, որի հաջող լուսանկարը դժբախտաբար չունենք։

[23] Ա. Պատրիկ, Խաչքարային արվեստի երկու գլուխգործոցներ, «Ջահակիր», 1966, էջ 149։

[24] И. А. Орбели, Избранные труды, стр. 196—204.

հեծյալներ։ Մեծանուն գիտնականը դրանց մասին ուշագրավ դիտողություններ է անում։ Թեև քանդակագործական արվեստի տեսակետից այս խաչքարերը առանձնապես աչքի չեն ընկնում, բայց իրենց պատկերաքանդակներով և բովանդակությամբ մեծ արժեք են ներկայացնում՝ վաղ մոնղոլական շրջանի հայ մարտիկների զենք ու զրահի և կենցաղային մի շարք երևույթների ուսումնասիրության տեսակետից։

XII—XIV դդ. պատկերազարդ մի քանի տասնյակ խաչքարեր պահպանվել են նաև Սովետական Հայաստանի սահմաններում։ Այդպիսիներից ուշադրության արժանի են Կողբի, Լոռիբերդի, Գիլանլարի, Գեղարդի, Կողեսի, Քանաքեռի, Հաղբատի, Ջղին գյուղի, Դսեղի, Մշկավանքի, Կալաչայի, Քարագլխի և այլ խաչքարերը (նկ. 106, 111, 126, 129, 136, 142, 143, 150, 155, 166—175 և այլն)։ Ջղին գյուղի[35] խաչքարի պատվանդանին քանդակված է Մամիկոն իշխանը հեծյալ պատկերմամբ, որսի ժամանակ վայրի կենդանուն (հովա՞զ) նիզակով հարվածելիս (նկ. 170)։ Դժբախտաբար, հայտնի չէ Մշկավանքի որմնախաչի ներքևում պատկերված հեծյալի ով լինելը (գուցե հուշարձանի կառուցումը հովանավորողն է)։ Ձախ ձեռքով նա բռնել է ձիու սանձը, իսկ աջ ձեռքի նիզակով հարվածում է՝ դեմքով ետ դարձած վիճակում։ Նրա առջև պատկերված է մի կին՝ երկար զգեստով։ Ձիավորի թիկունքում նույնպես պատկերված է մարդու ֆիգուր, որն աջ ձեռքով բռնած գավաթը մատուցում է ձիավորին։ Նա գլխին ունի իշխանական հատուկ գլխարկ, որպիսիք ունեն նաև Կողեսի 1241 թ. խմբական խաչքարի հեծյալները։

Պատկերաքանդակ կրող խաչքարերի մյուս խումբը վերարտադրում է քրիստոնեական մոտիվներ (Աստված, Քրիստոս, հրեշտակներ և այլն)։ Դրանց զգալի մասը քանդակված է խաչելության խաչքարերի վրա։ Քրիստոնեական մոտիվներով պատկերաքանդակ խաչքարերից են Հաղբատի, Պռոշ իշխանի, Դսեղի, Ջղին գյուղի, Մարցի, Մշկավանքի, Նորավանքի, Գեղարդավանքի, Սևանի և XIII—XVII դդ. բազմաթիվ այլ խաչքարեր։

7. Կենդանական մոտիվները խաչքարերի վրա հազվագյուտ երևույթ են, եթե չհաշվենք ձին, որը գրեթե միշտ հեծյալի հետ է հանդես գալիս։ Կենդանական մոտիվներից պետք է նշել օձը, ավանակը, որսի տեսարանում պատկերված վայրի կենդանիները, աղավնիները, բազը, արագիլը, քրիստոնեական հավիտենական հանգստի խորհրդանիշ սիրամարգը (խաչքարերի ներքևի թևերից վեր բարձրացող մի շարք քանդակներ սիրամարգի են նման), արծիվը, ինչպես նաև խաչելության խաչքարերի վրա պատկերված առասպելական թռչունը և կենդանին։ Խաչքարերի կենդանական մոտիվները Ա. Մնացականյանը վերագրում է տոտեմական հասկացություններին[36]։

8. VIII—X դդ. խաչքարերի զարդամոտիվները գերազանցապես բուսական ծագում և հատուկ իմաստավորում են ունեցել[37]։

9. XI դ. սկսած և հատկապես XII—XIII դդ. խաչքարերի զարդարվեստում գերակշռություն են ստանում երկրաչափական քանդակները։ Բուսական քանդակները մանրանում և ոճավորվում են՝ տեղի տալով երկրաչափական մոտիվներին։ XII—XIII և հետագա դարերը երկրաչափական և զանազան հյուսածո քանդակների տիրապետության շրջան են։

10. VIII—XIII դդ. Հայաստանում խաչքարերի վրա հանդես է գալիս պարանահյուս մի զարդամոտիվ, այսպես կոչված սելջուկյան շղթա, որի ակունքները մեզանում շատ հին են (նկ. 64, 78, 91, 93, 97, 112)։ Այս զարդաձևը հայկական ճարտարապետության մեջ երևան է գալիս IX—X դդ.։ Նման դրվագները զարդարել են Տաթևի Պողոս-Պետրոս տաճարի (895—906 թթ.) գմբեթը, Անիի 1035 թ. կառուցված ս. Փրկչի եկեղեցին, Հավուց Թառի XI դ. առաջին կեսի տաճարը (կառուցված Գրիգոր Մագիստրոսի կողմից), Սանահինի վանքի գրատունը՝ շինված 1063 թ. և այլն։

Նրա հիմքում ընկած են երկու հնագույն զարդամոտիվներ։ Դրանցից առաջինը անտիկ շրջանի՝ Հայաստանում և այլուր տարածված ուլունքաշար հայտնի դրվագն է[38], որը հետագայում տեղ գտավ հայկական միջնադարյան զարդարվեստում։ Եվ եթե մենք փորձենք պատկերացնել այն իր շրջագծով, ապա կունենանք գրեթե նույն զարդամոտիվը, որը հետագայում ավելի խոշորացել և քիչ բարեփոխվել է։ Երկրորդ զարդամոտիվը, որ նույնպես խոր անցյալ ունի, հանդիպում է Հին Արևելքի արվեստում (շումերական, հեթիթական, ուրարտական, անտիկ և հետագա դարերի հայկական զարդարվեստում)։ Դա զույգ գծերի ոլորաձև կամ պարանահյուս քանդակն է, որն ունի, օրինակ, Գառնի ամրոցի բաղնիքի հատակի խճանկարի շրջանակը։ Քանդակագործական արվեստի զարգացման հետևանքով այս զարդամոտիվը, քիչ ձգվելով, ստանում է հիշյալ ձևը. այդ պրոցեսը բավական հաջող երևում է Հոռոմայրի 1201 թվականի «Տերունական» խաչքարի վրա (նկ. 48, 64, 76, 78, 119)։ Ի դեպ նշենք, որ ուլունքաձև քանդակները հատուկ են անտիկ շրջանին և այս միակ զարդաձևը չէ, որ անմիջական ազդեցությամբ փոխանցվել է նաև հայկական միջնադարյան հուշարձաններին (օրինակ, Մարմաշենի 988—1029 թթ., Անիի միջնաբերդի X—XI դդ., Ցաղաց քարի 1041 թ. և այլ տաճարներին)[29]։ Այնուհետև ուլունքաձև այդ զարդամոտիվներն սկսում են երևալ նաև խաչքարերի վրա։ Առաջին մեզ ծանոթ այդպիսի խաչքարերից հնագույններն են Դսեղում՝ Պատրոն Սարգսի 1195 և Կոշի նույն թվականի Պետրոս Սկանտանսի խաչքարերը (նկ. 108, 117)։ Նույնպիսի ուլունքաձև քանդակներով են զարդարված նաև Հաղարծինի, Բջնիի, Հովհաննավանքի, Աղյոց ս. Ստեփանոսի, Անբերդի, Մշկավանքի, Մ. Մազրայի և XIII—XVI դդ. բազմաթիվ այլ խաչքարեր։

---

[35] Ջղին գյուղի հիշյալ խաչքարն այժմ գտնվում է Էջմիածնի Մայր տաճարի բակում։ Ամենայն հավանականությամբ այն եղել է որմնափակ։

[36] Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 187։

[37] Նույն տեղում, էջ 207։ Թեև հեղինակը իր այդ տեսակետը չի մասնավորեցնում խաչքարերի երկրաչափական քանդակների նկատմամբ, բայց, հավանաբար, նա նկատի ունի և այդպիսիք։

[38] Այդպիսի ուլունքաշար մոտիվներ տեսնում ենք Տիգրան և Արտավազդ II-ի դրամների, ինչպես նաև Գառնիի հեթանոսական տաճարի քանդակազարդ քարերի վրա։

11. XII—XIII դդ. խաչքարերի վրա քանդակվում են նաև զանազան կենցաղային իրեր, սափորներ, երաժշտական գործիքներ և այլն։

12. Նշված դարերում արձանագրությունը ևս խաչքարերի վրա հանդես է գալիս որպես զարդամոտիվ։ Մինչև X դ. խաչքարերի արձանագրությունները գերազանցապես փորագիր են, սակայն XI դ. սկսած երևան են գալիս նաև ուռուցիկ քանդակ-արձանագրություններ (նկ. 92, 105, և այլն)։ Ոճավորված վիմական արձանագրությունները մեր ճարտարապետական հուշարձանների վրա հանդես են գալիս ավելի վաղ ժամանակներում[30]։

* * *

Անկասկած է, որ խաչաքանդակի կերպարը միջնադարում պատկերել է սովորաբար Քրիստոսի խաչելության խորհրդանիշը, որպես խաչելության կենաց փայտ։ Այսուհանդերձ խաչի պատկերը շատ հին է և դեռևս հեթանոսական ժամանակաշրջանում դիտվել է որպես արևի նշան, մանավանդ որպես «կենաց ծառ»։ Այդ հասկացողությունը այնքան ուժեղ է եղել, որ անգամ միջնադարում խաչաքանդակը երբեմն ընկալվել է երկու տարբեր հասկացողությամբ։ Այդ իր արտահայտությունն է գտել թե՛ մատենագրական աղբյուրներում և թե՛ նյութական մշակույթի մեջ։ Այսպես Գրիգոր Տաթևացին խաչը դիտում է որպես «կենաց ծառ», վերջինիս մեջ տեսնելով խաչի գաղափարը[31]։ Այդ իմաստով էլ բնավ պատահական չպետք է համարել, որ խաչքարերի խաչաքանդակների թևերի ծայրերը երբեմն վերջանում են բողբոջի և կամ նռան ձևով։ Բ. Առաքելյանը խաչի և ծաղկի զուգակցումը վաղ քրիստոնեական շրջանում տարածված երևույթ է համարում նաև Հայաստանում, ծաղիկը դիտելով որպես արևի խորհրդանիշ, իսկ արևի և խաչի զուգակցությունը՝ որպես հեթանոսական և քրիստոնեական պաշտամունքային գլխավոր խորհրդանիշների համադրություն[32]։

Խաչի կերպարն ունի նաև այլ բովանդակություն՝ կապված մատենագրական և վիմագրական աղբյուրներում հաճախակի հանդիպող «խաչն լուսոյ»[33] արտահայտության հետ։ Արդյո՞ք այդ մասին չեն վկայում Վ. Թալինի երկու հնագույն խաչքարերի զարդագրությունները, որտեղ խաչի թևերից դուրս եկող զարդերը ավելի նման են կրակի բոցերի, քան թե արմավենիկի տերևների (նկ. 45)։ Հավանաբար, այդ մասին է ակնարկում Ագաթանգեղոսը, երբ գրում է. «Եւ լոյսն դի փարի զխաչիւն»[34]։ Եվ կամ նույն Թալինի մյուս կլոր խաչքարը, որն ավելի նման է արեգակի (նկ. 47)։ Ուշագրավ է և այն, որ Մ. Կաղանկատվացին արեգակը խաչի ձևով է պատկերացնում[35]։ Մոտավորապես նույն իմաստն է արտահայտում Փարիսոսի, Մաքենյաց վանքի, Կարմրաշենի, Կարճաղբյուրի խաչքարերի ճառագայթաձև զարդադրությունը (նկ. 47, 50, 70, 71, 82)։ Այս երևույթը հավանաբար պետք է բացատրել նրանով, որ խաչի կերպարը նախքան քրիստոնեությունը ընկալվել է երկու տարբեր ըմբռնումներով՝ մի դեպքում այն պատկերել է կենաց ծառը, իսկ մյուս դեպքում՝ արեգակը։

---

[29] Գառնիի և անտիկ շրջանի պատմական այլ հուշարձանների մի շարք այլ զարդամոտիվներ ևս փոխանցվել են միջնադարյան հայկական հուշարձաններին։ Դրանցից են պարանաձև և նշաձև քանդակները։

[30] Հ. Խ. Խալփախչյան, Արձանագրությունները հայկական ճարտարապետության ստեղծագործական կոմպոզիցիայում, «Էջմիածին», Բ, Գ, Դ, 1959։

[31] Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 76։ Խաչի ժողովրդական մեկնությունների մասին տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 179—192։

[32] Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները..., էջ 43։

[33] Ագաթանգեղոս, Պատմություն..., էջ 375, 376, 379 և այլն։ Տե՛ս նաև Հ. Օրբելի, Դիվան I, էջ 46։ Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», Գ, 1954, էջ 20, նաև՝ Դ, էջ 31—32։

[34] Ագաթանգեղոս, Պատմություն..., էջ 381։

Հնագույն խաչաքանդակների ներքևից դեպի խաչը բարձրացող քանդակները երբեմն դիտվել են որպես բոցի լեզվակներ, իսկ երբեմն էլ՝ վարսանդապտղային սիմվոլներ, պտղաբեր ճյուղեր[36]։ Խաչքարերի զարդարվեստի հետագա առաջընթացի ժամանակ այդ, այսպես կոչված, արմավենիկի զարդամոտիվների ծայրերին հանդես են գալիս նաև նռան և խաղողի քանդակներ (տե՛ս Կոշի որմնափակ խաչքարերը, նկ. 19, 48, 51, 117, 131, 201ա)։ Մեկ այլ դեպքում այդ քանդակները վերջավորվում են ծաղկանման փոքրիկ վարդյակներով (տե՛ս Նորադուզի 996 թվակիր խաչքարը, նկ. 75)։ Այս հանգամանքները կարծես թե խոսում են հիշյալ զարդամոտիվների բուսական ծագման օգտին։

Ուսումնասիրողների մոտ թեև որոշ տարակարծություններ կան խաչքարերի խաչաքանդակների ներքևում պատկերված կլոր վարդյակների գաղափարական բովանդակության շուրջ, բայց այդ հարցում իրավացի է թվում Ա. Մնացականյանը[37]։ Այդ տեսակետի օգտին են խոսում հնագույն խաչքարերի վրա հիշյալ մոտիվի բուսական կամ ուղղակի նռան տեսքով պատկերումը (նկ. 46, 47, 50, 57, 68, 70, 72, 75 և այլն)։ Հետագա դարերում էլ խաչի ներքևի վարդյակի բուսական հատկանիշը չի անհետանում։ Օրինակ՝ Վանեվանի «Ամենափրկիչ» խաչքարի (1285) խաչաքանդակի միակ զարդը ներքևում պատկերված նռան մոտիվն է։ Վարդյակներ կամ շրջանաձև պատկերներ միևնույն խաչքարերի վրա երբեմն լինում են երկուսից երեքը, և գիտնականները ենթադրել են, որ դրանք պատկերում են արևը[38], երկրագունդը[39], անգամ հացը[40]։ Սակայն փաստերն առայժմ խոսում են այդ վարդյակների բուսական խորհրդանիշ լինելու օգտին. չմոռանանք հիշեցնել, որ հետագա մի շարք խաչքարերի վրա նման վարդյակների մեջտեղում պատկերվել է Ադամը՝ երբեմն համապատասխան մակագրությամբ, կապված դարձյալ ծլելու, ծաղկելու և աճելու հասկացողության հետ։ Խաչելության խաչքարերի զարդաձևերում իրենց տեղն ունեն նաև լուսատուները։ Ուշագրության արժանի է այն հանգամանքը, որ արեգակը մեծ մասամբ պատկերվել է ճառագայթաձև, իսկ լուսինը հարթ եզրագծով (նկ. 167, 169, 171, 172)։

Հետաքրքիր է, որ Մեծ Մազրայի 881 թվակիր խաչքարի խաչաքանդակի ներքևում պատկերված պատվանդան զարդամոտիվի մեջ անգամ պատկերված են աստիճանաձև բուսական քանդակներ (նկ. 53), որոնք Գ. Հովսեփյանի կարծիքով, Գողգոթայի բլուրն են պատկերում։ «Խարիսխաձև, ճախարակաձև ոսկի խարիսխ» անվանել է Ագաթանգեղոսը հուշասյուն կոթողների պատվանդանները[41]։

Մեր կարծիքով, իրավացի չէ Ա. Մնացականյանը, երբ ենթադրում է, որ խաչքարային կոթողները խաչքար անվանվելու համար պարտադիր կարգով պետք է ունենան խաչին հարակից զարդամոտիվներ։ VIII—IX դդ. բազմաթիվ խաչքարերի օրինակից ակնհայտ է, որ խաչքարային կոթողների համար սկզբնական շրջանում այդ հարակից զարդամոտիվները (խաչի ներքևից դուրս եկող արմավենիկները, խաղողը, նուռը և այլն) երբեք էլ պարտադիր չեն եղել (նկ. 47, 52, 55, 65)[42]։ Դրանք սովորական են դառնում քիչ ավելի ուշ։

* * *

VIII—XI—XIII դդ. Հայաստանում կերտվել են հազարավոր և բազմազան խաչքարեր, որոնց

---

[35] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 143։

[36] Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 185։

[37] Նույն տեղում։

[38] Л. С. Давлианидзе, К изучению цундско-тмогвских хачкаров (крестов-камней). Вестник Гос. музея Грузии, XX в., 1959, стр. 195.

[39] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 137։

[40] Սամվել Պատրիկ, Խաչքարային արվեստի երկու գլուխգործոցներ, «Ջահակիր», 1966, №149, էջ 3։

[41] Տե՛ս Ագաթանգեղոս, Պատմութիւն..., գլուխ ԾԲ, 736, էջ 375։

[42] Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 185։



V (109). Կոշ. խաչքար-հուշարձան՝ կանգնեցված 1195 թ. Արագածոտն գավառի սելջուկներից ազատագրման առթիվ

[illegible]

գյուղի մասը պատմագիտական և արվեստագիտական մեծ արժեք ունի։

Ստորև ներկայացնում ենք XI—XIII դդ. առավել բնորոշ խաչքարերի մի շարք նմուշներ իրենց արձանագրություններով։

1029 թվակիր ձվաձև մի խաչքար ունենք Ճամբարակից (Կրասնոսելսկի շրջան) կանգնեցված տաճարի շինության առթիվ։ Բարձրությունը 1,55 մ է, լայնքը կենտրոնական մասում՝ 1,10 մ, հաստությունը՝ 0,20—0,25 մ (նկ. 83)։ Արձանագրությունը փորագրված է խաչքարի ներքևում, 4 տողով, իսկ թվականը՝ խաչաթանգակի հորիզոնական թևի ձախ կողմի ներքևի արանքում.

ՀԱՅ ԹՎԱԿԱՆՍ ՆՀԸ /=1029/։
ՅԱՆՈՒՆ Ա/ՍՏՈՒԾՈ/Յ, ԵՍ ՓԱՂՈՍ ԵՐԷՑ ՆԱՌԱ Յ/ԻՍՈՒ/Ս/Ի ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԷՑ/ԻՍ/ ՎԱՆՍ[43] ԻՄ ՀՈԳՈՅՍ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ Ս/ՈՒ/ՐԲ ԳՐ/Ի/ԳՈՐ[44]։

Ցաղաց քարի 1041 թ. կառուցված ս. Կաթողիկե եկեղեցի-տապանատան ճակատին դրված և «ս. Երրորդություն» կոչվող երկու խաչքարերը քանդակազարդված են պարանահյուս գրվագներով (նկ. 90, 91)։ Այս խաչքարերը ձեռք են բերել ֆունկցիոնալ կարևոր նշանակություն ևս. հուշարձանի ճակատը զարդարված է ամբողջությամբ և ճարտարապետական մի բոլորովին նոր հորինվածք է, որի միջոցով հիանալի լուծում է ստացել հուշարձանի ճակատի ձևավորումը երկու խաչքարերով և նրանց միջև բացված կամարաձև մի խորշով (նկ. 197)։ Հուշարձանի հինգ տողանոց արձանագրության մեջ ասվում է.

ԵՍ ՀԱՅՐ ՎԱՐԴԻԿ ԱՌԱՋՆՈՐԴ Ս/ՈՒՐ/Բ ՈՒԽՏԻՍ
ՑԱՂԱՑ ՔԱՐԻ
ՇԻՆԵՑԻ ԶՍ/ՈՒՐ/Բ ԿԱԹՈՂԻԿԷՍ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ
ԶՆՇԱՆ
Ս/ՈՒՐ/Բ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱՍՆ ԻՄ ՀՈԳՈՅՍ
ՓՐԿՈՒԹԵԱՆ...[45]։

Արձանագրությունը թեպետ չի թվագրված, բայց Ստ. Օրբելյանը վկայում է, որ սույն կառուցումները կատարվել են 1041 թ. հայր Վարդիկի կողմից[46]։ Քարի թիկունքին, ներսի կողմից պահպանվել է նվիրատվական մի արձանագրություն ևս՝ նույն հայր Վարդիկի անվամբ, որը թվագրված է 1051 թվականով[47]։

Ցաղաց քարի ս. Երրորդության խաչքարերը իրենց խաչաթանգակի ներքևի կլոր վարդյակներով աղերսվում են Կեչառիսի ս. Գրիգոր և ս. Նշան տաճարների միջև տեղադրված խաչքարերի համապատասխան զարդամոտիվներին։

Խաչքարային արվեստի անկրկնելի մի կոթող է Բջնիի (Հրազդանի շրջան) XI դարի տաճարի արևելյան պատի տակ կանգնած վեց գեղաքանդակ խաչքարերից մեկը՝ առավել հին անարձանագիր խաչքարը (նկ. 87)։ Այն կերտված է բազալտ քարից, դրված 1,15 մետր բարձրությամբ սրբատաշ երկաստիճան պատվանդանի վրա։ Բուն խաչքարի բարձրությունը 1,92 մ է, լայնքը՝ 1,09 մ, հաստությունը՝ 0,21 մ, ընդհանուր բարձրությունը պատվանդանի հետ՝ 3,07 մ է։ Ելնելով նրա քանդակային մոտիվների և X դ. ինչպես և XI դ. ընթացքի ճարտարապետական հուշարձանների նույնատիպ զարդաքանդակների մեծ նմանությունից, կարելի է այն անվերապահ կերպով թվագրել XI դ. առաջին կեսով։ Բացառված չէ, որ այն կերտվել է տաճարը կառուցել տվող Գրիգոր Մագիստրոս Պահլավունու պատվերով՝ հուշարձանի ճարտարապետ վարպետի ձեռքով, 1030-ական թթ.[48]։

Հավուց թառի 1031 թ. խաչքարի շրջանակի չորս կողմերում դրված փոքրիկ հիշատակագրությունը ծառայել է նաև որպես զարդամոտիվ՝ առայժմ հնագույնը խաչքարերի նման զարդագրության մեջ, չհաշված, անշուշտ, Զորագյուղի 984 թվակիր խաչքարը, որի շրջանակի գրերը փորագիր են և ոչ ուռուցիկ (նկ. 68, 92). բարձրությունը 0,72 մ է, լայնքը՝ 0,41—0,45 մ, հաստությունը՝ 0,10 մ։

Հայաստանում XI դ. առաջին կեսին բուռն զարգացող խաչքարաշինությունը և ընդհանրապես շինարարական կյանքը սելջուկյան ավերիչ արշավանքների տարիներին անկում են ապրում։ Այդ պատճառով նշված ժամանակաշրջանից շատ քիչ խաչքարեր են մեզ հայտնի։ Սակայն XI դ. 80-ական թթ. կյանքը աստիճանաբար սկսում է վերակենդանանալ։ Հիշյալ շրջանից ուշադրության արժանի են հետևյալ խաչքարերը.

---

[43] «Վանս» հավանաբար գրչի սխալ է, պետք է կարդալ «վասն»։

[44] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[45] Ս. Բարխուդարյան, Դիվան..., պ. III, էջ 151։

[46] Ստ. Օրբելյան, Պատմություն..., էջ 340։

[47] Ս. Բարխուդարյան, Դիվան..., պ. III, էջ 152։ Նշված խաչքարերից մեկի բարձրությունը 3,19 մ է, լայնությունը՝ 1,59 մ, հաստությունը՝ 0,25 մ, մյուսի բարձրությունը 2,77 մ է, լայնությունը՝ 1,43 մ, հաստությունը՝ 0,21 մ։

[48] Փարիզում հրատարակված «Հայկական խաչքարեր» ալբոմում այս խաչքարը սխալմամբ համարված է XIII դարի։

Ստեփանավանի Կուրթան գյուղում պահպանվել է բազալտից կերտված, համարյա անզարդ, բայց մոնումենտալ ս. Գևորգ (Գորգ) խաչքարը[49]։ Բուն խաչքարի բարձրությունը 2,10 մ է, լայնքը՝ 1,03—1,05 մ, հաստությունը՝ 0,16 մ։ Խաչքարի ուղղանկյուն շրջանակին խոշոր տառերով փորագրված է.

ՇԼԵ /=1086/ ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ, ԹԱԳԱՎՈՐՈՒ
ԹԵ/ԱՆ
ԿՈՒՐԻԿԷԻ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԱՒՔ ՍԱՐԳԻՍՈ, ԴԱՎ-
ԹՈ, ԳՈՐԳԻ,
ՆՈՐՈԳԷՑԱՔ ԶՍ/ՈՒՐ/Բ ԳՈՐԳՍ ԲԱՐԷԽՈՍ ՈԳՈՑ
ՄԵՐՈՑ[50]։

Կուրթանի խաչքարի մոտավոր նմանակն ունենք Հաղբատի Տաշտաձոր կամ Խոչակաձոր վայրից, որը գտնվում է Ալավերդուց Ախթալա տանող ճանապարհի եզրին, Նեղոց գյուղից մեկ կմ հեռավորության վրա, Դեբեդի աջ ափին[51] (նկ. 94)։ Բազալտ քարից կերտված «Տերունական» կոչվող այս խաչքարը կանգնած է ոչ բարձր պատվանդանի վրա։ Նրա բարձրությունը 1,34 մ է. լայնքը՝ 0,78—0,77 մ, հաստությունը՝ 0,16 մ, պատվանդանի բարձրությունը՝ 0,34 մ։ Խաչքարի ուղղանկյուն շրջանակին, երեսին, թիկունքին և կողին փորագրված են արձանագրություններ։ Շրջանակին գրված է.

ՇԼԸ. Թ/ՎԻՆ/ /=1089/ ԵՍ Տ/Է/Ր ՍԱՐԳԻՍ ԱՌԱՋ-
ՆՈՐԴՍ ՀԱՂԲԱ-
ՏԱ, ԿԱՆԳՆԵՑԻ ԶՆՇԱՆՍ Տ/Է/ՐՈՒՆԱԿԱՆ ԶԵՆ ՀԱ
ՒԱՏԱՑԵԼՈՑ
ԵՒ ՊԱՀԱՊԱՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ ՄԵՐՈՑ ԿԻՒՐԻԿԷԻ,
ՍՄՊԱՏԱ ԵՒ
ԴԱՒԹԻ ԶԱՐՄԻ ՍՈՑԱ[52]։

Խաչի հորիզոնական թևերից վերև.

Ս/ՈՒՐ/Բ Տ/Է/ՐՈՒՆԱԿԱՆ ԼԵՐ ԲԱՐԵԽԱՒՍ Տ/Է/Ր
ՍԱՐԳՍԻ Ի ՔՈՒՄ ՅԱՌԱՋԱԳԱՈՒԹԵ/Ա/ՆՆ[53]։

Խաչքարի թիկունքին 16 տողով գրված է հետևյալը.

ՇԼԵ /=1086/ Թ/ՎԻՆ/ ԵՍ Տ/Է/Ր ՍԱՐԳԻՍ ԱՌԱՋ
ՆՈՐԴ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ ՀԱՂԲԱՏԱ՝ ՇԻՆԵՑԻ ԶՋԱ-
ՂԱՑՍ ՍԲ ԱՅԱՅՍ ԱԶԱՏԱՑԱՑ, ԱՅԳԻ ԵՐ ՋԱՑԻՐՍ,
ՑՍԿՍԵՐ ՍՐ ՋՐԻԱԽՏՍ ԶԱՆԱԶԱՆ ՄՐԳԱԲԵՐԱՑ Ի
ՓԱՌՍ ՍՐԲՈՅ ՆՇԱՆԻՆ ԵՐ Ի ՎԱԽՃԱՆՄՆ ՏԱՆՍ
ՀԱՂԲԱՏԱՑ։ ԱՐԴ ԵԹԷ ՈՔ ԶՍԱ Ի ՀԱՂԲԱՏԱ ՀԱՆԷ
ԿԱՄ ՍՄԱ ԱՐԵՐՄԱՆՆ ՊԱՏՃԱՌ ԼԻՆԻ Ի ՄԵԾԱՑ
ԿԱՄ Ի ՓՈՔՈՒՆՑ, ԿԱՄ ԱՌԱՋՆՈՐԴ ՈՐ Ի ՍՄԱ
ՇԻՆՈՒԹԵ/ԱՆ/ ԶՋԱՆԱ, ԱՅՆՊԻՍԻՔՆ ՈՐՈՇԵԱԼ
ԼԻՑԻՆ ՅԱ/ԱՍՏՈՒԾՈ/Յ ԵՒ ԸՆԴ ՈՐԴՈՑՆ ԿՈՐՍՏԷ-
ԱՆ ԵԼՑԷ Ի ԽԱՒԱՐՆ ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ՅՈՐԴՆ ԱՆ-
ՔՈՒՆ[54]։

Խաչքարի հարավային կողքին փորագրված է՝

ԵՒ ՋՔԻԹ ԷՐԷՑ[55], որ, հավանաբար, խաչքարը կերտող վարպետի կամ արձանագրության գրչի անունն է։

Արձանագրության համաձայն խաչքարը կանգնեցված է 1089 թ., իսկ շինարարությունն ու նվիրատվությունը, ըստ կոթողի թիկունքի արձանագրության, կատարվել են դրանից առաջ։ Այստեղ առաջացած թվականների խառնաշփոթությունը, մեր կարծիքով, կատարվել է գրչի սխալի հետևանքով, ուստի խաչքարի կանգնեցման արձանագրությունը պետք է թվագրված լիներ ՇԼԵ, իսկ թիկունքի շինարարական ու նվիրատվական արձանագրությունը՝ ՇԼԸ։ Կարծում ենք, որ խաչքարը կանգնեցված է 1086 թ. (ՇԼԵ), Հաղբատավանքի առաջնորդ տեր Սարգսի կենդանության օրոք, այնուհետև խաչքարի թիկունքին նշվել են 1089 թ. նրա կատարած շինարարական և նվիրատվական աշխատանքները։ Տեր Սարգսի մահից հետո, հավանաբար, խաչքարի խաչի հորիզոնական թևերի վերևի արանքում ավելացնում են. «Սուրբ տէրունական լեր բարեխաւս տէր Սարգսի ի քում յառաջագաութե/ա/ննն» հատվածը։

Ամրասում պահպանվել է Ղազար կազմողի խաչքարը 1091 թ. արձանագրությամբ.

Ի ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ. ՇԽ (=1091) ԷՐ
ԵՍ ԱՐՐԷՀԱՄ ԵՐԷՑ ԿԱՆԳ-
ՆԵՑԻ. ԶԻՍ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՍՋԻՔ.
ԵՍ ՂԱԶԱՐ ԿԱԶՄԵՑԻ, ԶԻՍ Յ[ ]ՇԵՑԷՔ Ի ՔԻ...

Կարճաղբյուրի «Դաշկափուռ» հուշարձանի ներսում է գտնվում բազալտ քարից 1097 թվակիր արձանագրությամբ և խաչբուռի պատկերմամբ մի հին խաչքար. բարձրությունը 1,64 մ է, լայնքը՝ 0,90—0,91 մ, հաստությունը՝ 0,32 մ։ Խաչքարի կամարաձև շրջանակի վերևի երկու անկյուններում և խաչի հորիզոնական թևերի վերևի արանքներում դետեղված է փոքրիկ հիշատակագրություն.

---

[49] Խաչքարն այժմ ընկած է գետնին, սրբատաշ քարերով շարված մեծ պատվանդանը ավերված է։

[50] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Նախկինում այն հրատարակվել է սխալներով, տե՛ս «Ազգագրական հանդես», գիրք 7—8, Թիֆլիս, 1901, էջ 339։

[51] Այս վայրը տարբեր ժամանակներում տարբեր անվանումներ է ունեցել. «Տաշտաձոր», «Խոչակաձոր», «Խաչի թալա» և այլն։

[52] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 263, Հեղինակն անձամբ չի տեսել արձանագրությունը, այն վերցրել է Բժշկյանից, որը և առանձին սխալներ և բացթողումներ է կատարել։ Բերում ենք ըստ մեր հավաքածուի։

[53] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[54] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Տե՛ս նաև Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 263։

[55] Վերցրել ենք մեր հավաքածուից։

ԹՎ/ԻՆ/ ԺԴ (=1097 Թ.), ՀԱՍԱՆ ԿԱՆԳՆԵՑ ԶԽԱՉ[56]

Արձանագրությունը թվագրված է սարկավագյան տարեթվով՝ «ԺԴ» (13+1084=1097 թ.), այլապես պետք ենթադրել, որ այն գրչի սխալի հետևանք է։ Այն չենք կարող Հայոց մեծ թվականով թվագրել, քանի որ այդ դեպքում կստացվի 13+551=564 թվականը, իսկ այդ և հետագա՝ VII դ. խաչքարեր չունենք, այն էլ թվագրված։

Կարճաղբյուրի այս խաչքարը քարե մի սալ է, որի կամարաձև շրջանակի մեջ պատկերված խաչքարանդակի երկճյուղ ծայրերը վերջանում են երեքական գնդիկներով, որոնցից միջինները՝ սրբաձև, որը XI դ. պատկանելու հատկանիշ է։ Խաչի ներքևի թևից վեր է բարձրանում խաչքարի ճեղագույն զրվագը։ Նրա բարձրությունը 1,64 մ է, լայնքը՝ 0,90—0,91 մ, հաստությունը՝ 0,32 մ։

Զաքարյանների իշխանության օրոք, XII դ. վերջերին շարունակվում է խաչքարաշինության վերելքը։ Այդ նոր շրջանը նախ և առաջ նշանավորվում է խաչքարային զարդամոտիվների գեղեցիկ ու նոր ոճավորումներով։ Այնուհետև դրանք գրեթե միշտ կանգնեցվում են ոճավորված ու բանդակազարդ պատվանդանների վրա։ Այդ շրջանից նշենք հետևյալ խաչքարերը.

1. XII դ. խաչքարեր կերտող ամենատաղանդավոր քանդակագործներից է Մշո Առաքելոց վանքից Գեորգ Ճոնակը։ Մինչև վերջերս այս շնորհալի վարպետի ձեռակերտը մեզ ծանոթ չէր. նրա կերտած երկու խաչքարերի հիշատակություններից հայտնի էր անունը, բայց գործը չկար։ Վերջերս միայն պատահաբար մեզ հաջողվեց «հայտաբերել» Գեորգ Ճոնակի բացառիկ շքեղությամբ կերտած խաչքարը և նորից վերծանել հիշատակագրությունը՝ որոշ ուղղումներ մտցնելով նրանում[57]։

Գեորգ Ճոնակի կերտած և մեզ հասած այդ ուշագրավ խաչքարը դժբախտաբար կոտրված է վերևից և ամբողջական գաղափար չի տալիս հատկապես նրա վերևի զարդաքանդակների մասին (նկ. 96)։ Սակայն նույնիսկ այդ բեկորից կարելի է պատկերացնել նրա տաղանդավոր քանդակագործի շնորհը և հմտության աստիճանը։ Խաչքարի ողջ ճակատը զարդարված է երկրաչափական հյուսածո նուրբ քանդակներով։ Նրա շրջանակների կողովահյուս քանդակների ֆոնի վրա չափազանց ճոխ են երևում խաչի և նրանից ներքև պատկերված մոտիվները, որտեղ հինգ ոճի անկրկնելի քանդակներով զարդարված մանվածոների մեջ չորս տողերի վրա կարդում ենք.

ԹՎ/ԻՆ/ Հ/ԱՅՈՑ/ ՇՂԴ /=1144/ ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ
Ի ԲԱ
ՐԷԽԱՒՍՈ/Ւ/Թ/ԵԱ/Ն Տ/ԵԱՌ/Ն ԴԱՒԹԻ ԱՆՅԱՂԹ
ՓԻԼԻՍՈՎՓԱՅԻ ՅԻՇԵՑԷՔ Ի Ք/ՐԻՍՏՈ/Ս Ա/ՂԱ/Չ/Ե/Մ,
ԶՄԵՂՈՒՑԵԱԼ ԳԷՈՐԳ ՃՈՆԱԿ ՅԻՇ[ԵՑԷՔ][58]։

2. 1154 թվակիր արձանագրությամբ, փոքրիկ, սպիտակավուն քարից գողտրիկ մի խաչքար անցյալ դարի 90-ական թվականներին բերվել է Մլքներբերդ կամ Մածնաբերդ վանքից Հարցհանգիստ գյուղը (այժմ՝ Բանանց գյուղ, Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմում, նկ. 98)։ Խաչքարի տեղն այժմ անհայտ է։ Նրա արձանագրությունը հետևյալն է՝ մեր վերծանությամբ[59]։

ԹՎ/ԻՆ/։ ՈԳ։ /=1154/։
ԱՆՈՒԱՄԲՆ Ա/ՍՏՈՒԾՈ/Յ, ԵՍ ՄԱՐԳԱՐԻՏ ԴՈՒՍՏՐ
ՈՒԽՏԻԿԱՅ
ԿԱ/Ն/ԳՆԵՑԻ ԶՍ/ՈՒՐ/Բ ՆՇԱՆՍ Ի ՓՐԿՈՒԹԻ/ՒՆ/
ՀՈԳՈՅՆ ՎԱՐԴԸՄԲԵՐԻՆ ԵՒ ՎԱՐԴԱՎՈՐ-
ԻՆ, ՄԽԻԹԱՐԱՅ ԵՒ ԿԱՆԱՆԻՆ։ ՈՐՔ
ԾԱՂԱԻԹՍ ՅԻՇԷՔ ԵՒ ԶԱՏ-
ՈՄ, ՈՐ ԳՈՐԾ-
ՈՂ ԷՐ ԽԱՉԻՍ[60]։

---

[56] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Յուրահատուկ մշակում ունեն 1118 թվակիր, Սարգիս կազմողի կերտած փոքրիկ խաչքարի խաչքարանդակի թևերը (նկ. 97)։

[57] Տե՛ս «Հայկական խաչքարեր», ալբոմ, Փարիզ, 1973, նկ. 177, որտեղ այն թվագրված է սխալ՝ XIV—XV դդ.։ Ըստ երևույթին խաչքարը խաչով է եղել։

[58] Տե՛ս նաև Ն. Սարգսյան, Տեղագրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս, էջ 232։

[59] Տե՛ս Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 292, «Ազգագրական հանդես», Ե գիրք, Թիֆլիս, 1899, էջ 309—310, Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, էջ 30—31։ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 189։ Նշված բոլոր աշխատություններում արձանագրության թվականը դարձել է ՈԴ (1155 թ.), փոխանակ ՈԳ (1154 թ.) (լուսանկարից այդպես է երևում), իսկ Վարդըմբեր և Վարդավոր անունները էլ՝ «Զարդըմբեր» և «Զարդավորին», որպիսիք անհայտ անուններ են։ Զարդըմբեր և Զարդավորին սխալ ընթերցված անունները թյուրիմացության մեջ են գցել պրոֆ. Հ. Աճառյանին, որոնցից էլ նա անստույգ եզրակացությունների է հանգել (տե՛ս «Անձնանունների բառարան», հ. Ե, Երևան, 1944, էջ 170)։

[60] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Արձանագրությունն ընթերցել ենք լուսանկարից։

3. XII դ. խաչքարերի հիանալի նմուշ ունենք Ջրվեժից։ Այն կերտել է քանդակագործ Վարդը։ Կանգնեցված է ջրի վեճի առթիվ սպանված ումն Խաչատուրի շիրմի վրա՝ 1173 թ.[61] (նկ. 100)։ Խաչքարը և նրա առջևում դրված դագաղաձև տապանաքարը կերտված են տեղական նարնջագույն տուֆից։ Խաչքարի բարձրությունը 1,90 մ է, լայնքը՝ 0,90 մ, հաստությունը՝ 0,28 մ։ Պատվանդանը եղել է պարզ ու հասարակ, միակտուր խորանարդաձև քարից[62]։ Կոթողի հիշատակագրությունը, որը հրատարակվել է չորս անգամ, ունի որոշ անճշտություններ ու թերություններ[63]։ Արձանագրությունը փորագրված է նրա երկթեք տապանաքարի հյուսիսային լանջին, չորս տողով։ Ահա այն՝ մեր լրացումներով։

ԱՅՍ ՏՈՒՆ ՍԴՈ ՄԹԱՆ...[64] ԽԱՉԱՏՐԷ, ՈՐ ՍՊԱՆԱՒ Ի
ՎԵՐԱ ՋՐՈՒՍ ՋՐՎԺՈ. ԿԻՍԱՒՐԵ ԵՂԻ ՅԱՇԽԱՐՀԵ
ԵՒ ԹՈՂԻ ԿՍԿԻ
Ծ ՄՆՈՂԱՑ ԻՄՈՑ։ ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԻՔ Ս[ՈՒՐ]Բ
ՆՇԱՆԻՍ ՅԻՇԵՍՋԻՔ Ի Տ[Է]Ր։
Թ[ՎԻՆ] ՈԻԲ [=1173]։ ՎԱՐԴ[65]

Վերջին Վարդ=Վարդան ավելի խոշոր տառերով է փակագրված և հարկավ այն կերտող վարպետին է վերաբերում։ Նույն Վարդ—Վարդան կազմողի գործն ենք համարում Արամուսում չորս եղբայրների կողմից 1165 թ. կանգնեցված զույգ խաչքարերը (մեկն անհայտ) և Եղվարդում (Նաիրիի շրջան) ումն «Պառկանի» ու «Հետեւակի» բարեխոսության համար 1160 թ. կանգնեցված խմբական և մի քանի այլ խաչքարեր, որոնք նաև ու խաղողի զարդագրությամբ (և ժամանակով) անչափ նման են Ջրվեժի հիշյալ խաչքարին (նկ. 99—101 և 187)։

4. Սանահնում 1184 թ. Գրիգոր Տուտեորդու կանգնեցրած խաչքար-կոթողը ոչ միայն XII դ., այլև ողջ միջնադարյան Հայաստանի քանդակագործական և ճարտարապետական արվեստի մանր ձևի ամենակատարյալ նմուշն է (նկ. 102, 103)։ Նրա ընդհանուր բարձրությունը 4,63 մ է, ընդ որում բուն խաչքարի բարձրությունը 2,25 մ է, լայնքը՝ 1,04 մ, հաստությունը՝ 0,23 մ։ Այն պատրաստված է կարմիր քարից և կանգնեցված է շքեղ ոճավորված պատվանդանի վրա։ Կոթողը կերտել են միջնադարյան Հայաստանի ամենատաղանդավոր վարպետներից մեկը՝ Մխիթար կազմողը և նրա աշակերտ Ավետիսը[66]։

Նույն շրջանում Սանահնում գործել է ևս մի շնորհաշատ վարպետ, որի անվան սկզբնատառերը դեռևս չեն վերծանվել։ Դա վարպետ Փ. Յ. Ս.-ն է, որը կերտել է ամիրսպասալար Սարգիս Զաքարյանի և Սարգիս Համազասպյան-Մամիկոնյանի գեղեցիկ խաչքարերը՝ 1187 և 1215 թթ.[67] (նկ. 105, 127, 128)։ Մի խաչքար էլ նա կերտել է Հոռոմայրի վանքում։

5. Ուշագրավ է, որ վերոհիշյալ շքեղ ու գեղաքանդակ խաչքարերի կողքին նկատելի են երկրի նախկին տերերի ու նրանց հարազատների կանգնեցրած համեստ ու պարզ կոթողները։ Նման կոթողներից կարելի է նշել Կյուրիկե III թագավորի դուստր Մարիամի և Աբաս թագավորի կին Վանենու XII—XIII դդ. խաչքարերը։ Դրանցից առաջինը գտնվում է Ախթալայի Ալ. Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցի բակում։ Խաչքարի թիկունքին, տասնմեկ տողի վրա, Մարիամի հետևյալ հիշատակագրությունն է.

ԵՍ ՄԱՐԻԱՄ, ԴՈՒՍՏՐ ԿԻՒՐԻԿԷԻ, ԿԱՆԳՆԵՑԻ
ԶՊՂՆՁԱՀԱՆԱՑՍ ՀՈՂՀԱՏԻ Ս[ՈՒՐ]Բ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ։ ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ՝ ԶՄԵԶ ՅԱՂԱԹՍ ՅԻՇԵՑԷՔ։ ԹՈՒ[ԻՆ] ՈԼԷ [=1188] Է[Ր][68]։

Նույնքան համեստ են Դեբեդի հայտնի կամրջի շինարարության առթիվ Վանենու կանգնեցրված և իր շիրիմի վրա դրված խաչքարերը (նկ. 115, 116)։

---

[61] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 134։

[62] Խաչքարը մինչև 30-ական թթ. գտնված է եղել Ջրվեժի հարավարևելյան ծայրամասի գերեզմանատանը։ Այժմ այն գտնվում է Պետական պատկերասրահում, իսկ տապանաքարն ու պատվանդանը մնացել են գյուղում, իրենց տեղում։

[63] Տե՛ս Ս. Սմբատյանց, Գեղարքունի, էջ 357։

[64] Այստեղ կորսված են մոտ 9 տառ։

[65] Աշխարհբեկ Քալանթար, Արագածը պատմության մեջ, Երևան, 1935, էջ 59։ Н. М. Токарский, Джрвеж I. Результаты раскопок 1957 г., Ереван, 1959, стр. 6, որտեղ հեղինակը արձանագրությունը ներկայացնում է Ս. Բարխուդարյանի վերծանմամբ։ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 134, 140։

[66] Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 178։

[67] Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Ն. Շահինյան, Համազասպյան-Մամիկոնյան իշխանական տոհմը Հյուսիսային Հայաստանում XII—XIII դդ., «Լրաբեր», 1968, № 3, էջ 84—93։

[68] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Արձանագրության մեջ նշված «հօզհառ», «հօզահառ» տերմինը պրոֆ. Բ. Առաքելյանը մեկնում է որպես թեք լանջերով և ձորերով եզերված հողամաս։ 1346 թ. մի ձեռագրի հիշատակարանում նշված է, որ Դանիելում VII գ. կառուցվել է ս. Սիոն տաճարը «ի վերայ Դանձոյ հօզահառին...» (տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 352)։ Խաչքարի բարձրությունը պատվանդանի հետ 2,48 մ է։

Վանենին թաղվել է Ճնող գյուղում[69]։ Նրա անվան խաչքարի թիկի վրա կարդում ենք.

Ս/ՈՒՐ/Բ/ Տ/ԵՐՈՒՆԱԿԱՆ ՈՂՈՐՄԵԱ ՎԱՆԷՆԷ.
ԹՎ/ԻՆ/ ՈՀԱ /=1222 Թ./[70]։

Իսկ խաչքարի առջևում գետնին դրված հսկա սալ տապանաքարի վրա խոշոր տառերով գրված է.

ՎԱՆԵՆԻ[71]

Սա հավանաբար Սանահինի հուշակավոր կամուրջը շինող, Զաքարե և Իվանե իշխանների քույր և Աբաս Կյուրիկյան թագավորի կին Վանենին է։

6. Դսեղում պահպանվել է 1195 թվակիր գեղաքանդակ մի խաչքար, որը «Պատրոն Սարգսի» գերեզմանային հուշարձանն է (նկ. 108)։ Կոթողի ընդհանուր բարձրությունը 2,74 մ է, ընդ որում բուն խաչքարի բարձրությունը 2,11 մ է, լայնքը վերևում՝ 0,89 մ, ներքևում՝ 0,85 մ, հաստությունը՝ 0,35—0,37 մ։ Հետևյալ արձանագրությունը փորագրված է խաչքարի ներքևի մասում.

ԹՎ/ԱԿ/ԱՆՈՒԹԵԱՆ/ ՀԱՌՑ ՈԽԴ /=1195/։
Ա/ՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՊԱՏՐՈՆ ՍԱՐԳՍԻ[72]

Դսեղի այս խաչքարը անտիկ շրջանի ուլունքաշար զարդամոտիվների առաջին կրողներից մեկն է, եթե ոչ առաջինը։ XII—XIII դդ. նման մոտիվները գտնում են սահմանում հայկական խաչքարերի զարդարվեստում (Կոշ, Բջնի, Հաղարծին, Հովհաննավանք, Աղջոց ս. Ստեփանոս, Անբերդ, Մշկավանք և այլն)։ Այս և անտիկ շրջանում սիրված շատ այլ զարդամոտիվներ IV—V դդ. սկսած փոխանցվել են նաև հայկական ճարտարապետական հուշարձաններին (Դսեղի բազիլիկան, Անիի ս. Փրկչի եկեղեցին, Ծաղաց քարի ս. Կարապետ տաճարը և այլն)[73]։

Ուշագրավ են Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի XII դ. չորս գեղաքանդակ խաչքարերը (գործ Սամվել կազմողի)։ Դրանցից մեկի արձանագրությունը հետևյալն է.

Ի։ Ո։ ԵՒ։ Խ։ /=1191/ ԹՎԱԿԱՆԻ Հ/ԱՅՈՑ/ ՅԱՆՈՒՆ Ա/ՍՏՈՒԱԾՈ/Յ ԵՍ ՎԱՐԴԱՇԱՀՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՎԵՐԱ ՀԱՆԳՂՍՏԱՐԱՆԻ ԿԵՆԱԿՑԻ ԻՄՈՅ ԱՆԻՓԱՅԻ, ԶԻ ԿԵՍԱՒՐԵ ՓՈԽԵՑԱՒ ՅԱՇԽԱՐՀ ԵՒ ԵԹՈՂ ԶԻՍ ՍԳԱԼԻ ԿԵԱՆԱՒՔ։ ԵՒ ԱՊԱ ՆԱԽԱԺԱՄԱՅՆ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԵՐՐՈՐԴ ԽԱՉԵՐՍ ԾՆՈՂԱՑ ԵՒ ԵՂԲԱՐՑ ԻՄՈՑ։ Ի Ք/ՐԻՍՏՈ/Ս ՅԻՇԵՑԷՔ ԶԱՄԵՆԵՍԵՆ։ ՍԱՄՈՒԷԼ ԿԱԶՄՈՂ[74]։

Ուշագրության արժանի են նաև Լոռի-բերդի, Անիի և Կյուրիկյան թագավորության մեկ այլ ճյուղի՝ Նոր Վարագավանքի XII դ. խաչքարերը (նկ. 111, 113, 114)։

7. XII դ. ավարտվում, իսկ XIII դ. սկսվում են ժամանակի հուշակավոր զորավարներ Զաքարե և Իվանե եղբայրների գլխավորությամբ հայոց և վրաց զորքերի հաղթարշավները սելջուկ-թուրքերի դեմ։ Ահա այդ հաղթարշավներից մեկի ժամանակ Արագածոտն գավառի և Անբերդ ամրոցի ազատագրության պատվին՝ Պետրոս Ականատեսը (Կոշավանքի առաջնորդ) և ամիրսպասալար Զաքարեն կանգնեցնում են հաղթական երկու հոյակապ խաչքար-կոթողներ (նկ. 109, 118)։

Առաջին կոթողը կանգնեցված է Կոշում։ Նրա ընդհանուր բարձրությունը 6,80 մ է։ Խաչքարի ձևավորված պատվանդանի արևմտյան ճակատին, միակտուր քարի վրա փորագրված տաստողանի արձանագրության համաձայն, այն կանգնեցրել է Պետրոս Ականատես վարդապետը՝ 1195 թ. Արագածոտն գավառը սելջուկ-թուրքերից ազատագրելու առթիվ։

Արձանագրության մեջ մասնավորապես ասված է.

«Ի ՈԽԴ /=1195/ ԵՍ ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՆԳՆԵՑԻ ԶՆՇԱՆՍ ԵՐԿՆԱՒՈՐ ԶՕՐ ՅԱՌԱՋ ՏԵՍԱ ՀՈԳՈ ԱԿԱՄԲՔ ՈԻԴ /=1175/ ԹՈՒԻՆ ԵՒ ՅԵՏ Ի /=20/ ԱՄԻ ՏԵՍԻ ԶԱՔԱՐԷ ԵՒ ԻՎԱՆԷ ՈՐԴԻՔ ՄԵԾԻՆ ՍԱՐԳՍԻ... ԵՒ ՍՐԲԵՑԱՒ ԵՐԿԻՐՍ ՄԵՐ ԵՒ ՊԱՅԾԱՌԱՑԱՆ ԵԿԵՂԵՑԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ։ ԵՒ ԱՐԴ ԻՄ ԿԱՆԳՆԵԱԼ ԶՍԱ ՅԱՐԵՒՇԱՏՈՒԹԻՒՆ ՇԱՀՆՇԱՀԻ ԵՒ Ի ՊԱՐԾԱՆՍ ՄԵՐ...»[75]։

---

[69] Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը ենթադրում է, որ Վանենու տապանաքարը գտնվում է Հաղբատավանքի գավթում (տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 182, 282), որտեղ նշված Վանենին Կյուրիկե 3-րդի քույրը և Վասակի կինն է (տե՛ս նույն տեղում, էջ 29—30)։

[70] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[71] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[72] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[73] Դսեղի IV—V դդ. բազիլիկ տաճարի որմնամույթների խոյակների վրա նկատելի է հեթանոսական տաճարի ավերակների պարանահյուս զարդերի առկայությունը, իսկ Անիի Փրկչի և Ծաղաց քարի XI դ. տաճարների վրա առկա են ուլունքաշար զարդամոտիվները։

[74] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Դրանցից մեկի տակ Սամուելը ստորագրել է Տերավագ կազմողի հետ միասին։

[75] Մանրամասն տե՛ս Ա. Ն. Շահինյան, Կոշի կոթողը և նրա արձանագրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 197—202։

Կոշի կոթողի արձանագրությունից պարզվում է, որ Զաքարեին «շահնշահ» տիտղոսով պատվել են ոչ թե 1199 թ. սկսած, ինչպես ենթադրում էր ակադ. Հ. Մանանդյանը, այլ 1195 թ.[76]։

Արագածոտնի ազատագրմանը հաջորդում է Անբերդ անառիկ ամրոցի գրավումը, և այդ առթիվ էլ Զաքարե Հայոց և Վրաց ամիրսպասալարը իր հերթին 1200 թ. կանգնեցնում է նռնաքանդակ կոթող խաչքար[77], հետևյալ արձանագրությամբ.

Ի ՈԽԹ /=1200/ ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ, ԵՍ ԶԱՔԱՐԵ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ, ՈՐԴԻ ՄԵԾԻ ՍԱՐԳՍԻ, ԱՌԻ ԶԱՆԱՌԻԿ ԱՄՐՈՑՍ ԶԱՆԲԵՐԴՈՅ ՅԱՂԱԽՆԱՑԵԾԻՆ ՈՐԴՈՑՆ ՀԱՔԱՐՈՒ, ՈՐ /ԱՌԱ/Յ Ի ՍՄԱ, Ի ԿՈՐՈՒՍՏ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ԵՒ ՅԱՒԵՐ ԵԿԵՂԵՑԵ/Ա/Ց ԵՒ ԵՏՈՒ ԱՌՆԵԼ ՋՆՋ/ԱՆՍ/Մ[78]։

Խաչքարի բարձրությունը 1,40 մ է, լայնքը՝ 0,80 մ, հաստությունը՝ 0,18 մ։ Կերտված է վարդագույն տուֆից և զարդարված է բուսական (նռան) քանդակներով։

2. XII դ. սկզբից մեզ են հասել մի շարք ուշագրավ խաչքարեր Կողբից, Օձունից, Հոռոմայրից, Մղարթից, Հաղբատից և այլն, որոնցից, արձանագրության բովանդակության տեսակետից կարևոր է հատկապես 1201 թվակիր Մղարթի խաչքարը՝ կանգնեցված ամիրսպասալար Զաքարեի զորավար՝ Սարգիս Համազասպյան-Մամիկոնյանի հիշատակին[79]։

3. Թալինի շրջանի Մաստարա գյուղի հյուսիսային ծայրին, գեղագիր բարձունքի վրա կանգնած է հյուսածո քանդակներով զարդարված մի հսկա խաչքար՝ 4 մ 32 սմ ընդհանուր բարձրությամբ, ընդ որում բուն խաչքարի բարձրությունը, նրա վրա դրված խոշոր քիվի հետ միասին, 3,42 մ է, ներքևում՝ 1,41 մ, հաստությունը՝ 0,37—0,40 մ, պատվանդանի բարձրությունը՝ 0,90 մ։ Խաչաքանդակի բարձրությունը՝ 1,50 մ է, իսկ ներքևի կլոր վարդյակի տրամագիծը՝ 0,78 մ։ Կերտված է կարմիր տուֆից։ Կոթողի տասներկուտողանոց արձանագրությունը փորագրված է լայնահիստ քիվի հյուսիսային կողին և ունի հետևյալ բովանդակությունը։

ԵՍ ԽԱՉՈՏ ՎԱՐԴԱՊԵՏՍ, ԱԶԳԱՒ ԾՆԸՆԴՈՑ ՅԱՅՍՄ ՇԻՆԷ,
ԿԱՆԳՆԵՑԻ ԶԱՀԱՒՈՐ ԶԱ/ՍՏՈՒԱ/ԾԸՆԿԱԼ Ս/ՈՒՐ/Բ ՆՇԱՆՍ
Ի ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԻ/ՒՆ/ ԾՆՈՂԱՑ ՄԵՐ, ԵՂԲԱՐՑ ՔԵՐՑ ԵՒ
ԱՄԷՆԱՅՆ ԱԶԳԱՏՈՀՄԻ ԵՒ ԻՆՁ[80]։

Ենթադրում ենք, որ այս արձանագրության մեջ հիշատակված Խաչոտ վարդապետը նույն ինքը Հոգեվանքի առաջնորդ Խաչոտ վարդապետն է և նա էլ հենց XIII դ. առաջին քառորդին (հավանաբար 1210-ական թթ.) կանգնեցրել է այդ կոթողը (նկ. 123, 124, 125)։ Խաչոտ վարդապետը որպես Հոգեվանքի առաջնորդ հիշատակվում է 1205 թվից։ Նույն այս Խաչոտ վարդապետը 1217 թ. Վ. Բազմաբերդ գյուղում (Թալինի շրջան) կանգնեցնում է մեկ այլ խաչքար՝ «Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՊԱԳՎԱՑ»։

4. Բջնիի 1219 թվակիր խաչքարի վարպետը մեծ հմտությամբ կարողացել է համանման զերվագների զուգորդությամբ կերտել արվեստի մի գեղեցիկ գլուխգործոց (նկ. 132)։ Նրա հինգտողանոց արձանագրությունից մնացել է հետևյալը.

Ի Թ/Ի/ՒՍ ՈԿԸ /=1219/ ՄԵՆՔ ԱՒՇԻՐԱ-
. . . . /ԿԱՆԳ/ՆԵՑ-
/ԱՔ/ . . . . Ո
Ց . . . .
Ա . . . . ./ՅԻՇԵ/ՑԵՔ Ի Ք/ՐԻՍՏՈ/Ս[81]

5. Գիլանլարում (Արարատի շրջան), մերձակայքի վրա իշխող բարձրադիր ու գեղատեսիլ մի վայրում, Խաղբակյան Գրիգոր իշխանի կինը՝ Զազին, 1233 թ. կանգնեցնում է գեղաքանդակ մի խաչքար՝ Ջալալեդդինի արշավանքների ժամանակ գերեվարված և սպանված իր ամուսնու հիշատակին[82]։ Բուն խաչքարի բարձրությունը 2,85 մ է, լայնքը՝ 1,18 մ, հաստությունը՝ 0,27 մ։ Կոթողի ընդհանուր բարձրությունը, պատվանդանի հետ

---

[76] Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952, էջ 134։

[77] Խաչքարն այժմ գտնվում է Անտառուտ գյուղի նորաշեն եկեղեցում։ Նրա նախկին տեղն անհայտ է, իսկ կոթողի այժմյան պատվանդանն էլ իրենը չէ, այլ V դ. խոյակ է։

[78] Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք..., մաս Ա, էջ 8—9։ «Որդոյն» ընթերցված է «որդոցն», էջ 9։

[79] Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Ն. Շահինյան, Մամիկոնյան-Համազասպյան տոհմը Հյուսիսային Հայաստանում XII—XIII դդ., «Լրաբեր», 1968, № 3, էջ 84—93։

[80] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Հ. Շահխաթունյանը («Ստորագրութիւն», հատ. II, էջ 48—49) և Ղ. Ալիշանը («Այրարատ», էջ 126) թեև չեն տալիս արձանագրության վերծանությունը, բայց մեջ են բերում նրա մոտավոր բովանդակությունը, սակայն «Խաչոտը» կարդում են «Խաչատուր» և կարծում, որ արձանագրության սկզբում թվական է եղել։

[81] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[82] Այս կոթողն այժմ վերականգնված վիճակում գտնվում է Էջմիածնի Մայր տաճարում։

միասին, 5,35 մ է (նկ. 142)։ Խաչքարի թևի վրա գրված է.

ԵՍ ԵՄ ԼՈՒՍ ԱՇԽԱՐՀԻ[83]

Թևից քիչ ներքև պատկերված են Քրիստոսը, աջից՝ Հովհաննեսը, ձախից՝ Մարիամը։ Այնուհետև խաչաքանդակից ներքև, կամարաձև շրջանակի մեջ պատկերված է, ամենայն հավանականությամբ, նույն ինքը՝ Գրիգոր իշխանը՝ ձիու վրա, աջ ձեռքին նիզակ։ Կոթողի պատվանդանի վրա գրված է.

ԹՎԻՆ ՈՁԲ /=1233/ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ ԽԱՂԲԱԿԱ[84]

Խաչքարի թիկունքին փորագրված է տասնմեկ տողանի հետևյալ արձանագրությունը,

ԱՅՍ ՆՇԱՆ ԿԵՆԱՑ ԿԱՆԳՆ-
ԵԱԼ Ի ՓՐԿՈՒԹԻ/ՒՆ/ ՀԶԱՒՐ ԶԱՒՐԱԿԱՆԻ Ք/ՐԻՍ-
ՏՈՍ/Ի ԳՐԻ-
ԳՈՐ ԻՇԽԱՆԻ, ՈՐԴՈ ԽԱՂԲԱԿԱ, ՈՐ ԲԱԶՈՒՄ Ա-
ՐՈՒԹԻՒՆ ՔԱՋՈՒԹԻ/ՒՆ/ ՑՈՒՑԵԱԼ ԸՆԴԴԷՄ ԹՇՆ-
[ԱՄԵԱՑ] Վ[Ա]Ս[Ն] ԽԱՉԻ Ք/ՐԻՍՏՈՍ/Ի ԵՒ ՅԵ-
ՏՈՅ ԸՄՐՈՆԵԱԼ Ի ԳԱ
. . . . ՀԱՍՏԱՆ ԱՐԵԱՄԲ ՓՍԱԿԵՑ
[ԿԵԱՆՍ ԻՒՐ ԲԱ]ԶՈՒՄ ՏՈՒԺԻՑ[Ն]։ ՈՐՔ ԵՐԿՐ-
ՊԱ[ԳԷՔ] . . . . ՈՅՆ Ի ՎԵՐԱ ԽԱՉ-
ԻՍ ՅԻՇԵՑ[ԷՔ] Զ[ՄԵՐ] Ի[Շ][ԽԱՆ] ԳՐ-
ԻԳՈՐ ԵՒ ԶԶԱՔԻՆ ԱՄՈՒՍԻՆ [ՆՈՐԱ,]
ՈՐ ԶԽԱՉՍ ԿԱՆԳՆԵԱՑ ԵՒ ԶՎ[Ա][ՄԱԿ]
ՈՐԴԻ ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐՈ ԱՐԷԼ[85]

Արելը հավանաբար խաչքարը կերտող վարպետն է, Զաքին՝ Գրիգորի կինը, որի մասին մի վկայություն էլ կա Աղցոց ս. Ստեփանոս վանքում։

6. Կողես գյուղի պատմական գերեզմանատանը մի ամբողջություն է կազմում բազալտե երեք խաչքարերից բաղկացած հուշարձանը, կանգնեցված 1241 թ. Տուրիկ իշխանի կողմից Հյուսիսային Հայաստանում մոնղոլական արշավանքների ընթացքում զոհված նրա երեք զավակների՝ Սասնայի, Քավթարի և Նորադինի հիշատակին (նկ. 143)։ Արձանագրությունը հետևյալն է.

ԿԱՄԱՒ ԲԱՐԵՐԱՐԻՆ Ա/ՍՏՈՒԾՈ/Յ, ԵՍ ՏՈՒՏԻԿՍ
ԵՒ ՄԱՅՐ ԻՄ ԹԱՄԱՐ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԴԵԴԻԿԱ,
ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԵՐՐՈՐԴՈՒԹԻ/ՒՆ/ ՎԱՍՆ ՍԱՍՆԱՐԻՆ
Ի ՔԱՒԹԱՐԻՆ ԵՒ ՆՈՐԱԴԻՆԻՆ, ՈՐՔ ԱՆՀԵՏ ԿՈ-
ՐԵՆ Ի ՋԵՌՍ ԱՆԱՒՐԻՆԱՑ ԵՒ ՍՈՒԳ ՄԵԾ ԵՒ ԱՆ-
ՄԽԻԹԱՐ ԹՈՂԻՆ ԶՄԵԶ։ ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵ-
ՑԷՔ Ի Ք/ՐԻՍՏՈ/Ս ԵՒ ՄՆՈՂՍ ՄԵՐ ԱՄԷՆ։
Թ/Ո/ՒԻՆ/ՈՂ (=1241 Թ.)[86]։

7. Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի արևելյան ծայրին, մի բարձրադիր վայրում, հին մատուռի մոտ գեղեցիկ ոճավորված, քանդակազարդ և թվավոր պատվանդանների վրա բարձրանում են մեծ ու փոքր բազալտե գեղաքանդակ երկու խաչքարեր (նկ. 144)։ Մեծ խաչքարի թիկունքին փորագրված ինը տողանի արձանագրությունը հրատարակված է սխալներով[87], ուստի այն տալիս ենք մեր վերծանությամբ և ուղղումներով.

Ի Թ/ՈՒ/ԻՍ ՈՂԴ /=1245/։ ԵՍ ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆ/Ա/
ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ՈՐԴՈՑ
ԻՄ ԵՓԻՓԱՆ/Ա/, ԵՓՐԵՄԻ ԵՒ ԵՂԲԱՐՑ ՆՈՅՈՒՆՑ՝
ԱԼԵՔՍԻՈՍԻ, ԻԳՆԱՏԻՈՍԻ ԵՒ ՀԱՒՐԵՂԲԱՒՐ ԻՄՈ
ՅՈՀԱՆ/ՈՒ/ ԱՐԴ ՈՐ ԵՐԿ/Ր/ՊԱԳԷՔ, ՅԻՇԵՍՋԻՔ
ԶՄԵԶ ԱՌ Ք/Ր/ԻՍՏՈ/Ս/։
ԶՍԱՄԵԼ ԵՒ ՏԵՐԱՒԱԳ ԿԱԶՄՈՂ ԽԱՉԻՍ ՅԻՇԵՑԷՔ
Ի Տ/Է/Ր։

Խաչքարի ներքևում, ուղղանկյուն շրջանակի մեջ երեք տողով գրված է.

ԵՍ ՍԱՐԳԻՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՀԱՆԳՍՏԱՐԱ-
ՆԻՆ...
ԹՈՒԹԵ . . . .[88]

Նրա թևի վրա մեկ տողով գրված է.

[ԳԱ]ՅՐՈՆ ՍԱՆԱՍԱՐՍ... ԹՈՒԹԵ ԼԵՐ ԲԱՐԵԽԱՒՍ
ԱՌ Ք/ՐԻՍՏՈ/Ս

Ավելի վատ է պահպանված փոքր խաչքարի թևի և նրա ներքևի արձանագրությունը։

8. Զարդանախշերի յուրահատուկ կոմպոզիցիա ունի Ամիրար կազմողի կերտած Բազաբանի 1253 թվակիր աղավնազարդ խաչքարը (նկ. 147)։ Նրա ներքևում յոթ տողի վրա փորագրված է հողմահարված հիշատակագրությունը։ Թվակա-

---

[83] Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, Բ հրատարակություն, Անթիլիաս/Երևան, 1969, էջ 42։ Հեղինակը «լուս» բառը ընթերցել է «լույս»։

[84] Նույն տեղում, էջ 42։

[85] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Գ. Հովսեփյանը տեսել է այս խաչքարը գետնին ընկած՝ երկու մասի բաժանված, որի համար էլ չի նկատել թիկունքի նույն արձանագրությունը։ Բայց նա ճիշտ է ենթադրել, որ կոթողը կերտել են Գրիգոր իշխանի հարազատները նրա մահվանից բավական հետո, նրա հիշատակը հավերժացնելու համար (նույն տեղում, էջ 42, 43)։

[86] Տե՛ս նաև «Ազգագրական հանդես», գիրք 7, էջ 342, որտեղ արձանագրության վերծանման մեջ աղավաղումներ կան։ Կոթողի առջևում հավանաբար դամբարան է եղել, այժմ ավերված է։

[87] Տե՛ս Ս. Բարխուդարյան, Արցախ, էջ 385։ Հիշյալ հրատարակությունից օգտվողները կրկնել են նույն սխալները։

[88] Վերցրել ենք մեր հավաքածուից։

նը գրված է խաչքարի շրջանակի վերևի երկու եզրերին.

ԹԻՎ ՉԲ /=1253/։
ԵՍ ՇԱՊՈՒՀ ՀԱՐԱՋ-
ԱՏ ՈՐԴԻ ԴԻՈՍԿՈՐ-
ՈՍ ՔԱՀԱՆԱՅԻ
ւԺԹ, Ր/ ԱՄ...
[ԲԱՐ]ԻԽ[ՈՍ.. ԾՆ]
ՈՂԱՑ ԽՄՈՑ[89]

Խաչքարի շրջանակի հարավային կողին գրված է.

ԵՍ ԱՄԻՐԱԲՍ ԿԱՋՄՈՂ ՅԻՇԵՑԵՔ ՅԱՂԱԻԹՍ[90]

9. Հայաստանի պատմության պետական թանգարանում ցուցադրվում է դեղնասպիտակավուն քարից 1260-ական թվականներին պատրաստված և Խաղբակյան Պռոշ իշխանին պատկանող սրբապատկերաքանդակներով հարուստ խաչքարի մի բեկոր (Նկ. 160)։ Ջնայած խաչքարի մյուս բեկորները մեզ հայտնի չեն, այնուհանդերձ, նրա քիվի առկա բեկորից էլ դժվար չէ կռահել, որ այն իր ժամանակի հաղվագյուտ գեղաքանդակ խաչքարերից է՝ զարդարված նուրբ ու ճոխ զարդաձևերով ու պատկերաքանդակներով։ Քիվի պահպանված բեկորի լայնքը 0,88 մ է, սակայն այն պետք է լիներ առնվազն 1,10—1,20 մ, քանի որ նրա հարավային մասից պակասում է ևս մի պատկերաքանդակ՝ թվով 7 և համապատասխանաբար պետք է ունենար մոտ 2,80 մ բարձրություն, որից մնացել է միայն 0,60 մ (հաստությունը 0,17 մ է)։ Արձանագրությունն սկսվում է անմիջապես քիվի ներքևից և ապա շարունակվում խաչի թեք շրջանակին.

ՈՂՈՐՄՈՒԹ/ԵԱՄ/Բ ՓԱՐՈՆ ԳՈՐ/ԳԵ/, Կ/ԱՆԿՆԵՑԱՐ
ԽԱՉՍ/...
...ՈՒՆ ԲԱՐԷԽԱՒՍ ԼԵՐ ՓՌՈՇԻՆ Ե/Ի/ ԻԻՐ ՄՆՈ-
ՂԱՑՆ/...[91]

Խաչքարի այս բեկորը բերվել է Կեչառիսի վանքից, ուստի պետք է ենթադրել, որ արձանագրության մեջ հիշատակված Պռոշը Խաղբակյան Պռոշ իշխանն է, Կոտայքի և Վայոց ձորի մի մասի տերը։

10. Պատմական Դսեղ գյուղի տերիտորիայում կան XIII դ. տարբեր վարպետների կերտած բազմաթիվ գեղաքանդակ խաչքարեր։ Անկասկած, այստեղ մենք գործ ունենք խաչքարաշինության առանձին դպրոցի հետ, միայն Լոռվա այս շրջանին բնորոշ քանդակագործական արվեստով։ Այս դպրոցի խաչքարերն աչքի են ընկնում բավական հարուստ քանդակներով և զարդաձևերի ինքնատիպ ոճով[92]։ Այս խաչքարերից առավել նշանավոր են Վարհամ վարպետի խաչելության խաչքարը, «Սիրուն խաչը», «Ս. Սարգիսը», «Ս. Հակոբը», «Ս. Գրիգորը» և այլն, որպիսիք հատուկ են Մամիկոնյան-Համազասպյան իշխանների տիրույթներում թե՛ Հյուսիսային Հայաստանում և թե՛ Վեդի գետի ակունքում (Նկ. 157, 161, 162, 168—170, 171, 172)։

11. Դեղձնուտի կամ Դեղձուտի վանքը (Իջևանի շրջան, Գետաշեն գյուղ) իր գողտրիկ գավթով հայկական միջնադարյան ճարտարապետության եզակի հուշարձաններից է, որին պատշաճ ուշադրություն դեռևս չեն նվիրել մեր մասնագետները, հավանաբար դժվարամատչելի վայրում լինելու պատճառով։ Տաճարի և գավթի շինարարական միակ և ընդարձակ արձանագրությունը գտնվում է Պողոս և Քաղաք անուններով վարպետների կերտած «Աստուածընկալ» կոչվող 1275 թ. խաչքարի վրա (Նկ. 164)։ Գոշավանքում հայտնի Պողոս վարպետն ու Դեղձնուտի համանուն այս վարպետը հավանաբար միևնույն անձնավորությունն են։ Կոթողի արձանագրությունը, տարբեր շարադրմամբ, ցարդ հրատարակվել է երկու անգամ, ընդ որում երկուսն էլ ունեն որոշ անճշտություններ[93]։ Ներկայացնում ենք այն Ս. Բարխուդարյանի վերծանմամբ, մեր դիտողություններով ու լրացումներով.

...ԻՆ Ա/ՍՏՈՒԾՈ/Յ ՁԱՒՐՈՒԹ/ԵԱՄ/Բ ՅԱՇԽ/ԱՐՀԱ-
ԿԱԼՈՒԹԵ/ԱՆ[ԱԲԵՂԱ ՂԱՆԻՆ][94] ԵՒ ՅԻՇԽԱՆՈՒ-
ԹԵ/ԱՆ/ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ԱԹԱԲ[ԱԿ ՍԱԴՈՒՆԻՆ,
ԵՍ Ա]ՌԱՔԵԼՍ, ՆՈՒԱՍՏ ՍՊԱՍԱՒՈՐ ԲԱՆԻՆ /Ա/Ս-
ՏՈՒԾՈ/Յ, ՅԵՐԿՐ/ԷՆ ԿԻԼԻԿ/Ի/Ո, Ի ԳԱՒԱՌԷՆ ՏԱՐ-
ՍՈՆԻ, ԿԱՄ/ԱԿՑՈՒԹ/ԵԱՄ/Բ [ՓԱՐՈՆ/ԱՑՍ]... ՇԻ-

---

[89] Ընթերցել ենք լուսանկարից։

[90] Ընթերցել ենք լուսանկարից։

[91] Արձանագրությունը հրատարակել է Ե. Մուշեղյանը։ Տե՛ս «Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների», պրակ 1, էջ 154։ Տեղում ինքներս էլ ընթերցել ենք այն ու կատարել լրացումներ։

[92] Հատկապես հատկանշական են այստեղի խաչքարերի խաչազանդակների արտածայր վարդյակները և խաչքարերի ճակատների բուսական, երկրաչափական և նույնիսկ կենցաղային մոտիվները։

[93] Գ. Սարգսյան, Դեղձնուտի վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1953, № 4, էջ 40—41 և Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 144։

[94] Հեղինակն այն վերագրել է «Հուլավու-Ղանին», այնինչ Հուլավուն մահացել է 1265 թ., որին հաջորդել է Աբաղա խանը 1265—1282 թթ., հետևաբար ճիշտ կլինի այն վերականգնել «Աբաղա-ղանին»։



VI (123). Մաստարա. խաչքար-հուշարձան Խաչուտ Մաստարիցը, 1210—1212 թթ.

[illegible]

ՆԵՑԱՔ ԶԷԿԵՂԵՑԻՍ ԱՄԵՆԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹ/ԵԱՄ/Բ ԵՒ ԶԴԱՒԻԹՍ ԵՒ ԿԱՆԳ[Ն]ԵՑԱՔ ԶՍ/ՈՒՐ/Բ ՆՇԱՆՍ Ա/ՍՏՈՒԱ/ԾԸՆԿԱԼ՝ Ի ՆԵՂ ԺԱՄԱՆԱԿԻ, Ի ԴԱՌՆ ԱՇԽԱՏՈՒԹ/ԵԱՄ/Բ

/ԲԱՐԷ/ԽԱՒՍ ՄԵԶ /ԵՒ/ ԾՆՈՂԱՑ Մ/ԵՐՈՑ/, ՅԱՐԵՒՇԱՏՈՒԹԻ/ՒՆ/ [ՊԱՐՈՆ ՍԱԴՈՒՆԻՆ] ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ՆՈՐԱ, ՈՐ ԵՂԵՒ ՁԵՌՆՏՈՒ ԵՒ ՄԽԻԹԱՐ ԿԵՆԱՑ ՄԵՐՈՑ՝ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵ/ԱՆ/ ՀԱՂԲԱՏԱ Տ/Է/Ր ՅՈՎԱՆԵՍԻ, ՈՐ Է ՀԵԶ ԵՒ ՄԱՐԴԱՍԷՐ ԵՒ ՄԵՐ ՅՈՅՍ[95]

Խաչքարի հարավային կողին գրված է.

ԱԿ..... ՂՈՎԻ.... ԲՆԱԿԻՉՔ Ս/ՈՒՐ/Բ ՈՒԽ/ՏԻՍ ԿԱՏԱՐԵՆ ՄԵԶ։ Դ։ /=4/ ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԾՆԸՆԴԵ/Ա/Ն։ Ը/=8/ [ԱՒՐԵԱԿԻՆ. ԿԱՏԱՐԻ]ՉԻՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱ/ՍՏՈՒԾՈ/Յ։ ԹԷ ՈՔ ՅԷԿԵՂԷՑՈՅՍ ԻՐԱՑ ՊԱԿԱՍԵՑՆԷ Ի ՄԵԾԱՑ

Կ/ԱՄ Ի Փ/ՈՔՐՈՒՆՑՆ՝ ՈՐՈՇԵԱԼ ԼԻՑԻ Ի Տ/ԵԱՌՆԷ /ԹՎԻՆ/ՉԻԴ /=1275 Թ./։

Այնուհետև խաչի շրջանակի նեղ և թեք եզրերին գրված է.

[ԱՒՐ]ՀՆԵԱԼ Է ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՒ ԱՄԵՆԱՒՐՀՆԵ/Ա/Լ ԽՈՐՀՈՒՐ/Դ/ ՓՐԿԱԳՈՐԾ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԽԱՉԵԼՈՑՆ Ք/ՐԻՍՏՈՍ/Ի Ա/ՍՏՈՒԾՈ/Յ ՄԵՐՈ Ի ԾԱԳ/Է ՄԻՆՉԵՒ Ի ԾԱԳՍ ԱՇԽԱՐՀԻ ԾԱԳԻՆ, ՈՐ ՈՉ ՀԱՏ ԵՒ ՈՉ ՎՃԱՐ.. ԲԱՐՁՈՂ Է Յ/ԻՍՈՒՍ]Ի ԲԱՒԻՑ ԱՄԷՆ ՄԵՂԱՒՈՐԻ ՄԵԶ ԲԱՐԷԽ/ԱՒՍ/

Խաչի հորիզոնական թևերից վերև, երկու անկյուններում քանդակված փոքր խաչերի շուրջը գրված է խաչքարը կերտող երկու վարպետների հետևյալ հակիրճ հիշատակագրությունը.

Ք/ՐԻՍՏՈ/Ս Ա/ՍՏՈՒԱ/Ծ
ՈՂՈՐՄԻ ՊԱՒՂՈՍՈՅ
Ք/ՐԻՍՏՈ/Ս Ա/ՍՏՈՒԱ/Ծ
ՈՂՈՐՄԻ ՔԱՂԱՔԻՆ[96]։

Ինքնին հավանական է, որ խաչքարը կերտվել է հուշարձանի կառուցումից հետո։ Հետևաբար, վանքի հիմնադրումը պետք է սկսած լինել 1275թ. առաջ՝ ինչպես ճիշտ ենթադրում է Գ. Սարգսյանը[97], այն էլ Պողոս և Քաղաք վարպետների կողմից՝ Ս. Բարխուդարյանի իրավացի մեկնությամբ[98]։

12. Իջևանի շրջանի Գետաշեն գյուղի սահմաններում, Առաքելոց վանքից մոտ երկու կմ դեպի հյուսիս-արևելք, անտառի մեջ, Խնձորուտ գյուղատեղում ցարդ կանգնած է կամարավոր քարից «ս. Աստվածածին» կոչվող խաչքարը (գործ՝ Հովհաննես վարպետի, նկ. 177)։ Նրա քիվի ճակատին գրված է.

[Ս/ՈՒՐ/Բ ՆՇ]Ա/Ն Տ/Ե/ՐՈՒՆԱԿԱՆ, ՄԱՐՏԻՐՈՍԻՆ ԼԵՐ ԱՒԳՆԱԿԱՆ

Այնուհետև կամարաձև շրջանակին գեղագիր խոշոր տառերով՝ Ի ԹՎԻՍ։ ՉԼ/[99] =1281/։ ՇՆՈՐՀԻՒՆ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ Ա/ՍՏՈՒԾՈ/Յ, ՄԵՆՔ ՆՎԱՍՏ ՔԱՀԱՆԱՅՔՍ ՅՈՀԱՆՆԷՍ ԵՒ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴ/ԻՔ/

Խաչից ներքև յոթ տողի վրա ավելի մանր գրերով գրված է.

ՄԱՐՏԻՐՈՍԻ ԿԱ[ՆԳՆԵՑԱՔ] ԶՍ/ՈՒՐ/Բ Ա/ՍՏՈՒԱ/ԾԱԾԻՆՍ ՅԱՒԳ/ՆՈՒ/ԹԻՒՆ Պ/ԱՐՈՆ ՍԱԴՈՒՆԻՆ/ ԻՇԽԱՆԱՑ /ԻՇԽԱՆԻՆ],
ՈՐ... ԻՐ ՊԱՊԱՑՆ [ԱԶԱՏՈՒԹԻ]ՒՆ[100] ԷԿԵՂԷՑՈՅՍ ՆՈՐՈԳԵՑ։
Հ/ԱՍՏԱՏ/Ե Ի ՀԱՆԳՍՏԵ/Ա/Ն ՀԱՒՐ ՄԵՐՈ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԵՒ ՄԱՒՐ ՄԵՐՈ
ՏԻԿՆՈՋՆ ԵՒ ԵՂԲԱՐՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՔՎԵՐԱՑ ՅԻՇԱՏԱԿ։ ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ
ԶԱՄԷՆԵՍԵՆ ԱՌՀԱՍԱՐԱԿ՝ ՅԻՇԵՑԷՔ Ի [Ս/ՈՒՐ/Բ] ՅԱՂԱՒԹՍ ՁԵՐ
ԵՒ Ք/ՐԻՍՏՈ/Ս ԶՁԵԶ ՅԻՇԷ ԱՄԷՆ[101]

Այս արձանագրության և խաչքարանդակի միջև, քիչ դեպի ներս ընկած տարածության վրա պահպանվել է նրա շնորհալի վարպետի հետևյալ հիշատակագրությունը՝ չորս տողի վրա.

Տ/Է/Ր Ա/ՍՏՈՒԱ/Ծ ՈՂՈՐՄ-
Ի ՅՈՀԱՆՆԷՍԻ,

---

[95] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 144, «Առաքելս» ընթերցել է «Առաքելոս», «կամ/ակցութեամբ/-ը»՝ «կամ/աւ»։ Այնուհետև նա թևից սկսվող արձանագրության շարունակությունը փոխանակ հյուսիսային կողմից սկսելու, շարունակել է հարավային թևից և ապա անցել է հյուսիսային թևի արձանագրությանը։ «Եկեղեցայ»-ից առաջ կարդացած երեք տառերը պետք է ընթերցել «ազա» և ոչ թե «ազյա»։ Հավանաբար, «ազա»-ն շինարարությանը մասնակցած և կամ ավելի ճիշտ՝ կամակցող անձնավորությունների արտացոլող վերջին մասն է՝ «պարոնաց», «իշխանաց» և կամ այլ ձևով։ Այդ ձևով էլ ենթադրվում է «կամակցութեամբ» բառի վերականգնումը Գ. Սարգսյանի կողմից։ «Կանգնեցաք» բառի «Գ» տառը գրիչը հավանաբար մոռացել է, այն լուսանկարում չի նկատվում։ «Պարոնին եւ զաւակաց նորա» հավանաբար պետք է լինի «Սադունին եւ զաւակաց նորա»։

[96] Գ. Սարգսյան, Գետաշենի վանքը. «Էջմիածին», 1952, № 4, էջ 40—41։

[97] Նույն տեղում, էջ 37։

[98] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 145։

[99] Թվականի տասնավորը /Լ/ փորագրված է «Չ» հարյուրավորի մեջ հազիվ նկատելի։

[100] Այս բառը կարելի է կարդալ «ազատութիւն», բայց և կարող է այլ բառ լինել։

[101] Վերցրել ենք մեր հավաքածուից։

ԶԻ ԲԱԶՈՒՄ ԱՇ-
ԽԱՏԵՑԱՒ

Խաչի թևերի արանքներում գրված է.

Տ/Է/Ր Ա/ՍՏՈՒԱ/Ծ
Յ/ԻՍՈՒ/Ս Ք/ՐԻՍՏՈ/Ս[102]

13. XIII դ. 80-ական թթ. գեղակերտ մի խաչքար ունենք Հաղարծնի վանքից (նկ. 176)։ Հավանաբար այն կանգնեցված է Աստվածածին տաճարի շինության (1281 թ.) առթիվ։ Նրա թևի քանդակները հիշեցնում են ցորենի դաշտ։ Նման քանդակներով խաչքարեր կան Հովհաննավանքում, Բջնիում, Անիում և այլուր։

14. Գոշավանքի XIII դ. ոճավորված պատվանդանների վրա կանգնեցրած երկու բազալտե խաչքարերը հայկական խաչքարաշինության պըսակն են. դրանցից մեկն այժմ ցուցադրված է Հայաստանի պետական պատմական թանգարանում (նկ. 181—185)[103]։ Նրանք մինչև օրս էլ դիտողներին հիացնում են իրենց ներդաշնակ, նուրբ ու խորը մշակված քանդակների գերազանց կատարմամբ, գործ՝ հայ միջնադարյան տաղանդավոր քանդակագործ վարպետ Պողոսի[104]։ Իր ժամանակին այս երկու խաչքարերն էլ դրված են եղել ս. Գրիգոր կոչված փոքր եկեղեցու մուտքի երկու կողմերում և զարդարել առանց այն էլ գեղեցիկ հուշարձանի արևմտյան ճակատը։ Տեղում պահպանված կոթողի ընդհանուր բարձրությունը 3,50 մ է, բուն խաչքարի բարձրությունը՝ 2,20 մ, լայնքը՝ վերևում 1,08 մ, ներքևում՝ 1,0 մ, հաստությունը՝ 0,28 մ։ Հիշատակագրությունը արված է պատվանդանի բնի վրա, կոտրված և հողմահարված լինելու պատճառով դժվար է ընթերցվում։ Արձանագրությունը հետևյալն է (մեր վերականգնումներով).

[ԵՍ] ՍԱՐԳ[ԻՍ] ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՆԳՆԵՑԻ ՁԵԱՑՍ
Ի ՎԵՐԱ ՇԻՐՄԻ ԾՆ/ՈՂ/ԱՑ /ԵՒ ԵՂԲ/ԱՐՑ ԵՒ ԻՆՁ։
ԹԷ Տ/Է/Ր
ԿԱՄԵՍՑԻ ՈՐ ԵՒ ՍՈ/ՑԱ/ ՈՂՈՐՄԵՍՑԻ Ա/ՍՏՈՒԱ/Ծ
ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹ/ԵԱՄ/Բ
/ԱՄԵ/ՆԱՑՆ ՍՐԲՈՑ։ Ի ԹԻ ՉԽ։ ՊԱՒՂՈՍ[105]

Վերջին «Պաւղոս» վարպետի անունը ուռուցիկ գրերով գրված է շրջանակի հյուսիսային կողմի ներքևի, ութթևանի աստղաձև վարդյակի մեջ։

Գոշավանքի մյուս՝ Երևան փոխադրված խաչքարը ևս իրավացիորեն վերագրվում է նույն վարպետ Պողոսին։ Այս խաչքարը քիչ ավելի խոշոր է առաջինից։ Նրա բարձրությունը (պատվանդանը չի պահպանվել) 2,40 մ է, լայնքը՝ 1,15 մ, հաստությունը՝ 0,25—0,28 (ներքևից կոտրված է)։

Գոշավանքի հիշյալ երկու խաչքարերի զարդաքանդակներն ունեն 0,07—0,08 մ խորություն։ Քանդակների այդպիսի խորություն ունի նաև Դեղձնուտի վանքի Պողոս և Քաղաք վարպետների կերտած խաչքարը, միայն թե վերջինս քանդակային այլ կոմպոզիցիա ունի։ Այնուամենայնիվ, չի բացառված, որ Դեղձնուտի և Գոշավանքի հիշյալ խաչքարերի վարպետ Պողոսը միևնույն անձնավորությունն է, մանավանդ, եթե նկատի ունենանք նրա ձեռակերտը հանդիսացող՝ Դեղձնուտի և Գոշավանքի եկեղեցիների մուտքերի քանդակների մեծ նմանությունը։

Տաղանդավոր քանդակագործ-վարպետներ Գևորգ Ճոնակը (Մուշ), Մխիթարը (Սանահին), Երիտասարդը (Մակարավանք), Պողոսը (Գոշավանք) և XIII—XIV դդ. սկզբում Սյունիքում ստեղծագործած Մոմիկը միջնադարյան Հայաստանի ճարտարապետական և քանդակագործական արվեստի այն հինգ ներկայացուցիչներն են, որոնք խաչքարաշինությունը և հայկական միջնադարյան քանդակագործությունը հասցրին զարգացման գագաթնակետին և դրանով իսկ անգնահատելի ծառայություն մատուցեցին հայ ժողովրդի նյութական մշակույթի այդ ճյուղի առաջընթացին։

3. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԱՆՎԱՆ, ԿԵՐՏՄԱՆ, ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԵՎ ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

X դ. սկսած մինչև ուշ միջնադարը խաչքարերը հաճախ ունեցել են հատուկ անուններ՝ «ս. Գևորգ», «ս. Քրիստափոր», «ս. Վարդան», «ս.

---

[102] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[103] Այս խաչքարը կոտրված է ներքևից ու պակասավոր է։

[104] Վարպետ Պողոսի եղբայրը եղել է քարգործ Հովհաննեսը, որը Գոշավանքում գործել է եղբոր հետ միասին (Ն. Եղիազարյան, Նոր Գետիկավանք կամ Գոշավանք, «Էջմիածին», 1959, № Է, էջ 55։ Տե՛ս նաև Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 146։

[105] Հ. Եղիազարյան, Նոր Գետիկ վանք..., «Էջմիածին», 1959, № Է, էջ 55, որտեղ հեղինակը «Սարգիս վարդապետ»-ը դարձել է «Պաւղոս վարդապետ»։ Տե՛ս նաև Ա. Ն. Շահինյան, Հայկական խաչքարերի արվեստը, «Էջմիածին», 1960, Ը, էջ 48։

Սարգիս», «Ս. Հակոբ», «Ս. Գրիգոր», «Ս. Կարապետ», «Աստվածածին», «Ամենափրկիչ», «Տերունական», «Աստվածընկալ», «Ս. Կաթողիկե» և այլն։ Սակայն այդ անվանումները չեն խանգարել, որ նրանք այդպիսի դեպքերում էլ ունենան նպատակային բազմազանություն։

Մատենագրական և վիմագրական աղբյուրներում խաչքարերն ընդհանրապես կոչվել են «Արձան»[106], «Խաչ», «Քար», «Նշան», «Նշանակ», «Տերունական», «Դայխոտն եւ նիզակ» և այլն։ Դարերի ընթացքում արմատավորված կոթողային այս հուշարձանը մեր ժամանակներում միայն «խաչքար» անունն ստացավ։ Այդ անվան հնագույն հիշատակությունը՝ «խաչքար-խաչաքար» ձևով գալիս է դեռևս XII և XVII դդ.[107]։

Խաչքարերի և ընդհանրապես ճարտարապետական հուշարձանների արձանագրությունները կոչվել են «գիր», «արձան», «արձանագիր», «վեմ», «արձան վիմագրեան»։

Այս բոլորից բացի, մինչև այժմ էլ, անկախ կանգնեցման հանգամանքներից, խաչքարերին տրվել են ժողովրդական զանազան անուններ՝ «Ամենափրկիչ», «Սրբանավոր», «Ծաղկախաչ», «Սիրուն խաչ», «Աղավնի տապան», «Թեփակիր», «Քույր և եղբայր» և կամ էլ «Աղջիկ-տղի գերեզման», «Հազամեռ», «Հազախաչ», «Ցասման խաչ» և այլն։ Այս սովորույթը տարածված է եղել դեռևս միջնադարում, խաչքարերի հետ կապված զանազան հրաշապատում զրույցներով հանդերձ[108]։

Միջնադարում խաչքարեր կերտող վարպետները վիմական արձանագրություններում կոչվել են «կազմող», «հորինող», «գործող», «նկարող», «պատող», «գրիչ» և այլ բազմաթիվ մակդիրներով։ Դրանց կողքին, շատ դեպքերում վարպետները հանդես են գալիս իրենց անունների սոսկ հիշատակումով, երբեմն էլ խնդրելով միայն հիշել իրենց[109]։

Քանդակագործ վարպետների աշակերտները իրենց հերթին կոչվել են «Թերատաշ»[110], «աշակերտ»[111], «մոթ»[112] (ճիշտը՝ մոնթ), «դեռայր»[113] և այլն, իսկ երբեմն էլ, արձանագրությունների վերջում, վարպետների անվան հիշատակումից հետո նշվել են միայն նրանց անունները՝ առանց մակդիրի։

Հայաստանում խաչքարեր են կերտել նաև քարգործ վարպետները, վարդպետ-ճարտարապետները, թեև հիմնականում նրանք զբաղված են եղել ճարտարապետական հուշարձանների կառուցմամբ[114]։ Եվ այդ իմաստով երբեք չի կարելի քարգործ-քարաշործին համարել լոկ խաչքար կերտող վարպետ։ Խաչքարեր կերտող վարդպետ-քարգործներից կարելի է հիշատակել Ընձակ, Գագան, Ոլա, Մխիթարիչ և Շնոհոր, Աղբայրիկ, Մոմիկ, Գրիգորիկ և այլ վարպետների։

Խաչքար կերտող միջնադարյան հայ վարպետների վերոհիշյալ անվանումներից ամենատարածվածը «կազմողն» է[115], որպիսին իրոք լրիվ արտահայտում էր խաչքարերի կերտման հետ կապված բոլոր աշխատանքները (քանդակելը, տեղադրելը և այլն)։ «Գործող», «պատող» վարպետները ևս հավանաբար սկզբից ևեթ իրենք էին կատարում վերոհիշյալ բոլոր աշխատանքները, իսկ «գծող», «նկարող», «գրիչ» և այլ վարպետները, ամենայն հավանականությամբ, զբաղվում էին կերտվելիք խաչքարերի օրինակներն ու քանդակվելիք զարդամոտիվները մագաղաթի, թղթի կամ էլ հենց խաչքարի վրա գծելով։

Գրիչները նույնպես, ոչ միայն լոկ արձանագրություններ են փորագրել զանազան հուշարձանների և խաչքարերի վրա, այլև հենց իրենք էլ նկարել, կերտել ու քանդակել են խաչքարերը, փորագրելով նաև հիշատակագրությունները, ինչպես նշել է Ս. Բարխուդարյանը[116]։ Նույնը վերաբերում է նաև «գծող» վարպետներին։

---

[106] Մեզանում «արձան», «խաչ» են կոչվել կոթողները, վիմական արձանագրությունները և այլն, իսկ տապանաքարերը՝ «տապան», «խաչ», «քար»։

[107] «Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց», հատ. 2, էջմիածին, 1842, էջ 361—362 և Ջալալեանց Սարգիս արքեպիսկոպոս, ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1858, էջ 205։ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 172։

[108] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 238։

[109] XV—XVII դդ. հայ վարպետներին տրվել են նաև «վարպետ», «ուստա» և այլ անուններ։

[110] Մ. Սմբատյան, Գեղարքունիք..., էջ 58, «Ազգագրական հանդես», գիրք 18, էջ 111։ Պետք է լինի «Հրապետաշակերտ» (ուղղումը մերն է—Ա. Ճ.), թեև «Թերատաշ» հանդիպում է այլուր։

[111] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 140։

[112] Ս. Բարխուդարյան, Դիվան... III, էջ 46։ (Տե՛ս տախտակ Գ)։

[113] Նույն տեղում, էջ 64։

[114] Վարդպետ նշանակում է ճարտարապետ, վարպետ (մանրամասն տե՛ս Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 14—25)։ Սակայն ի լրացումն «վարդպետ» բառի այդ բովանդակության, պետք է ասել, որ երբ «վարդպետը» հիշատակված է պղնձե ինչ-որ իրի վրա, նշանակում է «պղնձագործ-վարպետ»։ Մի դեպքում էլ «վարդպետ»-ը անձնանուն է դարձել։

[115] «Կազմող» են կոչվել նաև մետաղից խաչ և այլ իրեր պատրաստող վարպետները։

Խաչքարեր կերտած մի քանի հարյուր հայ քանդակագործ վարպետների անուններ մեզ են հասել IX դ. սկսած։ Այսպես. Կեչուտում վարպետ Հուսեփը կերտել է մի խաչքար, 971 թ. հայր և որդի՝ Դավիթն ու Ղուկասը համատեղ կերտել են մեկ այլ խաչքար, վարպետ Գրիգորիկը՝ 990 թ. Կարմրաշենում, Դավիթը՝ Արծվանիկում 1032 թ., Քիթ երեցը Նեղուցում (Թումանյանի շրջան) նույնպես կերտել են խաչքարեր։ Խաչքարաշինության արվեստի կատարյալ նմուշներ են նկ. 156, 157, 159, 180, 186, 201, 146, 148, 133—141 ցույց տրված խաչքարերը։

Հայ միջնադարյան ճարտարապետ և քարգործ-վարպետների գործունեության շառավիղը դուրս է գալիս պատմական Հայաստանի սահմաններից ու տարածվում մինչև Վրաստան, Ադրբեջան, Ղրիմ, Ուկրաինա, Լեհաստան, Իտալիա, Փոքր Ասիա, Իրան, Սիրիա, Լիբանան, Պաղեստին, Հնդկաստան և այլ երկրներ։ Որտեղ էլ որ աշխատել ու ստեղծագործել են միջնադարյան հայ վարպետները, նրանք իրենց կառուցած հուշարձանների վրա հաճախ թողել են մեսրոպատառ հիշատակագրություններ և հայ ճարտարապետության ու քանդակների ոճը տարածել այդ երկրներում։ Իրավացի է ակադ. Բ. Առաքելյանը, երբ գրում է. «Առհասարակ, եթե կամենայինք նշել, թե միջնադարյան Հայաստանի արհեստավորներից ովքեր են թողել քանակով ամենից ավելի և արժեքով ամենից մեծ ժառանգություն, ապա պետք կլինեի մեծագույն հարգանք մատուցանել քարագործ վարպետներին ու նրանց աշխատանքը գլխավորող ճարտարապետներին»[117]։

Հայ միջնադարյան ոչ միայն մատենագիր գրիչների, այլև ճարտարապետների ու քարգործ վարպետների համեստության մասին են խոսում մատենագրական և վիմագրական աղբյուրներից մեզ հասած՝ «նուաստ ծառայս», «տգետս», «տըխմարս», «հողնամեղս», «անպիտանս», «յետինս», «փանաքիս», «անարժանս» և այլ բազմապիսի ու բազմաթիվ ինքնանվաստացուցիչ ածականները։ Այդ մասին են վկայում նաև նրանց երբեմն փոքրիկ, անանուն հիշատակումները՝ «խաչիս գծող», «աշխատողքն սորա» և այլ բազմաթիվ համեստ արձանագրություններ։ Այսպես, օրինակ՝ Հառիճավանքի շինարար վարպետների հիշատակագրությունը ծաղկագրերով գրված է գլխավոր տաճարի արևելյան պատի քիվի ծայրին, առանց անունները նշելու՝ «Տէր Աստուած ողորմեայ աշխատաւորաց ամէն», իսկ Գոշավանքի ս. Գևորգ կոչված մատուռի բեմի վրա գրված է. ՉԴ (=1255 թ) Տէր աստուած ողորմեա Խաչատուր վարդապետին եւ Բարսեղին շինողաց եկեղեցւոյս եւ ամենայն աշխատողացն ի սմա ամէն»[118]։

Միջնադարում իմաստուն գործ է համարվել քարգործի աշխատանքը և բարձր գնահատվել։ Ներսես Շնորհալին մեղվի մասին գրած իր հանելուկում նշում է.

Երեց քարգործ եւ իմաստուն,
Հրաշից ծաղկանց շինէ իւր տուն[119]։

Կիլիկյան Դատաստանագրքի հեղինակ՝ Սմբատ Գունդստաբլը առաջարկում է՝ «Զամէն ազգ արուեստաւոր պատուեցէք. բայց զդարբինն եւ զհիւսն ու զքանդակագործն աւելի»[120]։

Պատմական հուշարձանների պատերին և առանձին քարերի վրա վարպետների նշաններ թողնելու սովորությունը գալիս է շատ հնուց։ Այդպիսի հնագույն նշաններ ու վարպետների անուններ մեզ հասել են օրինակ, Գառնիի (մ. թ. ա. I դ.) հեթանոսական տաճարից։ Վերջինիս որմնատիճանների և պատերի քարերի վրա պահպանվել են հավանաբար կառուցող վարպետների անունների սկզբնատառերը, թեք խաչեր և այլն[121]։ Այնուհետև վաղ միջնադարում, հայկական բազիլիկ և այլ տաճարների վրա ևս այդ սովորությունը պահպանվել է. Զովունի, Քասաղի, Երերույքի, Դվինի, Զըվարթնոցի, Գառնահովտի, Սիսիանի և այլ հուշարձանների վրա վարպետները թողել են հունարեն ու հայերեն տառերով նշաններ։ VII—XI դդ. մեզ են հասել մի շարք արդեն անվանի հայ ճարտարապետների ու քարգործների անուններ՝ Իսրայել Գոռոզհեցի, Յոհան, Թոդոսակ, Տրդատ, Սամեման, Մանուկ, Խաչատուր քարգործ և այլն[122]։

---

[116] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 199։

[117] Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 1, Երևան, 1958, էջ 193։

[118] Հռիփսիմե Ջանփոլադյան, Մխիթար Գոշ և Նոր Գետիկի վանքը, Երևան, 1948, էջ 164։

[119] Ներսեսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի, Բանք չափաւ, Վենետիկ, 1831, էջ 31։

[120] Սմբատ սպարապետ, Դատաստանագիրք, Երևան, 1958, էջ 14։

[121] К. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, стр. 42—44.

Միջնադարյան հայ վարպետներն ու քանդակագործները ավելի հաճախ իրենց անուններն ու ստորագրությունները դրոշմել են հուշարձանների վրա խոր քնդած ու աննկատ տեղում, իսկ երբեմն էլ ծաղկազարդերով ու կապերով զարդանկարել են դրանք (Անի, Գառնահովիտ, Հաղարծին, Տեղերի վանք և այլն)։ Նույն երևույթը նկատվում է խաչքարերի վրա (Գոշավանք, Դեղձնուտ, Անի, Գառնի, Բանաքեն, Էջմիածին, Եղեգնաձոր, Սևանի ավազան, Իջևան, Արարատ և այլն)։

Հայկական պատմաճարտարապետական հուշարձանների վրա ճարտարապետ-քարգործների անունների հնագույն հիշատակությունները առայժմ հասնում են մինչև VI—VII դդ. (Թովմաս (Օձուն), Սահակ (Պտղնի՝ VI դ), Իսրայել Դսաղձեցի՝ 639 թ., Յոհան՝ 641—661 թթ., Թոդոսակ՝ VII դ. և այլն), իսկ խաչքարերի վրա՝ 886 թվականից՝ «Հուսէփ» (Կեչառի խաչքարի վարպետը)։

Միջնադարյան Հայաստանում արհեստները համարվում էին գաղտնիք, այդ իսկ պատճառով ընտանիքի ավագն իր մասնագիտությունը սովորեցնում, փոխանցում էր միայն իր տան կրտսեր անդամներին, և այսպես սերնդե-սերունդ։ «Յայտնի է,— գրում է Ղազար Փարպեցին[123],— թէ ամէնայն արուեստաւոր, որ գիտէ արուեստ ինքն գիտէ և օգտակար է յարուեստէն՝ զնոյն և որդւոց իւրոց կամի ուսուցանել, զի կեցցեն»։ Այդ իմաստով ուշագրավ է 971 թ. մի խաչքարի հետևյալ արձանագրությունը, որի համաձայն խաչքարը կերտել են նույն ընտանիքի հայրը և որդին՝ համատեղ.

ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ԶԻՍ, ԶԴԱՒԻԹ ՔԱՀԱՆԱՅ, ԵՐՈՅ ԳԻՐՍ ԳՐԵՑԱՒ ԵՒ ԶՈՐԴԻ ԻՄ ԶՂՈՒԿԱՍ, ՈՐ ԳՈՐԾԵՑԱՔ ԽԱՉ ԶԱՍ[124]

Ամենայն հավանականությամբ առաջ վարպետն իր ձեռքի տակ ունեցել է կերտվելիք խաչքարի գծագիրը՝ նախ և առաջ իր համար և ապա պատվիրատուին ցույց տալու նպատակով։

Բնական է, որ մեծ շինությունների վրա վարպետներն աշխատում էին մեծ խմբով և բազմաթիվ աշակերտներով[125], իսկ համեմատաբար փոքր հուշարձանների, առանձին խաչքարերի վրա՝ մեկ կամ մի քանի (Գեղարդ, Դեղձնուտ և այլն) վարպետների և երբեմն էլ մեկ վարպետի հետ աշխատել է մեկ աշակերտ կամ գրիչ (Սանահին[126], Կամո)։ Ավելի հաճախ խաչքարը կերտում էր մեկ վարպետ։

Խաչքարեր քանդակելու գործիքներ մեզ չեն հասել, սակայն պետք է ենթադրել, որ գործիքները եղել են պողպատից, որը Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել դեռևս շատ վաղուց։ Պողպատը «պողովատ»[127] ձևով հիշատակվում է դեռևս IV—V դդ. (Ագաթանգեղոս և այլն)։ Նրա պատրաստման գաղտնիքներին, անշուշտ, ծանոթ են եղել միջնադարյան հայ դարբիններն ու երկաթագործները։ VIII դ. կաթողիկոս Հովհան Օձնեցին տաճարների կառուցման, սեղանների, խաչերի և պատկերների (իմա՝ քանդակների) պատրաստման համար օգտագործում է «Կռեմք, կոփեմք, քանդակեմք, բերեմք... զեկեղեցիս, զսեղանս, զխաչս, զպատկերս»[128] արտահայտությունները։ Այս վկայության մեջ «կոփեմք», «քանդակեմք» և «բերեմք» տերմինները վերաբերում են քարը մշակելուն և քանդակագործական արվեստին։ Միջին դարերում բերում և քանդակում էին „Յե՛ արձանագրությունները և թե՛ քանդակները։ Կարմրաշենի 990 թվակիր խաչքարի «Որք ընթեռնույք գծագիրս ի վէմս քանդակեալ...»[129] արձանագրությունից երևում է, որ քանդակելիք քարի վրա գծագրվում էին ոչ միայն գրերը, այլև խաչքարի մյուս զարդամոտիվները և նոր միայն սկսում քանդակել, քերել։

---

[122] Մանրամասն տե՛ս Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ...։

[123] Ղազարայ Փարպեցւոյ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907, էջ 363։

[124] Սարգիսյան Ն. Ներսեսի, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 23։

[125] «Պատմութիւն Լանկ Թեմուրայ և յաջորդաց իւրոց» արարեալ Թովմա վարդապետի Մեծոփեցւոյ, էջ 58—59, Սեբէոսի եպիսկոպոսի «Պատմութիւն», Երևան, 1939, էջ 65։

[126] Սանահնում կա մարմարից 1222 թվակիր խաչքարի արձանագրությունից պարզվում է, որ այդ խաչքարը կերտել է վարպետ Առաքյալը, իսկ արձանագրությունը գրել է Ճապա՞ն գրիչը։ Ս. Բարխուդարյանը (տե՛ս «Միջնադարյան հայ ճարտարապետները...», էջ 142) ենթադրել է, որ խաչքարի վարպետը Ճապա՞ն գրիչն է։ Մեր ենթադրության օգտին է խոսում խաչքարի արձանագրության ամբողջ բովանդակությունը. «Ի թուականին ՈՀԱ (=1222 թ.) կանգնեցաւ խաչս։ Ով եղբարք, զհոգեանձնս Առաքելոյ յիշեցէք» (նույն տեղում, էջ 189)։

Այդ իսկ իմաստով հետաքրքիր է Լեռնային Ղարաբաղում, Գանձասարից արևելք, Ծմակահող գյուղի սահմանում գտնվող մի մատուռի հետևյալ արձանագրությունը. «Կամաւն Աստուծոյ ես Սարգիս Կարենց բաղաբացի շինեցի զեկեղեցիս և կանգնեցի զխաչս ինձ և աշակերտի իմ Յովաննիսի յաղագս...» (Մ. Բարխուդարյան, Արցախ, էջ 184—185)։ Կամոյի «Դարի զրուխ» վայրում 1577 թ. խաչքարի արձանագրության մեջ հիշատակված են Տրդատ կազմող ու նրա աշակերտ Հերապետը։

[127] «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 658։

[128] Յովհաննու Իմաստասիրի մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 35, 39, 42։

Մխիթար Անեցու «Բանք Սիրաքա իմաստնու» 1321 թվակիր ձեռագիր ժողովածուում «Յաղագս արուեստից մարդկանս վերաառութեամբ գլխում խոսվում է քանդակելու ընդհանուր սկզբունքների և եղանակի մասին.

«Հիւսն և ճարտարապետ որ դրօշեն զքանդակեալ պատկերս,՝ և ստեղծանեն զկերպարանս. և միտք իւր տացէ նմանութիւն պատկերի, և արքնութիւն գծ (գործ) կատարէ»[130]։

Ֆեոդալական Հայաստանում, ինչպես հայտնի է, արվեստների ու արհեստների զարգացումն իր խոր արմատներն ուներ դեռևս շատ հին ժամանակներից։ Միջնադարում նրանք հասնում են զարգացման ավելի բարձր աստիճանի, պրոֆեսիոնալ մակարդակի։ Այդ ժամանակվա բարձրագույն դպրոցներում աշակերտներին սովորեցնում էին նաև նկարչություն, քանդակագործություն և ճարտարապետություն։ Այդ իմաստով խիստ ուշագրավ են Մխիթար Անեցու[131] վերոհիշյալ ժողովածուի երկու մանրանկարները, որտեղ պատկերված է նկարչության և ճարտարապետության ուսուցման պրոցեսը։

Այս բոլորից կարելի է ենթադրել, որ նախքան որևէ հուշարձան կամ խաչքար կերտելը, հայ միջնադարյան վարպետները ոչ միայն պատրաստում էին նրանց փոքրիկ մոդելները, այլև մագաղաթի կամ թղթի վրա գծագրում դրանք, որից հետո միայն սկսում շինարարական աշխատանքները։ Խաչքարերի նկատմամբ այդ գծագրումը կարելի էր կատարել նաև սկզբնապես նրա հարթ երեսի վրա քանդակազարդվելիք մոտիվների ուրվագծմամբ՝ թեթև փորագրելու կամ ներկով (կարմիր կամ սև) գծագրելու եղանակով։ Այստեղից էլ «գծող», «նկարող», «ձևող» վարպետների անվանումները (Նկ. 156)*։

Միջնադարից մեզ հասել են խաչքարեր և քանդակներ կերտող վարպետների երկու ինքնանկար-քանդակներ Վարդան Մոնթի (աշակերտի) կերտած խաչքարը՝ իր իսկ ստորագրությամբ և կիսատ խաչքարեր, որոնցից ուշագրավ են Գեղարքունիքի երկու խաչքարերը։

Խաչքարերի կերտման և պատրաստման ժամանակամիջոցի և նրանց վարպետների վարձատրության հարցերի մասին ուղղակի տեղեկություններ չկան։ Հովհաննես Ղրիմեցու միջոցով մեզ է հասել միայն մեկ վիմագիր վկայություն, որտեղ ասվում է, որ չորս խաչքարերի ու գերեզմանաքարերի պատրաստման վրա ծախսվել է 400 սպիտակ, 100 սպիտակ՝ յուրաքանչյուր խաչքարի ու մեկ տապանաքարի համար[132]։

---

[129] Ս. Բարխուդարյան, Դիվան..., III, էջ 42։

[130] Մատենադարան, ձեռ. № 2961, էջ 36։

[131] Մատենադարան, ձեռ. № 2961, էջ 37։

* Սոավլյան գյուղի XIII դ. հայտնի որմնափակ խաչքարի հիշատակարանում կարդում ենք.
ԶՄխիթարիչս Աւշական-
եցի որ ձեռնայցուց
յիշե։

[132] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 265։ «Սպիտակ» է կոչվել արծաթ դրամը, մեկ սպիտակը հավասար է 10 դահեկանի։ Խաչքարն այժմ տեղում չէ։ Արձանագրության մեջ մասնավորապես ասված է. «...Ես Խաչենս եւ ամուսին իմ Արզան, եւ Խաչերես, եւ Գրիգոր կանգնեցաք զխաչս կարեցաք զգերեզմանեայս ի քարէ մեծ աշխատութեամբ, ծախեցաք ԴՃ /=400/ սպիտակ»։ Նույն տեղում, էջ 265։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԽԱՉՔԱՐԵՐ ԿԱՆԳՆԵՑՆԵԼՈՒ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև վերջերս տարածված է եղել այն թյուր կարծիքը, որ իբր հայկական խաչքարերը լոկ գերեզմանաքարեր են եղել[1]։ Սխալ պետք է համարել նաև հայկական խաչքարերը ռուսերեն՝ „надгробный памятник", ֆրանսերեն՝ „Piérre tombale"[2], անգլերեն՝ „Tombestone"[3] թարգմանելը։ Ավելի ճիշտ կլիներ խաչքարը ռուսերեն թարգմանել „крест-камень", ֆրանսերեն „Croix de piérre", անգլերեն՝ „Cross Stone", որովհետև «քարե խաչը» դեռևս խաչքար չէ, այլ ուղղակի քարից պատրաստված խաչ, որպիսի հասկացությունն իր մեջ ենթադրում է նաև թևավոր խաչը կամ խաչարձանը։ Անգամ գերեզմանատներում կանգնեցրած բազմաթիվ խաչքարեր հաճախ լոկ գերեզմանաքարեր չեն, որովհետև, ինչպես ճիշտ նկատել է Ս. Բարխուդարյանը, այդ նույն գերեզմանի վրա, որ կանգնած է խաչքարը, անպայման կա նաև առանձին գերեզմանաքար, որի արևելյան ծայրին էլ կանգնած է խաչքարը՝ որպես գերեզմանաքարից անկախ հուշարձան-կոթող[4]։

Խաչքարերի կանգնեցման շարժառիթները խիստ տարբեր են։ Հիշատակարան և պաշտամունքային խաչքարերը կանգնեցրել են թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր դասի ներկայացուցիչները՝ «ի բարեխօսութիւն», «յարևշատութիւն», «ազգնական հավատացելոց», «մեղաց թողութեան», «հոգու փրկության» և այլ բազմաթիվ առիթներով։ Որպես կանոն, այդպիսի արձանագրությունների վերջում հեղինակները սովորաբար խնդրում են հիշել իրենց[5]։ Այդպիսի խաչքարերի թիվը շատ մեծ է, ուստի բավարարվենք միայն մի բնորոշ օրինակով։ Դաստակերտ (Ղարաբաղ) գյուղից 2 կմ հեռու, հին ճանապարհի եզրին գտնվում է 1320 թվակիր մի խաչքար, որի արձանագրության մեջ ոմն Բաղտասար գրում է, որ կերել, խմել ու վայելել է իր ժամանակը և որովհետև զավակ չի ունեցել, կանգնեցրել է հիշյալ խաչքարը՝ հոգու փրկության համար (նկ. 191)։

Դեռևս IX դ. սկսած, ամենատարբեր շինարարական առիթներով (հուշարձանների հիմնադրման, շինության, վերականգնման, ամրոցների ու բուրգերի, հյուրանոցների, քարավանատների շինության) կերտվել ու կանգնեցվել են հարյուրավոր խաչքարեր՝ համապատասխան հիշատակագրություններով, որոնց մեծ մասը եզակի սկզբնաղբյուրներ են այդ հուշարձանների շինության մասին։ Այսպես՝ Տաթևում 895—906 թթ.

---

[1] Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 244։

[2] *J. Baltrušaitis*, Studes sur l'art... p. 2. Grande Larousse encyclopédie. tome I. Paris, 1960. p. 583.

[3] Ճիշտ է Ս. Տեր-Ներսեսյանը, երբ հայկական խաչքարերի համար անգլերենում օգտագործում է „Cross stone", (տե՛ս նրա գրքի Aght'amar church of the Holy Cross, by Sirarpie Der-Nersessian. Harvard University press Camridge, Massachusetts, 1965).

[4] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 129։

[5] Ս. Բարխուդարյան, Դիվան... II, էջ 128։ Անզավակ մնալու և հոգու փրկության համար է կանգնեցված նաև Ակունքում (Վարդենիսի շրջան) Տաշուրանի 1297 թվակիր խաչքարը (տե՛ս Ս. Բարխուդարյան, Դիվան... IV, էջ 355)։

Տեր Հովհաննեսը կառուցում է Պողոս-Պետրոսի տաճարը և այդ առթիվ նրա արևմտյան մուտքի վերևում ագուցում է մի գողտրիկ խաչքար (նկ. 60)։

Գնդեվանքում և Արծվանիկում (հետո՝ Երեցվանիկ) 937 և 991 թթ. կառուցվել են հուշարձաններ և այդ առթիվ միաժամանակ կանգնեցվում են հատուկ խաչքարեր համապատասխան հիշատակագրությամբ (նկ. 64, 73)։

Վ. Ճամբարակում ոմն Պողոս երեց կառուցում է եկեղեցի և այդ շինության առթիվ 1029 թ. կանգնեցնում է հատուկ խաչքար, որը միակ գրավոր հիշատակարանն է այդ եկեղեցու մասին (նկ. 83)։

1262 թ. ոմն Աղեկա Ճորտ և իր ամուսին Հանթը «ի նեղ աւուրցս» Աքորի գյուղում (Թումանյանի շրջան) շինում են ժամատուն ու խորան և այդ առթիվ խաչքար-կոթող են կանգնեցնում հետևյալ հիշատակագրությամբ.

ԿԱՄԱՒՆ Ա/ՄՏՈՒԾՈ/Յ, ԵՍ ԱՂԷԿԱ Ճ-
ՈՐՏ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՀԱՆ-
Թ, Ի ՆԵՂ ԱՒՈՒՐՔ ՇԻՆԵՑԱՔ
ԶԺԱՄԱՏՈՒՆՍ ԵՒ ԶԽՈՐԱՆՍ
ԵՒ ԶԽԱՉՍ, ԵՒ ԱՌԱՔ։ Ա։ ԺԱՄ
ԶՎԱՐԴԷՎԱՐԻՆ Կ/ԻՒ/ՐԱԿԷՆ։ ՈՎ ԽԱՓԱՆԷ ՄԵ-
Ր ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է։ ՉԺԱ /=1262 Թ./[6]

975 թ. Ն. Թալինում ոմն Սահակ (Ապլհինալի որդի) վերանորոգում է «ս. Սարգիս» և «ս. Գրիգոր» եկեղեցիները և ի հիշատակ դրա՝ իր, հոր և եղբայրների հետ կանգնեցնում խաչքար «ի բարեխոսութիւն» (նկ. 67)։

Արծվանիկում ոմն Սաղիկ նորոգում է գյուղի եկեղեցին և այդ առթիվ 1032 թ. վարպետ Դավթի ձեռքով կանգնեցնում փոքրիկ խաչքար[7]։

Հաղբատում ոմն Սարգիս նորոգում է ս. Նշան տաճարը 1188 թ. «ի հիմանցս» և այդ կապակցությամբ կանգնեցնում խաչքար համապատասխան հիշատակագրությամբ[8]։

Հայոց և վրաց ամիրսպասալար Զաքարե Շահնշահը 1208 թ. կառուցում է Անիի պարսպի բուրգերից մեկը և այդ առթիվ հուշարձանի պատի մեջ ագուցել տալիս խաչքար՝ հետևյալ հիշատակագրությամբ։

«ԵՍ ՄԱՆԴԱՏՈՐԹՈՒԽՈՒՑԷՍ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՇԱՀՆՇԱՀ ԶԱՔԱՐԻԱ ՇԻՆԵՑԻ ԶԱՐՁԱՆՍ ԵՒ ԶՊԱՐՍՊՍ...»[9]։ Նույն այդ պարսպի բուրգերից մեկի կառուցողն է Գրիգորի որդի Լուսոտը, որը և այդ կապակցությամբ խաչքար է ագուցում նրա պատին այսպիսի մակագրությամբ.

«ԵՍ ԼՈՒՍՈՏՍ ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐՈ ՇԻՆԵՑԻ ԶԱՐՁԱՆՍ... ԿԱՏԱՐԵՑԱՒ ԲՈՒՐՋՍ»[10]։

Նույնպիսին ունենք նաև Կարսի բերդից XII—XIII դդ.[11]։

Կոթաքարում (այժմ՝ Մարտունու շրջան, Ն. Գետաշեն) ոմն Սարգիս երկու փնդուկ (պանդոկ) է շինում և արձանագրում խաչքարի վրա. «...ԵՍ ՍԱՐԳԻՍ ՇԻՆԵՑԻ Բ/=2/ ՓՆԴՈՒԿ...»[12]։

Փուսա լեռան ստորոտում, Դդմաշենից 12 կմ հյուսիս (Սևանի շրջան) գտնված թևավոր խաչի վրա կարդում ենք. «ՇԻՆԵՑԻ ՀՈԳԵՏՈՒՆՍ /ԿԱՐԱՎԱՆԱՏՈՒՆ/ Ի ՄԵՋ ԼԵՌԱՆՍ, Ի ՈՏՍ ՓՈՒՍԱ... ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ ԶՍՈՒՐԲ ԽԱՉՍ»[13]։

Սանահնի «Միրանավոր» կոչվող խաչքարի արձանագրության մեջ կարդում ենք, որ հայր Հովհաննեսը 1205 թ. կառուցում է հյուրատուն և կանգնեցնում խաչքար. «Շինեցի զհիւրատունս... եւ կանգնեցի զխաչս...»[14] (նկ. 121)։

XIII դ. երկրորդ կեսին կառուցված հյուրանոցի մասին է խոսում Նորավանքի հյուրատան պատի մեջ ագուցված մեծ խաչքարի արձանագրությունը[15]։

Հայաստանում կատարված ջրաշինական մեծ աշխատանքների՝ կամուրջների, առուների, աղբյուրների, ջրամբարների և այլ շինությունների մասին եզակի վկայություններ ենք գտնում խաչքարերի արձանագրություններում։ Երկար տարիների մեր դիտումները և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում, հատկապես XII—XIV դդ. կառուցված կամուրջների շինարարական արձանագրությունները բացառապես եղել են խաչքարերի վրա։ Այդպիսիք են Դեբեդ, Գավառագետ, Զորագետ, Թարթառ, Եղեգիս և Սուլեմա գետերի միախառնման վայրի կամուրջների առթիվ կանգնեցված XII—XIV դդ. խաչքարերը։

---

[6] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[7] Ս. Բարխուդարյան, Դիվան... III, էջ 134։

[8] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 246—247։

[9] Հ. Օրբելի. Դիվան... I, Երևան, 1966, էջ 6։

[10] Նույն տեղում։

[11] И. А. Орбели, Избранные труды, стр. 469—471.

[12] Ս. Բարխուդարյան, Դիվան... IV, էջ 268։

[13] Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 6։ Արձանագրության «ի ոտս Փուսա» արտահայտությունը կարող է և այլ կերպ կարդացվել։

[14] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 182—184։

[15] Ս. Բարխուդարյան, Դիվան... III, էջ 246։



VII (171). Դսեղ. խաչելության խաչքար, 1281 թ. գործ՝ վարպետ Վահրամի

[illegible]

Կյուրիկյան Աբաս թագավորի կին Վանենին ի հիշատակ իր վաղամեռիկ ամուսնու XII ս. վերջում կառուցել է տալիս Դեբեդ գետի վրայի նշանավոր կամուրջը (այժմյան Ալավերդի քաղաքում) և այդ շինարարության առթիվ կանգնեցնում մի խաչքար[16] (նկ. 115)։

Կուրթանի ձորում, Ձորագետի ափին գտնվում են XIII ս. չորս գեղարանդակ խաչքարեր, որոնցից մեկի արձանագրության համաձայն ոմն Բռնավորի որդի Պետրոսը Ձորագետի վրա կամուրջ է կառուցել տալիս իր և ծնողների բարեխոսության համար։ Խաչքարի արձանագրությունը, որը նախկինում որոշ սխալներով է հրատարակվել, հետևյալն է (մեր վերծանմամբ) (նկ. 138).

ԵՍ ԱՆԱՐԺԱՆ ԾԱՌԱ Ա/ՍՏՈՒԾՈ/Յ
ՊԵՏՐՈՍ, ՈՐԴԻ ԲՌՆԱՒՈՐԻ,
ՆՈՐ ՇԻՆԵՑԻ ԶԿԱՄՈՒՐՃ-
Ս ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի Բ-
ԱՐԷԽԱՒՍՈՒԹԵ/ԱՆ/ ԻՆՁ ԵՒ
ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ։ ՈՐ ԿԱՐԴ-
ԵՔ /ՅԻ/ՇԻ ԷՐԿԻՐՊԱԳԱ-
ՆԷՔ ԽՆԴՐԷՔ ԱՂԱՒ-
ԹՍ ՁԵՐ ԵՒ Ա/ՍՏՈՒԱ/Ծ ԶՄԵԶ ԻՇԷ՝
ԱՄԷՆ[17]

Ալավերդուց 3—4 կմ դեպի Հաղպատ, Բերդաձորում, Դեբեդի վրա ոմն Հովհաննես քահանա հինգ եղբայրներով 1273 թ. կամուրջ են կառուցել տալիս և այդ առթիվ կանգնեցնում «ս. Հովհաննես» կոչված խաչքարը՝ համապատասխան հիշատակագրությամբ. «...ԵՍ ՅՈՀԱՆԷՍ ՔԱՀԱՆԱ ԵՒ ԵՂԲԱՐՔ ԻՄ ՅՈՒՆԱՆ, ԴԱՒԻԹ, ՅՈՀԱՆ, ՄԽԻԹԱՐ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ ԵՒ ԶԿԱՄՈՒՐՋՍ Ի ՀԻՄԱՆՑ...»[18]։

Թարթառ գետի վրա Տարսայիճ Օրբելյանի դուստր Ասփան կամուրջ է կառուցել տալիս և նրա շինարարության արձանագրությունը թողնում է գործյալ խաչքարի վրա (Ասփան մահացել է 1311 թ.)[19]։

Սարիղամիշում ոմն Գորգ ջրի առու է հանել տալիս և այդ առթիվ կանգնեցնում արձանագիր խաչքար 992 թվին՝ Սենեքերիմի թագավորության օրոք։ Կատրանիդե թագուհու հրամանով ոմն Խաչիկ ջրի առու է հանում և այդ առթիվ կանգնեցնում խաչքար։

Կամոյի «Դարի գլուխ» գերեզմանատան (ուր հնում ուրարտական ամրոց է եղել) քանդակազարդ խաչքարի պատվանդանի 1375 թ. հիշատակագրության համաձայն, ոմն ամիր Վահապ եկեղեցի է կառուցում, Կենվանի ձորից ու սարերից առու է հանել տալիս և այդ կապակցությամբ կանգնեցնում է հիշյալ խաչքարը[20]։

Օձունում (Թումանյանի շրջան) մի աղբյուրի մոտ կանգնած է 1228 թվակիր խաչքար, որի արձանագրության համաձայն ոմն Գունդեխ ջուր է բերում գյուղը, հիմնում հոգետուն և այդ առթիվ կանգնեցնում հիշյալ խաչքարը՝ ամիրսպասալար Շահնշահի կենդանության և իր որդու՝ Կանանչի հիշատակին[21]։

Ոմն Ումեկ հավերժացրել է իր ծնողների հիշատակը Կուրթանի ձորում մատուռ շինելով և ջուր բերելով։ Այս ամենի առթիվ նա 1229 թ. այստեղ կանգնեցնում է քանդակազարդ, բազալտե մի խաչքար (նկ 137)։ Կոթողի արձանագրությունը, որը նախկինում զգալի սխալներով է հրատարակված, տալիս ենք մեր վերծանմամբ.

Ի ԹՎԱԿԱՆՈՒ-
ԹԵ/ԱՆ/Ս ՀԱՅՈՑ Ի ՈՀԸ /=1229 Թ./.
ԵՍ ՈՒՄԵԿՍ ՇԻՆ-
ԵՑԻ ԶՄԱՏՈՒՌՆ
ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ Զ-
ԽԱՉՍ ԵՒ ՀԱՍՏԱ-
ՏԵՑԻ ԶՐԵՄՍ ԵՒ ԲԵ-
ՐԻ ԶՋՈՒՐՍ Ի ՅԻՄ Հ-
ԱԼԱԼ ՎԱՍՏԱԿԱՆ-
ԱՑ Վ/ԱՍ/Ն ՅԻՇԱ/ՏԱ/Կ ՀԱՒՐ ԻՄ՝
ՄԽԻԹԱՐԱՅ, ՈՐ ՓԱՓ

---

[16] И. А. Орбели, Избранные труды, стр. 452.

[17] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Ուշադրության արժանի է այս արձանագրության երկու անսովոր տառաձևը։ Տե՛ս նաև Ե. Լալայան, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, «Ազգ. հանդես», գիրք 7—8, էջ 330։ Թե ինչի՞ հիման վրա հեղինակը արձանագրությունը թվագրել է ՈՁԹ (=1240), մեզ հայտնի չէ։ Թեև թվագրություն չունի, բայց բոլոր դեպքերում այն XIII ս. առաջին կեսի գործ է, նման է նրա մոտ գտնվող 1229 թ. խաչքարին.

[18] Տե՛ս И. А. Орбели, Избранные труды, էջ 453 և Կ. Ղաֆադարյան, Հաղպատ, էջ 253, որտեղ «զկամուրջս»-ը դարձել է «զկամուրջս»։

[19] Շահխաթունյանց, Ստորագրություն..., հատոր երկրորդ, էջ 363 և Ջալալյանց, Ճանապարհորդություն..., մասն Ա, էջ 206։

[20] Բ. [illegible], Նոր Բայազետի սեպագիրը, «Տեղեկագիր» (հաս. գիտ.) № 2, 1927, էջ 216։ Տե՛ս նաև «Դիվան... IV», էջ 52։

[21] Խաչքարը բազալտից է, համեստորեն զարդարված։

ԿՈԶԻ, ԽԱՒՈՒԹԻ ԿՆՈՋ Ի-
Մ, ՈՐ ԿՈԶԻ ՏԻՐԱՄԱՑՐ,
ՈՐՔ ԿԱՐԴԱՑՔ ԵՒ ԵՐԿՐ-
ՊԱԳԵՔ՝ ՅԻՇԵՑԷՔ Ի
Ս/ՈՒՐ/Ք ՅԱՂԱՒԹՍ ԶԷ/[22]

Խաչքարի քիվի վրա մեկ տողով գրված է՝
ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԵՔ՝ ԶՄԽԻԹԱՐ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇ/ԵՑԷՔ

Հավանաբար խոսքն այստեղ աղբյուրի շինարարության մասին է։

Գյումուշ Սյունիք (Վայոց ձոր) գյուղի մոտ «Խաչաղբյուր» կոչված ձորում, մշտահոս աղբյուրի գլխին՝ 1288 թ. կանգնեցրած խաչքարի արձանագրության մեջ խոսվում է այն մասին, որ Պապաքի և Ամիր Հասանի իշխանության օրոք, ոմն Սարգիս և իր որդի Պետրոսը շինել են այս աղբյուրը և ի հիշատակ կանգնեցրել խաչքար[23]։

Մղարթ (Թումանյանի շրջան) գյուղի աղբյուրի մոտ, երբեմնի կանգուն քաղալած մի խաչքարի պատվանդանի արձանագրության համաձայն, ոմն Բուրաք և իր կենակից Մանդրուսը «բազում աշխատությամբ» ջուր են բերում գյուղ և այդ առթիվ կանգնեցնում հիշյալ խաչքարը[24]։ Արձանագրությունը հետևյալն է.

ԿԱՄԱՒՆ Ա/ՍՏՈՒԾՈ/Յ, ԵՍ ԲՈՒՐԱՔՍ ԵՒ ԿԵՆԱԿԻՑ-
Ն ԻՄ ՄԱՆԴՐՈՒՍ՝ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹ/ԵԱՄ/Բ
ԲԵՐԱՔ ԶՋՈՒՐՍ ԵՒ ԿԱՆԿՆԵՑԱՔ ԶԽ-
ԱՉՍ, ԲԱՐԷԽԱՒՍ ԱՌ Ք/ՐԻՍՏՈ/ՍԻ՝ ՀԱԼԱԼ ԱՐԴԵ-
/Ա/ՑՍ։ ՈՐՔ ԱՐԲԷՔ Ի ՍՄԱՆԷ ԵՒ ԵՐԿԻՐՊ-
ԱԳԷՔ ԽԱՉԻՍ Ք/ՐԻՍՏՈՍ/Ի՝ ՅԻՇԵ-
ՑԷՔ ԶԻՍ ԵՒ ԾՆՈՂՔՆ ԻՄ[25]

Միջնադարում խաչքարեր են կանգնեցվել նաև աղբյուր-հուշարձանների, ջրավազանների կառուցման կապակցությամբ։ Այսպես. Սանահնում 1955 թ. աղբյուր-հուշարձանի վերանորոգման աշխատանքների ընթացքում հայտնաբերված ծածկի թաղի մեջ ագուցված խաչքարերից մեկի թիկունքին կարդում ենք.

Ի ԹՎԻՍ ՉԽԱ /=1292/
ԿԱՆԿՆԵՑԱՒ ԽԱՉՍ ԵՒ
ՇԻՆԵՑԱՒ ԼԻՃՍ ԿԱՐՈ-
ՂՈՒԹ/ԵԱՄ/Բ ՀԱՒ/Ր/ ՅՈ/ՀԱՆ/ԻՍԻ ԵՒ Ա-
ՇԽԱՏՈՒԹ/ԵԱՄ/Բ ԽՈՑԱԴ-
ԵՂ ՄԻԱԿԵՑԻ։ ՅԻՇԵՑ-
ԷՔ Ի Ք/ՐԻՍՏՈ/Ս[26]

Արձանագրությունից պարզվում է, որ աղբյուր-հուշարձանի կառուցումից 37 տարի անց Խոցադեղ Միակեցի և հայր Հովհաննեսի միջոցներով կառուցում է լիճ, որը աղբյուր-հուշարձանի ջրավազանն է եղել։

Բազմաթիվ շինարարությունների, գյուղի գնման, նվիրատվությունների, գործարքների և ամիրսպասալար Սադունի արևշատության համար Հաղպատավանքում 1273 թ. կանգնեցված «Ամենափրկիչ» խաչքարը յուրահատուկ մի կոթող է (նկ. 166)։ Նրա արձանագրության համաձայն վանքի առաջնորդ Հովհաննեսը շինում է «զգաւիթս, զզրատունքս. եւ զսրահ նորին, ածի զպաղատս զլիճն եւ ետու կազմել զմեծածախ պահարանն Ուրգաձորո սուրբ Նշանին[27], գնեցի զգեղն Բալա եւ ընծայեցի սուրբ Նշանիս, կանգնեցի զխաչս...»[28]։

Կալվածագրային, արտոնագրական, հրովարտակային, հարկային և այլ բնույթի արձանագրությամբ բազմաթիվ խաչքարեր են կանգնեցված Հայաստանի տարբեր վայրերում։ Այսպես՝

Հալիձորում (Գորիսի շրջան) այժմյան «Շըրցիկ» կոչվող վայրում ոմն Գրիգորիկ 1265 թ. իր նախաձեռնությամբ առու է բերում և խամ ու խոպան հանդամասը մշակելով այգի է տնկում և սեփականացնում, որը հաստատվում է Տարսայիճ Օրբելյան իշխանի կողմից։ Այս մասին հիշատակագրությունը փորագրվում է այդ առթիվ կանգնեցված «կալվածագիր» կրող խաչքարի վրա[29]։ Նման մի խաչքար էլ կանգնեցվում է XIII դ. 70-ական թվականներին դարձյալ Հալիձորում՝ «Խաչին-խութ» կոչվող վայրում՝ Տարսայիճ Օրբելյանի կողմից, ճարտարապետ Սիրանեսին որպես վարձատրություն տրված կալվածների առթիվ[30]։

---

[22] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Տե՛ս նաև Ա. Ջալալյանց, Ճանապարհորդութիւն..., մաս Բ, էջ 124, «Ազգագրական հանդես», 7—8, էջ 332։

[23] Լ. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955, էջ 90—91։ Ս. Բարխուդարյան, Հայաստանի կոթողային հուշարձանները, «Տեղեկագիր» (հաս. գիտությունների), 1960, 7—8, էջ 68։

[24] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[25] Խաչքարը գրեթե քանդակներ չունի. նրա բարձրությունը 0,80 մ է, լայնությունը՝ 0,4—0,46 մ, հաստությունը՝ 0,13 մ։ Խաչքարի հյուսիսային կողին մի փոքր արձանագրություն ևս կա։

[26] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[27] Ուրգաձորո ս. Նշանի մասին մանրամասն տե՛ս Ա. Ն. Շահինյան, Օձունի տաճարի կառուցման ժամանակի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 123—128։

[28] Կ. Ղաֆադարյան, Հաղպատ, էջ 194 և 212—214։

[29] Ս. Բարխուդարյան, Դիվան... II, էջ 52—53։

[30] Նույն տեղում, էջ 53։

Մարց գյուղի (Թումանյանի շրջան) «Ճգնավորի թալա» վայրի 1170 թվակիր խաչքարի արձանագրության մեջ նշված է, որ ոմն Թամեր (հավանաբար մեծահարուստ) ազատում է Դեղձուտը «արգանի» ջրի հարկից։ Կոթողի արձանագրությունը հետևյալն է.

Ի Թ/ՈՒԻՆ/ ՀԱՅՈՑ ՈԺԹ /=1170/, ՅԱՆՈՒՆ
Ա/ՍՏՈՒԾՈ/Յ ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ԹԱՃ-
ՐԻՍ, ՈՐ ՏՎԻ ԻՄ ԲԱ-
ԺՆԱՑ ԴԵՂՁԻՍ ԴԵՂՁ
ՈՒՏԻՍ, ՈՐ ԱՅԼ ԱՐԴԱ-
Ն ՉԱՌՆՈՒ ՈՉ ՈՎ[31]

. . . .

Ճնորհիվ Մարցի այս խաչքարերի խիստ ուշագրավ արձանագրության՝ մենք այժմ ունենք «արգանի» ջրի հարկի մասին հնագույն հիշատակությունը։

«Արգանի» մասին հիշատակություններ կան նաև մի քանի խաչքարերի վրա, օրինակ, Դսեղի VII գ. հայտնի կոթողի XIII գ. արձանագրության մեջ խոսվում է գյուղը կամ նրա ինչ-որ բնակավայրը՝ Աստարշահը արգանից ազատելու մասին (նկ. 30)։ Արձանագրությունը փորագրված է կոթողի հարավային պատվանդանին[32]։ Այն տալիս ենք մեր վերծանությամբ.

ԵՍ ՎԱՐՀԱՄ ՋԱՒՏԱՐԵՒՆ ԱՐ-
ԳԱՆՆ ԹՈՂԻ, ՎԿԱ ԱՊՆԱՅՆ, ԳԱՒԳԱՑ-
Ն ԵՒ ԽՈՐԻՇԱՀ։ ՈՎ ԽԱՓԱՆԷ, Յ,
ԺԸ՝ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ՆԶՈՎԵՍՑԻ,
Տ/Է/Ր Ա/ՍՏՈՒԱ/Ծ ՈՂՈՐՄԻ ՄԽԻԹԱՐՑԻՆ[33]

Մխիթարիչն հարկավ արձանագրության գրիչն է, իսկ Վահրամը, ամենայն հավանականությամբ, Համազասպյան-Մամիկոնյան իշխանն է, որը միայն կարող էր արգանից ազատել նշված Աստարշահ բնակավայրը[34]։

Այսպիսով, «արգանի» կոչվող ջրի հարկի մասին հայագիտությանը ցարդ հայտնի 10 արձանագրություններից[36] հինգը կոթողների ու խաչքարերի վրա են, այն էլ հնագույն հիշատակությամբ։

Նորահայտ, 1236 թ. մի խաչքարի արձանագրությամբ Մարզպանի որդի Համազասպյան Գրիգոր իշխանը արգանից ազատում է Գադակաձորը (այժմյան Իգատակը, Թումանյանի շրջան)։

Արձանագրության մեջ ասվում է.
խաչքարի ճակատին. ԹՎԱԿ/ԱՆԻՆ/ ՈՁԵ (=1236 Թ) Այնուհետև թիկունքին գրված է.

ԵՍ ԳՐԻԳՈՐ ՈՐԴԻ ՄԱ-
ՐԶՊԱՆԱ ԹՈՂԻ ԶԱ
ԳԱԴԱԿԱԶՈՐՈՅՍ Զ-
ԱՐԳԱՆՆ ԻՄ ՀԱՒՐՆ
ՀՈԳՈՅՆ ԱԶԳԷ ՅԱ-
ԶԳ ԱՒԱԳԻՆ ԱՐԵՒՈ-
ՎՆ ԱՅՍ ԱՆԽԱՓԱՆ Է,
ՇԱՀՈՒՏՍ ԶԽԱՉՍ ԿԱՆ-
ԳՆԵՑԻ, ԶՄԵԶ ՅԻՇ-
ԵՑԷՔ Վ/Ա/Մ/Ն/ Ք/ՐԻՍՏՈՍ/Ի, ԱՌԱՋՆ-
ՈՐԴ ՇԱՀՈՒՏՆ ԷՐ...
ԱՄԵՆԻ, ՈՎ ԽԱՓԱՆԷ,
ՆԱ ՆԶՈՎԻ ԱՄԵՆ[35]։

Այսպիսով, «արգանի» կոչվող ջրի հարկի մասին հայագիտությանը ցարդ հայտնի 10 արձանագրություններից[36] հինգը կոթողների ու խաչքարերի վրա են, այն էլ հնագույն հիշատակությամբ։

Բերդիկում, Հաղպատից մոտ 5 կմ հարավ-արևելք 1212 թվակիր խաչքարի արձանագրության մեջ ոմն Գրիգոր գրել է. (ԶՋԵՌՆԱՒՈՐԱՀԱԿՍ ԲԵՐԴԿԱ, ՎԱՍՆ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԱՆ ՇԱՀՆՇԱՀԻ...»[37]։

Կարբի գյուղի «Դեմեր» վայրում Վաչուտյան Քուրդ իշխանը գրում է «ՇԱՐԵՏ» հարկի վերացման մասին ու այդ առթիվ 1235 թ. կանգնեցնում հսկա մի խաչքար[38]։

Ուշագրավ է, որ Կոշ գյուղի XIII գ. որմնափակ մի խաչքարի արձանագրության մեջ աթաբակ և ամիրսպասալար Շահնշահը թողնում է «Հորահակ կտանե», որն ըստ երևույթին չուլհակներից գանձվող հարկ էր[39]։ Այս կոթողի հարավային պատին նկատվում է թվական՝ Չի կամ Չխ (=1271 կամ 1291, պակասում է տասնավորը)։

---

[31] Արձանագրությունը մեզ տրամադրել է պատմ. գիտ. թեկնածու Արամ Քալանթարյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։ Արձանագրության մեջ հիշատակված Դեղձուտը հավանաբար նույն «Ճգնավորի թալա» կոչված տեղավայրի կամ գյուղի անունն է։

[32] Տե՛ս Գ. Սարգսյան, Բարձրաքաշ վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1957, 11—12, էջ 48—51։

[33] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[34] Կարծում ենք, որ իրավացի չէ Ս. Ա. Ավագյանը, երբ Աստարշահ—Աստարշին պարզ ու հստակ գրված տեղանունը կարդում է Աստարծին (տե՛ս նրա «Վիմական արձանագրությունների հնչյունաբանությունը X—XIV դդ.», Երևան, 1973, էջ 18)։ Վահրամ Համազասպյանի և Դսեղի տանուտերության մասին մենք ունենք վիմագրական նաև այլ տվյալներ։

[35] Արձանագրությունը մեզ տրամադրել է Արամ Քալանթարյանը։

[36] Արգանի մասին մանրամասն տե՛ս Ս. Բարխուդարյան, Դիտողություններ և նոր նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի վերաբերյալ, «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», ժողովածու, Երևան, 1964, էջ 259—283։

[37] Կ. Ղաֆադարյան, Հաղպատ, էջ 252։

[38] Վերցրել ենք մեր հավաքածուից։

Միջնադարյան Հայաստանում ջրի օգտագործման առթիվ զանազան գյուղերի ու մարդկանց միջև վեճեր են ծագել, նույնիսկ այդ առթիվ արյունահեղ կռիվներ են տեղի ունեցել։ Այդպիսի վեճերն ու ընդհարումները ի վերջո լուծվել են իշխանների, տանուտերերի և աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների միջամտությամբ և զանազան հուշարձանների ու տաճարների պատերին, խաչքարերի վրա արձանագրվել են համապատասխան օրենքորոշումներ, որոնցով էլ ղեկավարվել են վիճող կողմերը։

Ջրի օգտագործման այդպիսի մի արյունահեղ վեճի մասին մեզ հաղորդում է Արուճի տաճարի 867 թվակիր արձանագրությունը, վեճ, որը ծագել է Արուճ և Կոշ գյուղերի (երկուսն էլ Աշտարակի շրջան) միջև[40]։

Այդպիսի մի վեճի ժամանակ էլ 1173 թ. Ջըրվեժում սպանվում է ոմն Խաչատուր՝ երիտասարդ հասակում, որի գերեզմանի վրա նույն այդ թվականին հուշարձան է կանգնեցվում (նկ. 100)։

1285 թ. ջրի օգտագործման մեկ այլ վեճի կապակցությամբ պատմական Գեղարքունիքի մի շարք գյուղերի «գզագրաճներն» ու տանուտերերը ջրի օգտագործման կարգի և օրերի մասին համապատասխան կանոններ են սահմանում, որոնք քանդակված են Արծվանիստ (Մարտունու շրջան) գյուղի սահմաններում, Վանեվան հուշարձանից հարավ-արևելք ընկած սարահարթի վրա գտնվող «Ամենափրկիչ» խաչքարի երեսին[41]։

Միջնադարում քաղաքների ու գյուղերի, դաշտամասերի սահմաններում, ճանապարհների եզրերին, բլուրների ու սարերի գագաթներին և նույնիսկ երկրի սահմանների վրա կանգնեցվել են խաչքար-սահմանաքարեր։ Ինչպես գրում է Սմբատ Սպարապետը, «զսինաւռ լերանց եւ դաշտաց՝ քաղքնոյ եւ բերդերոյ եւ գզեղոյ գնել պիտի նշանով եւ գրով ամրցնել...»[42]։ Դատաստանագրքի հիշյալ նախադասության «նշան»-ը ամենայն հավանականությամբ վերաբերում է «սահմանախաչ» խաչքարերին, որովհետև «նշան» կամ «խաչ» են կոչվել նաև խաչքարերը։

Պատմագիր Ստ. Օրբելյանը գրում է, որ Բաղաց Հասան իշխանի որդի Հովհաննես եպիսկոպոսը 1105 թ. գալով Վայոց ձոր, ցանկանում է բնակություն հաստատել այստեղ՝ Նորավանքում։ Այդ նպատակով նա գնում է պարսից սուլթան Մահմուդի մոտ և ստանալով նրանից համապատասխան իրավունք (փարման), բռնությամբ հեռացնում է վանքի շրջակա գյուղացիներին և նրանց հողերից հօգուտ Նորավանքի սեփականացնում Ամաղու, Տխարք, Գանձակ գյուղերը, Գնիշիկի ձորը, Հրասեկա և Անապատ ամրոցները, վերջինիս 12 ագարակները և այդ տարածքի շուրջը կանգնեցնում սահմանանիշ խաչքարեր. «...Եւ շրջապատի սահմանէ զվայրն ամենայն կանգնելով ըղնշանն տէրունի զի մի անցանիցեն ընդ այն կանայք եւ լկտի մարդիկ»[43]։

Սահմանաքար-խաչքարի մասին նշված է ամիրսպասալար Զաքարեի Հառիճավանքում թողած 1201 թվակիր արձանագրության մեջ, որտեղ նա գրում է, որ այստեղ կառուցել է ամրոց և եկեղեցի, որին թանկագին սպասներից բացի, նվիրել է նաև ընդարձակ կալվածներ և վերահաստատել վանքի տիրույթների սահմանները հետևյալ կերպ. «ԵՒ ՋԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆՔՆ, ՈՐ ԲՈՒՆ ԼԵԱԼ ԷՐ ՀԱՍՏԱՏԵՑԻ Ի ՍԱՀՄԱՆԱԽԱՉԷ Ի ՀԱՌԻՃՈՅ ԴԷՏՆ, ԿՈՌՄԱՐԴՈՎ, ԴՐԵՐՈՎՆ, ՑԱՄԱՔՋՈՐՈՎ, ՃԻՆԱՐԻՆ ՀԱՐՈՎՆ, ԴՈՄՑԵՑ ՋՈՐՈՎՆ, ԱՐԵՆԱՂԲԻՒՐՈՎ, ՀԻՆ ՀԱՌԻՃԱՌՈՎ»[44]։

Հառիճավանքի հիշյալ արձանագրության մեջ հիշատակված սահմանախաչը անշուշտ եղել է սահմանաքար և ոչ թե սոսկ գյուղի անունը կրող կոթող։

Սահմանանիշ խաչքարեր են դրվել նաև 1285 թ. պատմական Գեղարքունիքի Վանեվան գյուղի կանգնեցնում մի խաչքար[52]։

---

[39] Կոթողը հարուստ է վիմագրությամբ և հարկային այլ տերմիններով (ճահճահակ և այլն), որոնք համառոտ հեղձահարված են։ Նույն այս հարկի՝ «հորահակ կռաւ»-ի մասին հիշատակություններ կան Ակնեի 1285 և 1287 թթ. արձանագրություններում՝ «հորահակաւ ի ցուլհակէ» և հորակառու ի ցուլհակէ ձեռք (տե՛ս Կարո Ղաֆադարյան, Ակնեի եկեղեցական ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 18—21)։

[40] «Բանասէր», 1903, № 1, էջ 26։ Արձանագրությունն ընթերցվել է որոշ սխալներով։

[41] Ս. Բարխուդարյան, Դիվան... IV, էջ 126։

[42] Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Երևան, 1958, էջ 170։

[43] Ստ. Օրբելյան, Պատմություն..., էջ 348—349։ Այդպիսի սահմանաքարեր է ունեցել նաև Վաղադեի վանքը։ Տե՛ս Ս. Բարխուդարյան, Դիվան... II, էջ 100։

[44] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Վերծանությունը մերն է։

Մղարդում 1201 թ. Նաչմադին իշխանի դուստրը Աղունը իր ամուսնու՝ Սարգիս Համազասպյան-Մամիկոնյանի ու դստեր մահվան առթիվ Սանահնի վանքին տալիս է «զԱրբլասադանց ամեն շահ ու զեննով եւ ԻԵ /=25/ ալրավար հող...» և այդ բոլորի առթիվ կանգնեցնում խաչքար։ Սա գերեզմանային հուշարձան չէ, որովհետև 1215 թ. նույն Աղունը իր որդու հետ Սանահնի վանքում թաղված ամուսնու գերեզմանի վրա կանգնեցնում է մի այլ խաչքար-հուշարձան[53]։

Գողթավանքում XIII դ. ոմն Արևշահ և իր ամուսինը եկեղեցուն տալիս են իրենց «դրամագին» այգին և այդ առթիվ կանգնեցնում ս. Տեբունական կոչվող խաչքարը։ Արձանագրությունը հետևյալն է.

Ի ՅԱՆՑԵԼ ԺԱՄԱՆԱԿԱՑ
ԵՒ Ի ԿԱՐԺԵԼ ԱՒՈՒՐՑՍ,
ԵՍ ԱՐԵՒՇԱՀՍ ՀԱՆԴԵ-
ՐՁ ԱՄՈՒՍՆԱՒ ԻՄՈՎ Կ-
ԱՆԳՆԵՑԱՔ ԶՆՇԱՆՍ
Ք/ՐԻՍՏՈՍ/Ի, ԱՌ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈ-
ԳՒՈՅ ՄԵՐՈՅ ԵՒ ԵՏՎԻ
ԶԻՄ ԴՐԱՄԱԳԻՆ ԱՅԳԻ-
Ն Ի ՀԵՏ ԻՄ ԱՆՑՄԱՆ Ի Յ-
ԱՍ Ս/ՈՒՐ/Բ ԵԿԵՂԵՑԻՍ. ՔԱՀԱՆ-
Ա- ՈՐ ԶՊՏՈՒՂՆ ՍՏԱՆԱ՝
ՊԱՐՏԻ Ի ՏԱՐՈՒՄՆ, Բ։ ԺԱՄ[54]

Մի շարք խաչքարեր կանգնեցված են նվիրատվական տարբեր շարժառիթներով և զանազան դեպքերի հիշատակությամբ։ Այդպիսիք կան Հաղբատում, Նորադուզում, Հոռոմայրում և այլուր[55]։

Աթոռակ գյուղատեղում[56] 1279 թ. հատուկ խաչքար է կանգնեցվել մի խումբ մարդկանց կողմից՝ իրենց հայրենի հողերից գյուղին գերեզմանատեղ տրամադրելու առնչությամբ։ Նկատի առնելով այն, որ այս խաչքարի արձանագրությունը թերի է և սխալներով է ընդօրինակված ժամանակին Հովհաննես Ղրիմեցու[57] կողմից, ներկայացնում ենք այն մեր վերծանմամբ և ուղղումներով.

Խաչքարի քիվի վրա երեք տողով գրված է.

ԿԱՄԱՒՔՆ Ա/ՍՏՈՒԾՈ/Յ, Ի Տ/Է/ՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՈՆ
ՍԱԴ-
ՈՒՆԻՆ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ/ԱՆ Տ/Է/Ր Յ-
ՈՎԱՆՆԻՍԻ ԱՆՑԱԽՔ ԳԻՏՆԱԿԱՆԻ,

իսկ խորանարդաձև պատվանդանի ճակատին՝ 7 տող.

ՄԵՔ ԾԱՌԱՅՍ Ս/ՈՒՐ/Բ ՆՇԱՆԻՍ՝ ՄԱՆՈՒԷԼ, ՄԸ-
ԽՈՒԿ ԵՒ ՆԷՐՍԷՍ,
ԳՐԻԳՈՐԷՍ, ՅՈՀԱՆԷՍ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ Յ
ԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ ԶԱՒՐԱՒԱՐԻՆ ԵՒ ՏՎԱՔ
ԳԵՂԻՍ
ՏԵՂԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ Ի ՄԵՐ ՀԷՐԷՆԻ ՀՈՂԷ ՅԻՇԱՏԱԿ
ՄԵԶ։ ԵՒ ՈՐ
Ք ԵՐԿՐՊԱԳԷՔ ՍՐԲՈ ՆՇԱՆԻՍ ՅԻՇԵՑԷՔ ԶՄԵԶ ԵՒ
ԾՆՈՂՍՆ
ՄԵՐ ԶՀՈԳԵՒՈՐ ԶԱՒԱԿՍՆ ՄԵՐ ԶՊԵՏՐՈՍ, ԶՊԱՒ-
ՂՈՍ, ԶՄԱՆՈՒԷԼ,
Ի ԹՎԻՍ ՉԻԸ (=1279 Թ.)[58]։

Խաչքարի խաչաքանդակի թևերի արանքներում գրված է.

Տ/Է/Ր Ա/ՍՏՈՒԱ/Ծ
Յ/ԻՍՈՒ/Ս Ք/ՐԻՍՏՈ/Ս[59]։

Սանահնի վանքի 1241 թվակիր խաչքարի արձանագրության համաձայն, ոմն Քերոբ իր գնած այգին նվիրում է սուրբ Սարգսին, որպեսզի «ԿՈՒՍԱՆՔՆ ՎԱՅԵԼԵՆ»[60]։

Հաղբատավանքում ոմն Սարգիս վարդապետ կրոնավոր իր եղբայրների հետ 1563 թ. խաչքար է կանգնեցնում «ի ճանապարհիս», տնկում այգի, ցանկապատում և նվիրում վանքին[61]։ 1226 թ. Նորադուզի (հնում՝ Նորատուս) առաջնորդը՝ Մխիթարը «Հազախաչ» կոչվող խաչքարի վրա գրել է «...խադակս հանի, փարիկս շինեցի, խաչս կանգնեցի... յեզր մեզանիս...»[62] (Նկ. 140)։

---

[52] Կ. Բասմաջյան, Անիի դրացի Կարմիր վանքը, Բոստոն, 1910, էջ 335—336։

[53] Սարգիս Համազասպյանի հիշատակին կանգնեցված զույգ խաչքարերի մասին տե՛ս Ա. Շահինյան, Մամիկոնյան-Համազասպյան տոհմը Հյուսիսային Հայաստանում XII—XIII դդ., «Էջմիածին», 1968, № 3, էջ 88։

[54] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[55] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 220—231, Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ..., էջ 188։

[56] Աթոռիկ գյուղատեղը գտնվում է Դեբեդի ձախ ափին, երկաթգծի առաջին թունելի մոտ, Ալավերդուց մոտ 2—3 կմ դեպի Ախթալա։

[57] Հովհաննես Ղրիմեցու ձեռագրից հիշյալ արձանագրությունը հրատարակել է պրոֆ. Կ. Ղաֆադարյանը իր «Հաղբատ» աշխատության մեջ, էջ 265։

[58] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[59] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Խաչքարն ընկած է պատվանդանի վրայից։ Նրա ընդհանուր բարձրությունը եղել է 3,20 մ։

[60] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 138։

[61] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 264։

[62] Ս. Բարխուդարյան, Դիվան... IV, էջ 22—23։

Միջնադարյան Հայաստանում խաչքարեր են կանգնեցվել գյուղերի ու բնակավայրերի շինության և վերաշինության առթիվ։ Մարտիրոս գյուղի (Սյունիք՝ Վայոց ձոր) կենտրոնում կանգնած է վարդագույն գրանիտից մի մոնումենտալ խաչքար, ում Մխիթար (Դեղկա որդի) գրում է, որ հիմնել է Մարտիրոս գյուղը 1283 թ. և այդ առթիվ կանգնեցրել հիշյալ կոթողը վարպետ Ընհավորի ձեռքով. «ԵՍ ՄԽԻԹԱՐ ՈՐԴԻ ԴԵՂԿԱ, ՀՐԱՄԱՆԱՒ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՆ ՄԵԾԻՆ ՊՌՈՒՇՈ ԵՒ ՈՐԴՈ ԻՒՐՈ ՊԱՐՈՆ ՀԱՍԱՆԱ, ՇԻՆԵՑԻ ԶԳԵԱՒՂՍ ԶՄԱՐՏԻՐՈՍՍ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ... ԿԱԶՄԵՑԱՒ ՁԵՌԱՄԲ ԸՆՀԱՒՈՐԻՍ Ի ԹՎԻՆ ՉԼԲ [=1283 թ.][63] *(նկ. 178)։ Խաչքարի բարձրությունը 3,40 մ է, լայնությունը՝ 1,34 մ, հաստությունը՝ 0,36 մ, վարդյակի տրամագիծը՝ 0,80 մ.։*

Արարատի շրջանի հին Ղարաղոյուն գյուղի վերաշինման առթիվ կանգնեցվել են բազալտե զույգ խաչքարեր 1551 թ. (նկ. 194—196)։ Դրանցից մեկի՝ վերևից կոտրված խաչքարի հյուսիսային կողին պարզ ու հստակ, տասներկու նեղ տողերով գրված է.
ԿԱՄ[ԱՒՆ] Ա[ՍՏՈՒԾՈ]Յ ԿԱՆԳՆԵՑԻ Խ[Ա]ՉԵՐՍ, ՇԻՆԵՑԻ ԳԵՂՍ։ ՀԱՍԱՆ ՓԱՇՃԱՀԷՆ ՍԱՒՈՒՂԱՐ Է։ ԹՎԻՍ Ռ [=1551 Թ.] ԻՇԵՑԷՔ Խ[Ա]Չ[ԱՏՈՒՐ] ԴԵ[ՈՂ]Մ[64]։

Արձանագրության մեջ դժվար հասկանալի է «Հասան Փաշճահէն սաուղղար է» արտահայտությունը, բայց ուշադիր քննության դեպքում կարելի է հավանական մի շարք ենթադրություններ անել։ Այսպես, մեր կարծիքով, արձանագրության մեջ ակնարկված Հասան Փաշճան՝ նույն ինքն ակկոյունլու Հասան բեկ, Ուզուն Հասան կամ Հասան փադիշահ կոչեցյալն է, որը հաճախ հիշատակվում է XV—XVIII դդ. մանր ժամանակագրություններում[65]։ *«Փաշճահ»-ն փադիշահ—թագավոր բառի ժողովրդական ձևն է, իսկ «սաուղղար»-ը XIV—XVIII դդ. Արևելքում տարածված «սոյուրղալը» հողատիրական իրավունքի ձև է, մոնղոլական տերմին է «պարգևական» հող իմաստով*[66]։ *Այսպիսով պարզվում է, որ հիշյալ գյուղի տարածքը դեռևս XV դ. ակկոյունլու Հասան փադիշահի կողմից «սոյուրղալ» է եղել և այդ տեղում էլ հիմնվել է նոր գյուղը։*

Արդ, ո՞վ է շինել հիշյալ գյուղը։ Ինչպես նշեցինք վերևում, կանգնեցվել են երկու խաչքարեր։ Երկրորդ խաչքարի քիվի վրա տեսնում ենք գյուղի հիմնադրի անունը՝ Մարգար։ Նրանում գրված է. «Մ[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵԽ[ԱՒ]Ս ՄԱՐԳԱ[Ր]ԻՆ[67]*»։ Այստեղից կարելի է ենթադրել, որ հիշյալ գյուղի հիմնողը Մարգարն է, բայց քանի որ այս նույն վայրում շատ ավելի հին խաչքարեր ու բնակավայրի հետքեր կան, կարծում ենք, որ Մարգարը ոչ թե հիմնադրել կամ շինել է այն, այլ վերաշինել։ Ամենայն հավանականությամբ 1551 թ., երբ Մարգարը վերաշինել է այս գյուղը, նախապես Հասան փադիշահից սոյուրղալի՝ հողատիրական իրավունք է ունեցել։ Խաչքարի կերտող վարպետը անհայտ Խաչատուր գծողն է։ Նման այլ խաչքարեր ևս կան այլուր։*

Կիրակոս Գանձակեցու վկայությունից իմանում ենք, որ Գանձակ քաղաքի (այժմ՝ Կիրովաբադ) դարպասների ներքին սեմերում խաչքարեր են կանգնեցված եղել «զխաչսն՝ որ բևեռեալ էին ի վերայ ներքին սեմոց դրանց քաղաքին»[68]։

Ստ. Օրբելյանը վկայում է, որ Աթաբեկ Տարսայիճ Օրբելյանը «այնքան ողորմած և գթած եղև առ ամենեսեան զի ի Նեւրիս գիւղ, որ է ի վերայ Հուրազդան գետոյ, խաչ կանգնէին և անուամբ նորա կոչէին զնա»[69]։ *Այսպիսով, պարզվում է, որ անվանի մարդկանց անունով ևս Հայաստանում խաչքարեր են կանգնեցված եղել։ Մեսրոպ Մաշտոցի անվանն է վերագրվել Գաղ բերդում (այժմյան Ղազախի շրջան, Ադրբեջանում) կանգնեցված մի խաչքար*[70]։ *Մարտունու շրջանի Ն. Գետաշեն (նախկին Կոթարար) գյուղում IX դարում կանգնեցված է եղել խաչքար Վարդան Մամիկոնյանի անվամբ (նկ. 49)։*

Ուշադրության արժանի են Հայաստանում որպես «աւգնական աշխարհիս» կամ որպես «նշան սիրոյ հաշտութեան առ մարդիկ» կանգնեցված խաչքարերը։

---

[63] Ս. Բարխուդարյան, Դիվան... III, էջ 183։

[64] Վերցրել ենք մեր հավաքածուից։ Խաչքարի ներկայիս բարձրությունը 1,57 մ է, լայնությունը՝ 0,85 մ, հաստությունը՝ 0,30 մ։

[65] «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հատոր I, կազմեց Վ. Ա. Հակոբյանը, Երևան, 1951, էջ 168։

[66] Տե՛ս *И. П. Петрушевский*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Ленинград, 1949, стр. 145—6։

[67] Մարգարի խաչքարի բարձրությունը 1,80 մ է, լայնությունը՝ 0,82 մ, հաստությունը՝ 0,25 մ։

[68] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 222։

[69] Ստ. Օրբելյան, Պատմություն..., էջ 427։ Նևրիս գյուղը հավանաբար այժմյան Աբովյանի շրջանի Նուռնուս գյուղն է եղել, որտեղ բազմաթիվ խաչքարեր կան (Հրազդան գետի ափին)։

[70] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 238։

Վանի շրջանի Ալյուր գյուղի ս. Աստվածածին վանքի հյուսիսային պատին դրված 1214 թվակիր մի խաչքարի արձանագրության մեջ կարդում ենք.

Ի ՌԿԴ /=1214/ ԹՈՒԻ, ԱՅՍ ԽԱՉ
ԿԵՆՍԱՏՈՒ ԵՒ ՆՇԱՆ ՍԻՐՈՅ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԱՌ ՄԱՐԴԻԿ,
ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՋԱՆՁՐԵՎ ՔԱՀԱՆԱ ՅԻՇԵՍՋԻՔ Ի
ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԶՅՈՎ/Ա/ՆԷՍ ԴՍՈՂ[71]

Սանահնում «Ամենափրկիչ» անվամբ 1215 թվակիր խաչքար է կանգնեցված՝ որպես «օգնական աշխարհիս»[72]։

Հայաստանում խաչքարեր են կանգնեցվել գյուղերի առաջնորդներ նշանակվելու կապակցությամբ՝ համապատասխան հիշատակագրություններով։ Այսպես, Նորագյուղի մի խաչքարի արձանագրության մեջ Փեչուրանց Դավթի որդի Մխիթարը գրում է, որ նա առաջնորդ է դարձել Զաքարեի և Իվանեի հրամանով[73]...։ Ակունքի (Վարդենիսի շրջան) «Դարի գլուխ» հնավայրի գագաթին բազալտե խաչքար է կանգնեցրել գյուղի առաջնորդ Միրզաճանը (XVI դ.), արձանագրելով, «ԵՍ ՄԻՐՋԱՃԱՆՍ ԱԿՆԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԿԱԿՆԵՑՈՅՑԻ ԽԱՉՍ»[74]։ Նորագյուղի 1225 թվակիր խոշոր ու գեղաքանդակ խաչքարի վրա գյուղի առաջնորդ Խոյդանը արձանագրել է, որ նա հինգ տարի Նորագյուղի «դեհմեթար (առաջնորդ) է եղել «Ի ԹՎԻՍ ՈՀԴ /=1225/ ԵՍ ԽՈԴԱՆ Ե /=5/ ԱՄ ԴԵՄԵԹԱՐ ԿԱՑԻ ՆՈՐԱՍՈՒԱՑ...» (նկ. 139), իսկ Շորժայում (Սյունիք, Սոթից գավառ) գյուղի տանուտեր Ավետիս աղան XVII դ. մեկ այլ խաչքարի վրա արձանագրել է, որ 60 տարի տանուտերություն (տանգրութիւն) է արել և նըշում իր տերության սահմանները[75]։

Անցյալում խաչքարեր են կանգնեցրել նաև բընության արհավիրքների հիշատակությամբ։ Այսպես, Իջևանի շրջանի Գետաշեն գյուղի սահմաններում 1267 թվակիր մի խաչքարի արձանագրության մեջ նշված է, որ այդ թվականին «արեգակն խաւարեցաւ... եւ ահ կալաւ զամէնէսեան»[76]։ 1175 թ. տեղի ունեցած երկրաշարժի և արևի խավարման մասին է խոսում Կոշ գյուղի ճանապարհին 1195 թ. կանգնեցված հայտնի որմնափակ խաչքարի արձանագրությունը։

Հողի ու կալվածների առուծախի առթիվ ևս կանգնեցվել են խաչքարեր։ Այսպես, Կուրթանի գերեզմանատանը կանգնեցված խաչքարի յոթտաղանի արձանագրության մեջ հիշատակվող ոմն Աստվածատուր գնում է Մարկոսի այգու կեսը 1246 թ.։

Ի ԹՎ/ԻՆ/ՈՂԵ /=1246/ ԵՍ Ա/ՍՏՈՒԱ/ԾԱՏՈՒՐՍ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԳՆԵՑԻ ՄԱՐԿՈՍՈՅ ԱՐՏԻՆ ԿԵՍ, ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԵ/ԱՆ/ ՀՈԳ/ՈՅ/ ԻՄՈՅ[77]։

1266 թ. հողի վաճառքի մի խոշոր գործարքի մասին է արձանագրված Քանաքեռում Պետևանի և իր կնոջ՝ Ավագտիկինի 1265 թ. կանգնեցրած որմնափակ հսկա խաչքարի վրա։ Այդ գործարքին մասնակցել են որպես վկաներ՝ պետական պաշտոնյաներ և քաղաքի հոգևոր ու աշխարհիկ անվանի մարդիկ։ Վաճառված այգու արժեքն է եղել «3200 սպիտակ» (նկ. 153)։

Ուշագրավ է այս արձանագրության վերջում հիշատակված պետական պաշտոնյա նշանակող «մեծղունաս» տերմինը, որպիսին վիմական հիշատակարաններում միակն է։ Ամենայն հավանականությամբ այն համարվել է շահնայի նման մի պաշտոն[78]։

Խաչքարերը որպես մահարձանային հուշարձաններ հազվադեպ են պատահում IX—X դդ.։ Նրանք լայն տարածում գտան հատկապես XIII դ.։ Որպես մահարձանային հուշարձան X դ. խաչքարերից մեկը գտնվում է Թանատի վանքում[79]։

Խաչքարը մահարձանային կոթող լինելու դեպքում, սովորաբար, նրա առջև դրվում է սալ կամ օրորոցաձև տապանաքար, իսկ արձանագրության մեջ հիշատակվում է, որ խաչքարը դրված կամ կանգնեցված է «ի վերա գերեզմանիս» կամ «ի վերայ տապանիս» այսինչի։ Օրինակ, Խծկոնքի 1208 թվակիր մի խաչքարի արձանագրության մեջ ասված է՝ «Կանգնեցի զխաչս պահապան գերեզմանի

---

[71] «Ազգագրական հանդես», գիրք 2, էջ 99։

[72] Ա. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն..., մասն Ա, էջ 10։

[73] Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի..., էջ 485։

[74] Գյուղի հին անունը Ակունք է։ Երկու դեպքում էլ առաջնորդը գյուղի ղեկավարն է։

[75] Ս. Բարխուդարյան, Դիվան... IV, էջ 26, 284։

[76] Այդ մասին մեզ տեղեկացրել է Ս. Ավագյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։

[77] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[78] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[79] X դարից մի այդպիսին էլ կա Վահանավանքում, բայց ընդհանրապես դրանց թիվը մեծ չէ։



[illegible]

սորա»[80]։ Խաչքարեր են կանգնեցվել ոչ միայն իրենց՝ պատվիրատուների, այլև նրանց հարազատների շիրիմների, պատերազմներում ու գերեվարության ընթացքում անհետ կորածների հիշատակին։ Օրինակ, Հերհեր գյուղում 1317 թ. կանգնեցվել է խաչքար «Ի ԲԱՐԵԿԱՄԻՍ ԱՐՐԱՀԱՄԱՅ, ՈՐ ՄՆԱՑ Ի ՄԱՐ...»[81]։

Օրբելյան Փախրադոլյան (1225—1269 թթ.) Նորավանքում խաչքար է կանգնեցնում իր հոր՝ Բուրթելի հոգու փրկության համար[82]։ Կողեսում «Ս. Երրորդության» անունով երեք խաչքարից բաղկացած մի կոթող կանգնեցված է մոնղոլական արշավանքների ժամանակ անհետ կորած Սասնայի, Քավթարի և Նորադինի հիշատակին (1241 թ., նկ. 143)։

Հայկական խաչքարերը որպես կոթողային հուշարձաններ լինելուց բացի, նաև ճարտարապետական հուշարձանների արտաքին ճակատների և ներքին ծավալների հարդարման կարևոր տարրեր են։ Այդպիսի ճարտարապետական հուշարձանների լավագույն նմուշներն են Ծաղաց քարի, Նոր Վարագա վանքի, Նոր Գետիկի և Դեղձնուտի վանքերի հուշարձանները, Հոռոմոսի, Հաղպատավանքի, Հովհաննավանքի, Դադի վանքի, Նորավանքի և այլ բազմաթիվ վանքերի գավիթները։

Ծաղաց քարի մատուռ-դամբարանի (1041 թ.), Հաղպատավանքի Զիգրաշեն տաճարի (1195 թ.), Նոյեմբերյանի Ջուխտակեղեցիի պատերին ագուցված խաչքարերը օրգանապես միահյուսվելով հիշյալ հուշարձանների արևմտյան ճակատների հետ, վերջիններիս տալիս են շքեղ տեսք (նկ. 197)։

Գոշավանքի ս. Գրիգոր եկեղեցուն (1237 թ.) և Դեղձնուտի վանքի գլխավոր տաճարին (1253 թ.) իրենց կոմպոզիցիոն ձևերով յուրահատուկ հմայք են տվել նրանց արևմտյան մուտքերի երկու կողմերում առանձին պատվանդանների վրա կանգնած երկուական խաչքարերը (նկ. 181)։

Պատմական անցքերի, դեպքերի ու դեմքերի հիշատակագրությամբ խաչքարերը եզակի սկզբնաղբյուրներ են մեր ժողովրդի պատմության ուսումնասիրության համար։ Այդ իմաստով խիստ արժեքավոր աղբյուր է Հաղպատավանքի 1246 թվակիր նորահայտ այն խաչքարը[83], որի արձանագրության մեջ թվարկված են Թոմանոս կայսեր (920—944 թթ.) օրոք Բյուզանդիայում հալածված և Հայաստան ապաստանած մոտ 40 հայ հոգևորականների անունները (նկ. 145)։ Այս խաչքարի արձանագրությունը հրատարակող Ս. Բարխուդարյանը ելնելով նրանց հունական անուններից, ենթադրել է, որ նրանք հայեր չեն, այլ հույներ[84]։ Այս կարծիքը վիճելի ենք համարում նախ, որ հոգևորական օծվելիս, որպես կանոն, այդ մարդկանց հայկական անունները կարող էին փոխվել հունականի, նամանավանդ, որ նախքան Հայաստան գալը վերոհիշյալ հոգևորականները հովվել են բյուզանդական միջավայրում։ Բացի այդ, նշված հոգևորականներից մի քանիսի անունները՝ Սիսիանոս, Եղիա, Ավետոս (Ավետիս), Յովանէս պարզորոշ հայ գործիչների անուններ են։ Վերջինս հայտնի է որպես Կամրջաձորի վանքի հիմնադիր[85]։

Ահա թե ինչ է գրում պատմիչը Բյուզանդիայից Հայաստան ապաստանած այդ հոգևորականների մասին. «Սա (Թոմանոս կայսեր մասին է խոսքը) հալածեաց զամենայն կրօնաւորս և զքահանայս Հայոց, որք էին յաշխարհէն Հոռոմոց, զի ոչ հաւանեցան դաւանութեանն Քաղկեդոնի. և եկեալ յաշխարհս Հայոց յաւուրս Աբասայ՝ որդւոյ Սմբատայ, հաստատեցին վանորայս զԿամրջաձոր և զԿապոյտ Քարն ի գաւառին Արշարունեաց, և զԴպրեվանք ի Շիրակ գաւառին. շինեցին և եկեղեցին մի յանուն ամենասուրբ Աստուածածնին ի վանքն՝ որ կոչի Սանահին, ի սահմանս Լոռէ քաղաքին, և զի կոչէին զերիցունսն՝ Հոռոմոց երէց, անուանեցին զմի վանքն՝ որ ի Շիրակ՝ Հոռոմոց վանք. որ ցարդ կա Հոռոմեցի վանք»[86]։

---

[80] „Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего", переводъ Н. О. Эмина, Москва, 1881 стр. 87.

[81] Ս. Բարխուդարյան, Դիվան... III, էջ 68։

[82] Նույն տեղում, էջ 223։ Հորս Բուրթելը Փախրադոլյան տոհմակցայիններից է, հոր զարմիկը։

[83] Այս խաչքարը հայտնաբերել է հայ միջնադարյան ճարտարապետական հուշարձանների չափահան ճարտարապետ-վերականգնող, վաստակավոր Հրանտ Հակոբյանը։ Այդ մասին նա հաղորդել է մեզ, մենք էլ մեր հերթին՝ Ս. Բարխուդարյանին։ Խաչքարը կանգնած է եղել պատվանդանի վրա, որն այժմ չկա։ Բուն խաչքարի բարձրությունը 0,69 մ է (ներքևից քիչ կոտրված է), լայնությունը՝ 0,45 մ, հաստությունը՝ 0,11 մ։

[84] Ս. Բարխուդարյան, Նորահայտ արձանագրություն Հաղպատավանքում, «Էջմիածին», 1967, № 2, էջ 56—61։

[85] Հ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 547։

[86] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 79։ Տե՛ս նաև Կիրակոս Տարոնեցի, Պատմութիւն տիեզերական, էջ 73 և Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 88։

Վերջերս Արծվանիկում (Ղափանի շրջան) մեր հայտնաբերած XI դ. 20-ական թթ. եզակի խաչքարի վրա պահպանվել է վեց ծածկագրություն գրված խաչքարի թիկունքին՝ վեց տարբեր գաղտնագրերով։ Այդ արձանագրությունը հարուստ տվյալներ է պարունակում մեր ժողովրդի նաև լեզվի ու գրչության պատմության մասին (նկ. 84)[87]։

Սանահինի վանքի անվանի առաջնորդ Գրիգոր վարդապետ Տուտեորդին պատմագրության մեջ մեռած է համարվել 1208 թ.[88], սակայն Աքորիի ս. Սարգիս խաչքարի արձանագրության շնորհիվ պարզվում է, որ նա ողջ էր դեռևս 1233 թ.։ Կայծակից վնասված և բարձր պատվանդանի վրա կանգնած այս բազալտե խաչքարի թիկունքին կարդում ենք. ՍԲ ՍԱՐԳԻՍ, Ի ԹՈՒԻՆ ՈՁԲ /=1233/։ ԵՍ ՀԻՒՍՆ ՔՈԹԻՔ, ԵՂԲԱՐՔ ԵՒ ՄՆՈՂԱԻՔ ՄԱՌԱՑՔ ԱԾԱԾՆԻ ՍԱՆԱՀՆԻՆ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՈՐԴՈ ՏՈՒՏԱ՝ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ] ՍԱՆԱՀՆԻ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵՑԵՔ ԶՄԵԶ ԵՒ ԶՄՆՈՂՍՆ ՄԵՐ Ի Ք/ՐԻՍՏՈ/Ս[89] (նկ. 141)։

Խաչքարերը կարևոր դեր են խաղացել նաև հայ միջնադարյան հոգևոր կյանքում նրանց հետ կապված են զանազան ժողովրդական ավանդություններ ու հրաշապատում զրույցներ, որոնք թեև ոչ մի կապ չունեն այդ կոթողների իսկական բովանդակության հետ, բայց և այնպես կարևոր են հայկական միջնադարյան ժողովրդական պատկերացումների, մտածողության, բանահյուսության ուսումնասիրության տեսակետից։ Միջնադարյան այդ ավանդապատումների ու հրաշապատում զրույցների հիմքում հաճախ ընկած են դեռևս հեթանոսական շրջանի զանազան պատկերացումների ու հավատալիքների վերապրուկները։ Խաչքարերին վերաբերող միջնադարյան այդպիսի հրաշապատում զրույցներից մեկի մասին է հաղորդում Կիրակոս Գանձակեցին։

Հայաստանում, մոնղոլական արշավանքների ժամանակ, Տավուշ բերդի հարավում, Ոլորուտ գյուղի դիմաց գտնվող մի քարայրի մեջ, ի թիվս այլ ապաստանածների, գերվում են նաև Կիրակոս Գանձակեցին և նշանավոր ուսուցչապետ Վանական վարդապետը[90]։ Վերջինս 80 դահեկան փրկագնով ազատվում է, իսկ Կիրակոս Գանձակեցին առժամանակ մնում է գերության մեջ։ Բաժանվելիս Վանական վարդապետը դիմելով Կիրակոս Գանձակեցուն՝ խոստանում է աղոթել Գագ բերդում գտնվող և Մեսրոպ Մաշտոցին վերագրվող ս. Սարգիս «սքանչելագործ» խաչքարին՝ նրա ազատման համար. «...ի Գագ խաչ մի սքանչելագործ առ ամենայն նեղեալս, եւ մանաւանդ առ գերիս. զի որք ապաւինէին բոլորով սրտիւ, ինքն իսկ սուրբ վկայն Սարգիս բանայր զդուռն բանտից եւ արգելանաց, եւ լուծանէր զերկաթս, եւ առաջնորդէր մարմնաւոր տեսլեամբ ի տեղիս իւրեանց. եւ համբաւ սքանչելեացն տարածեալ էր ընդ ամենայն ազգս, զոր կանգնեալ ասէին սրբոյն Մեսրոպայ վարդապետին մերոյ»[91]։

Հայաստանի շատ վայրերում այժմ էլ գոյություն ունեն ոչ քիչ թվով խաչքարեր, որոնց վերագրվել են զանազան հիվանդություններից բուժելու հատկություններ («Հազախաչ», «Հազամեռ», «Ամենափրկիչ», «Թալալոց» կոչվող խաչքարերը)։ Ըստ անցյալի հավատալիքների «ս. Սարգիս» կոչվող խաչքարերը իրենց այցելող սիրող զույգերին երջանկություն են բերում, «ս. Գևորգ» կոչվող խաչքարերի այցելուները անխոցելի և համարձակ են դառնում պատերազմում։ Կան նաև, այսպես կոչված, «ագռավի տապան» խաչքարեր (Հաղբատ, Դսեղ), որոնց շուրջը հյուսված է այսպիսի ավանդություն. դաշտում հնձվորների համար կաթ տաքացնելիս կաթսայի մեջ օձ է ընկնում. այդ նկատում է վերևից թռչող ագռավը և շուռ է տալիս կաթսան՝ զոհելով իրեն։ Այդ դեպքի համար էլ խաչքար են կանգնեցնում հիշյալ ագռավի տապանի վրա[92]։ Մեծ տարածում են ունեցել «Ծառման խաչեր» կոչված խաչքարերը՝ կանգնեցված բլուրների վրա, գյուղերի ու վանքերի մոտակայքում և այլուր։ Բանասեր Ս. Հայկունին գրում է. «Բագրեւանդա շատ մի գիւղերու մօտ բարձր դիրքի վեքայ տեսած եմ մեծ խաչ արձաններ, որոնց գիւղացիք Սաաման խաչ կասեն, որ լինելու է Ցասման խաչ, որդեն երբ երաշտ լինի, զո՛ւ կը մատուցանեն եզ, կով, ոչխար և այլն... կօրհնեն կուտեն կասեն Սաաման ժամ»[93]։ Զոհաբերության այս սովորությունը Հայաստանում տարածված էր դեռևս հեթանոսության շրջանում։ Երաշտի ժամանակ, ինչպես գրում է Կ. Մելիք-Փաշայանը[94], Նարի (ջրի և պտղաբերության աստվածուհու) և Անահիտի արձանները շրջեցնում էին և ամեն կողմից նրանց վրա ջուր ցանում ու զոհեր մատուցում, որպեսզի անձրև գա։ Հեղինակը գրում է. «Նարը մեզ մոտ վերապրուկային ձևով արտահայտվել է Նուրինի պաշտամունքով, որի մասին կան բազմաթիվ երգեր»[95]։ Միջնադարում այդպիսի դեր վերագրվում էր այսպես կոչված «Ցասման խաչերին»։ Որ նման քարերը համապատասխան ծիսակատարությամբ բերում կամ տնկում էին առանձին վայրերում, հաստատվում է նյութական մշակույթի հուշարձանների մնացորդներով, որպիսին հաջողվել է մեզ հայտնաբերել Շամշադինի շրջանի Այգեձոր գյուղի սահմաններում, Նրգեվանք ամրոցի հյուսիսային կողմում։ Այստեղ, Ճմեղադետի (Ախինջի) աջ վտակի հարավային ափին գտնվում է «Աղջկաբերդ» փոքրիկ ամրոցը, բարձր, անտառապատ մի ժայռի գագաթին։ Ամրոցից հյուսիս, գետակի ձախ ափին, ճամփի եզրին գտնվում է XII—XIII դդ. մի խոշոր խաչքար՝ կարմիր քարից։ Այժմ այն ընկած է պատվանդանից և բաժանված երկու մասի. Ներքևի մասում պահպանվել են երբեմնի ընդարձակ արձանագրության հետևյալ կիսատ տողերը.

---

[87] Տե՛ս «Հնագույն նորահայտ արձանագրություն», «Սովետական Հայաստան», 1975, փետրվարի 5։ Ա. Գ. Աբրահամյան և Ա. Ն. Տաճիկյան, Արծվանիկի նորահայտ ծածկագիրը և նրա վերծանությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 67—77։

[88] Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը..., էջ 52—53։

[89] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[90] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 230—232։

[91] Նույն տեղում, էջ 238։

[92] Նման մի ավանդություն էլ հյուսվել է Վանի շրջանում գտնվող Կտուց վանքի հուշարձանի շուրջը, որ իբր հնի ժամանակ հնձվորների կաթսայի մեջ օձ է ընկնում, կռունկը օդում հափշտակելով տանում է այն և իրեն գցում կաթսայի մեջ ու փրկում հնձվորներին։ Այդ պատճառով էլ վանքը կոչվել է Կտուց վանք։ Տե՛ս Համազասպ Ոսկյան, Վասպուրական, Վանի վանքերը, Ա մաս, Վիեննա, 1940, էջ 247, «Ազգագրական հանդես», գիրք 25, 1964, էջ 46—47։

...|Տ|ԱՓԻՆ |ԱԻՆ|ՏԱ|ՐԱՆ|...
Զ ...ՆԻ ԲՆՐԱՔ ԱՇԽԱՏՈՒԹ|ԵԱՄ|Բ Զ|ԽԱ|
ՉՍ, ԱՒՐՀՆԵՑԱՔ ՀԱՆԴԻՍՈՒԻ, Բ|ԱՐԵ|-
ԽԱՒՍ |Ա|Ռ Ք|ՐԻՍՏՈ|Ս ՅԱՀԵՂ ԱՒՈՒՐՆ։ ՈՐՔ
ԵՐԿ|ՐՊԱԳԷՔ[96]

Հաղրատ գյուղի բնակիչ Գեղամ Ղարգյանի պատմելով, հնում գյուղացիները երաշտ օրերին գնացել են գյուղից ցած՝ «Տերունական» կոչվող խաչքարի մոտ[97] զոհեր մատուցելու, որպեսզի անձրև գա և բերքն առատ լինի։

Այդպիսի ցասման խաչեր կան Զանգեզուրում, Վայոց ձորում, Սևանի ավազանում, Անիի, Թումանյանի և այլ շրջաններում։

Գ. Սրվանձտյանցը ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում ցասման խաչերի մասին. «Ցասման խաչ այն խաչքարերն են, որ քաղաքից դուրս ու մեծի մասին վանքերուն մօտ, գեղերուն մօտ, արտի, անդաստանի բոլոր գտնուած բլուրներուն վրա տնկուած են։ Այդ խաչքարերը՝ կամ առհասարակ գեղացիք միաբանելով, կամ իշխան մը միայն իւր բակով, ծախս կընեն, կը տնկեն, օծել կուտան մեծ հանդիսիւ այդ քարին վրա քանդակուած խաչը, և կը տնկեն ի պահպանութիւն իւրեանց գեղին»[98]։ Այնուհետև նա «ցասման խաչերի» մասին տալիս է հետևյալ բացատրությունը. «Թէ ինչո՞ւ համար բուսած է Ցասման խաչ. վասն զի երբ տարաժամ ձիւն կամ կարկուտ տեղայ, բերքերուն վնասէ. երբ մարախն ու թրթուրը բոյսն ու կանաչը զօսացնեն. երբ երաշտութիւն լինի. երբ ցաւ ու մահ պատահին մարդոց և անասնոց. երբ երկրաշարժ լինի. և ինչ վնաս որ պատահի երկրին, այն որ մարդոց բրածը չէ, Աստուծոյ ցասումն կը համարին. և այդ ցասման դէմն առնելու համար Քրիստոսի խաչին պատկերը կը բարձրացնեն այսպէս երկնից առջև, որ պատուհասիչ հրեշտակը պատկառի խաչէն և Աստուած հաշտուի»[99]։ Մ. Աբեղյանը «ցասման խաչերը» համարում է Աստղիկ-Դերկետո դիցուհու հեթանոսական շրջանից մեզ հասած հավատալիքների վերապրուկ՝ կապված ջրի պաշտամունքի հետ[100]։

* * *

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը հայկական խաչքարերի վերաբերյալ, հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

1. Խաչքարերը հայկական կոթողային հուշարձաններից ամենատարածվածն են եղել։ Նրանց կերտմանն ու զարգացմանը նպաստել են բնակչության տարբեր խավերը՝ շինականները, թագավորներն ու հոգևորականության ներկայացուցիչները։ Խաչքարերն ունեցել են առաջին հերթին կիրառական, անմիջական գործնական նշանակություն, ապա միայն՝ արվեստագիտական։

---

[93] Ս. Հայկունի. Բագրեւանդ ցրտաշունչ գաւառ, մասն Ա, Էջմիածին, 1904, էջ 130։

[94] Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 30—31։

[95] Կ. Վ. Մելիք-Փաշայան, նշվ. աշխ., էջ 30։

[96] Վերցրել ենք մեր հավաքածուից։

[97] Խաչքարը գտնվում է «Աղավնի տապան» հուշարձանի մոտ։

[98] Գ. Սրվանձտեանց. Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 117—118։

[99] Նույն տեղում, էջ 112։

[100] Մ. Աբեղյան, Վիշապներ..., էջ 93։

2. Խաչքարերը հայկական քանդակագործական արվեստի ամենաընդարձակ բնագավառն են եղել։ Հայ քանդակագործ վարպետների արվեստը հասել է պրոֆեսիոնալ քանդակագործության բարձր մակարդակի, ստեղծելով արվեստի իսկական գլուխգործոցներ, որ խոսում է խաչքարեր կերտող վարպետների ստեղծագործական երևակայության և հնարամտության մասին։

3. Հայկական խաչքարերն աչքի են ընկնում իրենց հորինվածքային բազմազանությամբ, որն արտահայտվում է ոչ միայն առանձին խաչքարերի ձևերի տարբերությամբ, այլև խմբական, որմնափակ, խաչքարերի բազմազան կոմպոզիցիոն ձևերով, նաև համադրությամբ այլ հուշարձանների հետ։ Խաչքարերը միջնադարյան հայ ճարտարապետական արվեստի մանր ձևերի ամենանշանակալից մի բնագավառն են։

4. Հայկական քանդակագործական արվեստը միջին դարերում շնորհիվ խաչքարերի՝ ներկայանում է բազմաթիվ հուշարձաններով ամենաստույգ թվագրությամբ, որը հնարավորություն է տալիս որոշել հայ քանդակագործական արվեստի տըվյալ բնագավառի զարգացման օրինաչափությունները և հաջորդական փուլերը, կազմել վերջիններիս ժամանակագրական տախտակը։

5. Խաչքարերի զարգացման օրինաչափությունների և ճարտարապետական հուշարձանների քանդակների համեմատական ուսումնասիրության շնորհիվ հնարավոր է դառնում որոշել և ճշտել նաև թվագրություն և արձանագրություն չունեցող բազմաթիվ այլ հուշարձանների ու շինությունների կառուցման ժամանակը։

6. Շնորհիվ այն բանի, որ խաչքարերի վրա ավելի շատ են պահպանվել քանդակագործ վարպետների անունները, հնարավոր է դառնում համեմատական եղանակով հայտնաբերել ոչ միայն խաչքարերի, այլև մեծածավալ ճարտարապետական հուշարձանների անհայտ ճարտարապետների ու քանդակագործների անունները։ Այդպիսի վարպետներից հարկ է նշել Կեչառիսի Կաթողիկե տաճարի ճարտարապետ Վեցիկին (XIII դ.), Նորավանքի Բուրթելաշեն հուշարձանի ճարտարապետ Մոմիկին (XIII—XIV դդ.), Մակարավանքի վարպետ Երիտասարդին (XIII դ.), Դեղձնուտի վանքի ճարտարապետ-քանդակագործներ Պողոսին ու Քաղաքին (XIII դ.) և մի շարք այլ վարպետների։

7. Եթե հայ մատենագրությունը պահպանել է գերազանցապես մեր ժողովրդի քաղաքական և ընդհանուր պատմությունը, ապա վիմագրությունը, ներառյալ նաև խաչքարերի արձանագրությունները, տալիս են հայ ժողովրդի միջնադարյան պատմության սոցիալ-տնտեսական կյանքի այնպիսի «մանրուքներ», առանց որոնց մենք աղոտ պատկերացում կունենայինք մեր ժողովրդի ներքին կյանքի բազմաթիվ կողմերի մասին։ Դրանք շատ կարևոր են հայ ժողովրդի պատմության որոշ մութ կողմերը բացահայտելու տեսակետից։ Այսպես, խաչքարերի արձանագրություններում հիշատակվում են հողատիրական, հարկային, կալվածատիրական բազմաթիվ տերմիններ, պաշտոնյաներ, որպիսիք են «սիգել» (Հաղբատ, XIII դ.), «հորահակ կոտաւն», «չահնահակ» (Կոշ, XIII դ.), «Պողի» (Քոբայր, XIII դ.), «սաւուղչարս», որ է «սոյուրղալ» (Արարատի շրջան, 1551 թ.), «սարգանս», որ է ջրի հարկ (Մարց, Դսեղ, Սանահին և այլն, XII—XIII դդ.), «Մեղուհաս» (Քանաքեռ, XIII դ.), Գագրաճ (Ալուչալու, XIII դ.) և այլն։ Բավական է նշել, որ ցարդ հայտնի «սարգանս» (ջրի հարկ) տերմինը հանդիպում է միայն մեկ ձեռագրում, այն էլ XIV դարից[101], իսկ ութը՝ XIII—XV դդ. վիմագրերում[102], ընդ որում, երկուսը կոթողների վրա[103]։ Մարցի խաչքարի արձանագրության մեջ «սարգանս»-ը հիշատակված է 1170 թ., հետևաբար այն «սարգանսի», մինչև այժմ հայագիտությանը հայտնի, հնագույն հիշատակությունն է։ Բացի այդ, Հայաստանի մի շարք գյուղերի շինության, վերաշինության և նրանց տեղագրության մասին մանրամասն իմանում ենք նաև խաչքարերի արձանագրություններից, ինչպես Մարտիրոս գյուղը՝ Վայոց ձորում (1283 թ.) և Արարատի շրջանի հին Ղարագոյուն գյուղը (1551 թ.)։ Կոթողների խաչքարերի արձանագրություններում հաղորդվում են մատենագրությանը անհայտ մի շարք վայրերի ու գյուղերի անուններ. օրինակ, Անձավ գյուղը՝ Գեղամա լեռներում (VII դար), Ակունքը՝ Վարդենիսի շրջանում, Դեղձուտը՝ Հյուսիսային Հայաստանում (1170 թ.), Իգատակ-Ագատակը՝ Թումանյանի շրջանում, Սակաաբերդը (XIII դ)՝ Արարատի շրջանում և մի շարք այլ բնակավայրեր ու գյուղեր Հայաստանի տարբեր շրջաններում։

---

[101] Ս. Բարխուդարյան, Դիտողություններ և նոր նյութեր հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերյալ, «Լրաբեր...», էջ 276—283։

[102] Նույն տեղում, էջ 282։

[103] Դսեղում սարգանս հարկի մասին հիշատակված է VII դ. հայտնի կոթողի XIII դ. արձանագրության մեջ։

8. Խիստ կարևոր են պատմական հուշարձանների կառուցման ու վերակառուցման վերաբերող երբեմն ստույգ թվակիր արձանագրությամբ խաչքարերը։ Այդպիսիք հանդիպում են X դարից սկսած։ Պատմական Կոթաքարի (այժմ՝ Մարտունու շրջան, Գետաշեն գյուղ) երկու փնդուկ-պանդոկների (X—XI դդ.), Գոմաշենի քարավանատան (XIII դ.), Սանահինի ու Նորավանքի հյուրատների շինության մանրամասն և եզակի տեղեկությունները իմանում ենք բացառապես հայկական խաչքարերի արձանագրություններից։

Միջնադարյան Հայաստանի X—XIV դդ. կամուրջների շինարարական եզակի և մանրամասն հիշատակարանները գտնվում են այդ առթիվ կանգնեցված հատուկ խաչքարերի վրա։ Խաչքարային վավերագրերում հանդիպում են եզակի տեղեկություններ երկրի տարբեր վայրերում կատարված ջրաշինարարական աշխատանքների՝ առուների, ջրհոր-ջրամբարների, աղբյուրների մասին (Սարիգամիշ, Վարսեր, Մղարդ, Կուրթան, Օձուն, Կամո և այլն)։

Խաչքարերը նաև վկաներն են երբեմնի շեն ու բարգավաճ վանքերի, բնակավայրերի, պալատների ու ամրոցների (Կուրի վանք, Հին Գետիկ, Ճամբարակ, Ակունք և այլն)։

9. Խաչքարերի արձանագրություններում հիշատակվում են հայ մշակույթի գործիչների, երբեմն էլ՝ քաղաքական ու հոգևոր երևելի մարդկանց անուններ, որոնց մեծամասնությունը նշված չէ մատենագրական աղբյուրներում։ Բյուզանդիայից X դարում հալածված և Հայաստան ապաստանած ու այստեղ էլ բազմաթիվ վանքեր հիմնած չորս տասնյակ հայ հոգևորական գործիչների անունները նշված են միայն Հաղպատավանքի 1246 թվակիր փոքրիկ մի խաչքարի վավերագրում։ Միջնադարյան հայ քանդակագործ ու քարգործ վարպետների մեզ հասած մի քանի հարյուր անունների մեծագույն մասը դարձյալ փորագրված է խաչքարերի վրա՝ XII—XIV դդ.։ Հյուսիսային Հայաստանում ամրացած Մամիկոնյան-Համազասպյան իշխանական տոհմի ցարդ անհայտ, իսկ այժմ մեզ հայտնի Վարհամ Համազասպյանի առայժմ հնագույն XIII դ. հիշատակագրությունը դրոշմված է Գանձի VII դ. կոթողի պատվանդանին։ Այս նույն Վարհամի անվան 1266 թվակիր մեկ այլ հիշատակարան ունենք Բարձրաքաշի ս. Գրիգոր վանքից[104]։

10. Հայկական խաչքարերի և նրանց արձանագրությունների շնորհիվ հայտնի են դառնում շատ հայ գործիչների գործունեության վայրերն ու նրանց հանգստարանները։ Օրինակ, Կյուրիկյան վաղամեռիկ Աբաս թագավորի կին՝ Վանենու (որն իր ամուսնու հիշատակին կառուցել է Սանահինի հուշակավոր կամուրջը 1190-ական թթ. և այդ առթիվ կանգնեցրել հատուկ խաչքար) հուշարձան-խաչքարի (Ծնող գյուղ) արձանագրությունից պարզվում է, որ նա մահացել է 1246 թ.։

11. Հայկական խաչքարերը արժեքավոր վավերագրեր են թշնամուց երկրի ազատագրման մասին։ Այդ առթիվ կանգնեցվել են հաղթանակի կոթողներ (Կոշ, Ամբերդ XII—XIII դդ.)։ Խաչքարերի արձանագրություններում հանդիպող գերեվարությունների, երկրաշարժերի հիշատակությունները նույնպես կարևոր են մեր երկրի պատմության համար։

12. Խաչքարերի վրա են երբեմն քանդակվել միջնադարի հայ անվանի գործիչների, զորավարների, ինչպես և քանդակագործ վարպետի հավաստի պատկերները։ Դրանցից հիշատակության արժանի են իշխաններ Գրիգոր Խաղբակյանի, Մամիկոն Համազասպյան-Մամիկոնյանի որսի տեսարանները՝ Գիլանլարի և Ջղին գյուղի XIII դ. խաչքարերի վրա, Աշկավանքի կառուցողի քանդակը՝ տաճարի ներսի XIII դ. որմնախաչի վրա, Մխիթար վարպետի ինքնաքանդակը Քանաքեռի XIII դ. խաչքարի վրա և այլն։ Հայ վարպետի մի ինքնաքանդակ էլ ունենք Մակարավանքում՝ գլխավոր տաճարի սեղանի ատաղձե քանդակների մեջ (1205 թ.)։ Խաչքարերի պատկերաքանդակները հետաքրքիր նյութ են տալիս միջնադարյան հայ տարազի, արդուզարդի, կենցաղի և ժամանակի, սպառազինության հետ կապված բազմաթիվ հարցեր լուսաբանելու համար։

13. Խաչքարերը և նրանց քանդակներն արտահայտում են ոչ միայն կրոնական հասկացություններ, այլև բնական երևույթների, հասարա-

---

[104] Վարհամ Համազասպյան-Մամիկոնյան իշխանը հիշատակված է նաև Բարձրաքաշ ս. Գրիգոր վանքում պահպանված ձիթհանի 1266 թվակիր քարի վրա «Ի թվ. ՉԺԵ (=1266) ի պարոնութե որդոց Մարզպանա, Վարհամա և Մամիկոնա. .....»։

կական կյանքի ու կենցաղի հետ կապված բազմազան պատկերացումներ և ըմբռնումներ, ուստի և հայ ժողովրդի հինավուրց հոգևոր մշակույթի կարևոր հուշարձաններ են։ Այդ իմաստով ուշագրավ են, օրինակ, խաչելության խաչքարերում պատկերված արևի և լուսնի քանդակները, խաչքարերի շուրջ հյուսված ժողովրդական ավանդական զրույցները, որոնք հարուստ նյութ են ընձեռում մեր անցյալի ժողովրդական բանահյուսության ուսումնասիրության համար։

14. Հայկական խաչքարերը խիստ արժեքավոր են նաև իրենց վիմագրական արվեստով, իրենց հնագրությամբ, ծածկագրությամբ, փակագրերով՝ հայերեն տառատեսակների զարգացման պատմությունն ուսումնասիրելու տեսակետից։ Այդ իմաստով բոլորովին պատահական չէ, որ պրոֆ. Կ. Գ. Ղաֆադարյանը իր «Հայկական գրի սկզբնական տեսակները» աշխատության մեջ օգտվել է նաև խաչքարերի հնագույն գրչության ընծայած արժեքավոր տվյալներից։

15. Ճանապարհների վրա, լեռնանցքներում և զանազան գյուղամիջյան հատվածներում կանգնեցված խաչքարերն օգնում են մասնագետներին որոշելու հին ճանապարհների ու քարավանների երթևեկության ուղղությունները, բնակավայրերի երբեմնի սահմանները, հետևաբար որոշ լույս են սփռում երկրի տնտեսական ու մշակութային կապերի վրա։

16. Հայկական խաչքարերի արձանագրությունները հարուստ նյութ են տալիս հայոց լեզվի պատմությունը, հայ բարբառները և ծածկագրերը ուսումնասիրողներին։

Այսպիսով, հայկական խաչքարերն ու նրանց արձանագրությունները եզակի կարևորության սկզբնաղբյուրներ են մեր ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի ուսումնասիրության համար։

МЕМОРИАЛЬНЫЕ ПАМЯТНИКИ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ. ХАЧКАРЫ IX—XIII вв.

(резюме)

Предметом предлагаемой работы являются мемориальные памятники средневековой Армении, в частности хачкары IX—XIII вв. В ней рассматривается ряд вопросов: исторические предпосылки возникновения и развития различных типов хачкаров (крест-камень), их художественные особенности и функциональное назначение; расшифровка, уточнение и восстановление эпиграфических надписей, высеченных на хачкарах; выявление неизвестных мастеров—создателей хачкаров. Обследованы, изучены на месте и сфотографированы многочисленные хачкары, разбросанные на территории Советской Армении, а также в прилегающих районах Азербайджанской ССР.

В работе использованы сведения армянских средневековых историков, эпиграфические надписи (значительная часть которых собрана на месте, расшифрована и публикуется впервые), фотоматериалы, хранящиеся в различных фондах, а также научная литература по данной теме. Большинство фотоснимков сделано автором.

При датировке древнейших рельефов и мемориальных памятников, существовавших в Армении до появления хачкаров, применен сравнительно-исторический метод.

Как показывают исследования, широко распространенное в литературе определение армянских хачкаров как «надгробных памятников" („pierre tombale" „tombestone" и т. п), неточно; вернее назвать их „крест-камнями", „croix de piérre", „cross stone" и т. п.

Хачкары являются самыми распространенными памятниками Армении. Они характерны для армянской средневековой культуры и являются наиболее типичными памятниками художественной резьбы по камню. Хачкары прошли большой путь эволюции, приобрели весьма разнообразные формы и художественную отделку.

Стелы, иногда напоминающие по форме хачкары, встречаются и в некоторых странах европейского континента, однако они не имели широкого распространения, не отличались богатством форм, и выполняемые ими функции были весьма ограничены.

В предисловии работы говорится о степени изученности хачкаров и других мемориальных памятников Армении, анализируется имеющаяся литература, показывается место и значение хачкаров в истории материальной культуры Армении и подчеркивается важность их изучения.

В работах Н. Марра, И. Стржиговского, Т. Тораманяна, Г. Левоняна и других исследователей рассмотрены четырехгранные мемориальные памятники IV—VII вв. Более детально они изучены Г. Овсепяном и Б. Аракеляном (фото 8—12, 22 и др.).

Однако этого нельзя сказать в отношении хачкаров. До 50-х годов нашего столетия не было специального исследования, посвященного этой обширной области армянской средневековой культуры. В общих чертах армянские хачкары рассмотрены в трудах ряда видных исследователей (Н. Марр, И. Орбели, Т. Тораманян, Г. Овсепян, Г. Левонян, Ю. Балтрушайтис, Н. Токарский, Б. Аракелян, К. Кафадарян, С. Мнацаканян, А. Л. Якобсон и др.), однако их систематическое изучение началось лишь в 60-х годах.

В первой главе вкратце рассматриваются встречающиеся в Армении древние мемориальные памятники: менгиры, вишапы, урартские и эллинистические стелы, арташесидские межевые камни, особенно, четырехгранные столбообразные памятники и памятники в виде крестов, которые как по конструктивным формам, так и по скульптурным мотивам предшествовали хачкарам и способствовали их появлению.

С принятием христианства в Армении эти памятники языческого периода нередко подвергались христианизации—на них появлялись кресты (Шамирам, Сарнахпюр, Ajдахаюрт, Агавнадзор, Западная Армения и др.). В исследовании показывается, что два известных хачкара из Агавнадзора (Ехегнадзорский район) в далеком прошлом (II тыс. до н. э.) представляли собой скульптурные изображения так называемых «вишапов».

В работе рассматриваются раннефеодальные мемориальные памятники, вопросы датировки и функционального значения раннехристианских четырехгранных стел и трапециевидных памятников. Это четырехгранные стелы, достигающие высоты от 1 до 5 м. Они нередко состоят из двух частей: кубообразного постамента и четырехгранного столба, украшенного рельефными фигурами и растительным орнаментом (фото 17—19). Подобные стелы в Армении были распространены в IV—VII вв. На их гранях, помимо христианских сюжетов, встречаются и языческие (Гарнаовит, Дарбанд и др., фото 8, 9). Следует отметить, что в раннефеодальной Армении были распространены также и пилонообразные стелы, стоящие на ступенчатом стилобате. Описания подобных стел имеются у историков Агафангела (V в.) и Гевонда (VIII в.). Можно согласиться с исследователями, датирующими распространение этих памятников IV—VII вв., однако нельзя признать верным, что эти стелы являлись преимущественно надгробными памятниками, как их характеризовал ряд исследователей.

Исторические сведения и памятники материальной культуры, обнаруженные за последние годы в Гегамских горах и рассмотренные в данной главе, свидетельствуют о разнообразном функциональном назначении этих памятников, а также о более широком ареале их распространения (фото 26—28). Армянские историки, описывающие уничтожение арабами этих стел, сообщают весьма ценные сведения о причинах их возведения. Так, например, летописец VIII в. Гевонд пишет, что халиф Езид «приказал разбить и сбросить стелы, имеющие изображения Христа и его учеников». Эти памятники стояли на разных местах и на перекрестках дорог, как символы защиты и покровительства. Исследователи правильно определили, что это свидетельство историка относится к колоннообразным и четырехгранным стелам с рельефными изображениями, однако они не обратили внимания на последующие сообщения Гевонда о функциональном назначении памятника. Эти сведения историка подтвердились двумя колонннообразными памятниками, обнаруженными нами в Гегамских горах. По счастливой случайности оба они имеют строительную и целевую надпись. Одна из них датирована временем, относящимся к эпохе императора Константина (VII в.).

Эта надпись с русским переводом, сделанным Н. Марром, была издана М. Ростовцевым в 1911 г. и по недоразумению датирована X в. Такой датировке противоречит ряд обстоятельств. Во-первых, датировка надписи временем правителей в X в. не практиковалась. Во-вторых, в X в. в Армении правила династия Багратидов и естественнее было бы датировать ее временем правления царей этой династии. В-третьих, палеографические особенности надписи характерны только для VII в. Из всего этого следует, что упомянутый в надписи Констант, видимо, не кто иной, как Констант II (641—668). Это тем более вероятно, что в числе князей, встречавших его в Армении, были и строители памятника князья Гитуни. Наконец, подобные памятники-стелы не встречались позже VII в.

Историк V века Агафангел подробно описал раннехристианские армянские стелы и место их нахождения. Он отметил даже их функциональное назначение и точную хронологию. Таким образом, исторические и эпиграфические данные позволяют выяснить функциональное назначение раннехристианских стел Армении. Имеется основание утверждать, что орнаментированные мемориальные памятники колоннообразной формы имели весьма разнообразное функциональное назначение и большой ареал распространения.

Надгробные плиты Армении этого периода преимущественно двускатные и плоские. В большом количестве они встречаются в Двине, Талине, Джрвеже и других местах.

Для Армении IV—VII вв. характерны крестообразные каменные памятники со свободными крыльями, известные под названием «Крнавор хач» (Двин, Одзун, Гарни, Ованаванк, фото 36—42). Они относятся к раннехристианскому времени и бытовали вплоть до VII в.

Каменные памятники в виде креста в VII в. были известны в Ирландии, Шотландии и других странах Европы. Наиболее поздние их реплики изредка встречаются в XVI—XVII вв.

Начиная с VIII в., в Армении наиболее распространенным видом мемориального памятника становится хачкар (фото 45—65 и др.).

Следует отметить, что появление новых видов мемориальных памятников вызывалось не только их развитием (основные орнаментальные мотивы хачкаров встречаются на стенах храмов, на четырехгранных стелах IV—VII вв. н. э.), но и диктовалось политическими и экономическими условиями эпохи VII—IX вв. Немалую роль в этом деле сыграло и то обстоятельство, что в Армении большей популярностью пользовался символ христианской веры—крест, в то время как в Византии и Грузии большое значение придавалось иконам и картинам по сюжетам из Ветхого и Нового заветов (как об этом свидетельствуют Анания Санахнеци и Мхитар Гош).

Появившийся в VII в. хачкар полностью соответствовал требованиям времени. Хачкар наиболее удобен для изображения на нем соразмерного креста и других своеобразных мотивов, а также доступен для различных слоев населения. Он имел ряд преимуществ: обрабатывалась лишь лицевая сторона камня, хачкар был прочнее, чем памятники в виде крылатых крестов. На лицевой и оборотной сторонах хачкаров высекались обширные надписи. Хачкар можно было воздвигнуть отдельно, как самостоятельный памятник или включить в кладку стен. Благодаря этому и разнообразию своего функционального назначения, в течение более 1000 лет, хачкар оставался самым распространенным мемориальным памятником средневековой Армении. В настоящее время хачкаров насчитывается десятки тысяч.

В формировании композиционных особенностей хачкара исходное значение имели предшествовавшие типы мемориальных памятников— четырехгранные стелы с богатыми орнаментальными мотивами, в частности—каменные кресты со свободными крыльями, или крылатые хачкары.

Несмотря на то, что наиболее древние из датированных хачкаров относятся к IX в., их возникновение, несомненно, связано с более ранним временем. Если учесть, что с VIII в. до нас дошла лишь одна датированная надпись (на пилоне кафедрального собора в В. Талине), то отсутствие надписей с датой на ранних, скромно оформленных, хачкарах—явление вполне естественное.

Хачкары в Армении появились, очевидно, в начале VIII в., в тот период, когда арабы препятствовали сооружению памятников с изображениями людей и святых. Ранние, не имеющие надписей хачкары отличаются от хачкаров, датированных IX—X вв. (Талин, Парисос, Гнишик, Аруч, Дилижан и др.), архаизмом форм и стилистическими особенностями. Условия, созданные арабами, фактически ускорили естественный ход становления и оформления характерных особенностей хачкаров*.

Древнейшие хачкары представляют собой в основном прямоугольные, с дугообразным верхом каменные плиты (с пропорциями 1 : 2), которые своей нижней заостренной частью зарывались в землю или вдевались в кубообразный каменный постамент.

В данной главе особое внимание уделено описанию хачкаров IX—X вв., датировке высеченных надписей как важных первоисточников и стилистическим особенностям их орнаментов (фото 49—75).

Известный нам до сих пор древнейший из ясно датированных хачкаров, воздвигнутый багратидской царицей Катранидэ в 879 г., находится в Гарни (имеется сведение

---

* До нас дошли и другие каменные памятники VII века, напоминающие армянские хачкары (фото 43).



IX (179). Կարմրաշեն. (Վայոց ձոր) որմնափակ խաչքար Պողոս, Պետրոս առաքյալների դիմաքանդակներով, 1291 թ.

[illegible]

о наличии в Нагорном Карабахе частей двух хачкаров, датированных 853 и 866 гг).

Это монументальный крест, крылья которого кончаются двумя шаровидными фигурами, высеченный на базальтовом квадре, взятом из стены крепости (фото 52).

В Гарни имеется и не датированный хачкар, который также можно отнести к IX в., исходя из высеченных на нем двух аналогичных крестов.

Другой величественный хачкар (из М. Мазры) с надписью, датированной 881 г., был воздвигнут князем Сюника и Агванка (Кавказской Албании) Григорием Адрнерсеханом. Строительная надпись этого памятника издавалась неоднократно, но с ошибками, искажающими, в частности, имя его ктитора. Примечательно, что в свое время на хачкаре был установлен другой маленький хачкар или крест, что видно по имеющемуся на его вершине небольшому углублению. Подобное явление встречается в Н. Талине, где в 975 г. в связи с восстановлением храмов св. Григория и св. Саркиса был воздвигнут хачкар с надписью, на вершине которого были установлены два креста. Такие же кресты имелись на двух верхних углах настенного хачкара XIII в. из Авуц-Тара.

Среди хачкаров IX в. заслуживает особого внимания Кечутский (в Вайоцдзоре). Этот памятник снабжен надписью и датирован 886 г. До последнего времени хачкар считался утерянным. Нам удалось обнаружить лишь нижнюю его половину и уточнить чтение имеющейся на нем надписи. В свое время этот хачкар (высотой около 6 м) возвышался на огромной скале. Он богато украшен фигурами голубей, уток, рыб и в этом отношении является уникальным памятником. Согласно надписи, хачкар был сооружен неким Давидом «для спасения своей души». Нам удалось установить имя мастера-резчика этого замечательного хачкара. Оно сохранилось под южным крылом креста: «Святой [Г]орг сделал я, Овсеп, служитель Х[рист]а». Овсеп является первым известным нам мастером-резчиком хачкара.

Дальнейшее развитие «крест-камней» можно проследить по талинскому (895), татевскому (906), иджеванскому (937), дзоратетскому (984), мугнийскому (986), карчахпюрскому (991) хачкарам и хачкару монаха Ерицака (991).

Из рассмотренных в первой главе работы 30 хачкаров IX—X вв., на которых высечены надписи, пять сооружены в знак ходатайства о спасении души; пять—с просьбой поминать в молитвах, а два—с просьбой о божественной помощи; семь надписей гласят просто о воздвижении хачкара, пять—о том, что они поставлены по поводу строительных работ, а один—в связи с осуществлением ирригационных работ. Один хачкар является мемориалом полководца Вардана Мамиконяна, два поставлены у надгробной плиты как мемориальный памятник над погребением, а на двух других имеется только дата.

Путем сравнительного исследования и художественно-стилистического анализа орнаментальных мотивов около двух десятков датированных древнейших хачкаров дается их классификация и закономерности развития. С их помощью определяется хронология такого же количества хачкаров, не имеющих надписи.

Вторая глава—«Развитие хачкаров XI—XIII вв.»—посвящена анализу периода наивысшего художественного и композиционного развития хачкаров, их классификации и изменениям основных мотивов орнаментации, а также анализу идеологического содержания высеченных на них скульптурных изображений. В конце главы дается подробное описание и художественная характеристика наиболее известных хачкаров XI—XIII вв.

